




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

P504282

ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

[ՓԵՏՐՎԱՐ 14, 2025]

Բովանդակություն

Հապավումներ	4
Սահմանումներ	5
1. Ներածություն	8
1.1 Ծրագրի նկարագրությունը	8
1.2 ՏՇ պատրաստման հիմնավորումը	14
1.3 Հիմնական սկզբունքներ	18
2. Ինստիտուցիոնալ եւ իրավական շրջանակ	21
2.1 Ինստիտուցիոնալ կարգավորումներ	21
2.2 Իրավական շրջանակ	24
2.3 Ազգային օրենսդրության եւ ՀԲ-ի ԲՄՇ-ի համեմատությունը	28
3. Տարաբնակեցման պլանի պատրաստում	35
4. Իրավասություն եւ իրավունքներ	39
4.1 Իրավասություն	39
4.2 Կասցման օր	40
4.3 Իրավունքներ	40
4.4 Տարաբնակեցման պլանի իրականացումը	49
5. Խորհրդատվության եւ հանրային քննարկման կարգավորումներ	52
6. Մշտադիտարկում եւ գնահատում	54
7. Բողոքների մեխանիզմ	56
8. Արժեք եւ բյուջե	60
Հավելված Ա. Բողոքների լուծման հանձնաժողով. առաջադրանքներ եւ կազմ	61
Հավելված Բ. Մարդահամարի տեղեկատվության ստուգաթերթ	62
Հավելված Գ. Մարդահամարի տվյալների ցանկը	63
Հավելված Դ. Կորուստների գույքագրման տվյալների ցանկը	64
Հավելված Ե. Տվյալներ ելակետային հետազոտության համար	66
Հավելված Զ. Ազդակիր ակտիվների գնահատման մեթոդաբանություն	67

Հապավումներ

ԱԻԱԲ	Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ
ԱՄԳ	Արտաքին մշտադիտարկման գործակալություն
ԱՊ	Առաջադրանքի պայմաններ
ԲՄ	Բողոքների մեխանիզմ
ԲՄՇ	Բնապահպանական և սոցիալական շրջանակ
ԲՄՍ	Բնապահպանական և սոցիալական ստանդարտ
ԶԿ	Զբոսաշրջության կոմիտե
ԶՄԵԾ	Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԾԱԵԱ	Ծրագրի ազդեցությանը ենթակա անձ
ԾՍՏՏ	Ծրագրի ազդակիր տնային տնտեսություն
ԾԹ	Ծրագրի թիմ
ԿԲԾ	Կենսամիջոցների բարելավման ծրագիր
ԿԶԾ	Կլաստերի զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՆԽ	Նախագծման խորհրդատու
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՏԱ	Տեխնիկական աջակցություն
ՏՏԵԶԾ	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր
ՏՀՀ	Տեխնիկատնտեսական հիմնավորման հետազոտություն
ՏՇ	Տարաբնակեցման շրջանակ
ՏՊ	Տարաբնակեցման պլան
ՈԻԿԿ	Ուղղությունների կառավարման կազմակերպություն
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՓՀԲ	Փխրունություն, հակամարտություն և բռնություն

Սահմանումներ

- **Գույքագրումը** ներառում է խորհրդատվական, անկողմնակալ և թափանցիկ գործընթացի արդյունքում ստացված մանրամասն հաշվետվություն՝ ազդեցության ենթակա անձանց սեականության իրավունքների կամ հաստատված իրավունքների ողջ շրջանակի վերաբերյալ, ինչպիսիք են սովորույթի կամ պրակտիկայի վրա հիմնված երկրորդական իրավունքները, օրինակ մուտքի իրավունքը կամ օգտագործումը կենսապահովման նպատակով, ընդհանուր իրավունքները և այլն:
- **Կասեցման օր** փոխհատուցման կամ այլ օգնության իրավունքը որոշելու համար: Կասեցման օրվան վերաբերող տեղեկատվությունը պատշաճ փաստագրված կլինի և կանոնավոր պարբերականությամբ կտարածվի Ծրագրի ողջ տարածքում հայերեն լեզվով՝ գրավոր և (անհրաժեշտության դեպքում) բանավոր: ԱՅՆ կներառի նախագուշացում այն մասին, որ այն անձինք, ովքեր հաստատվում են Ծրագրի տարածքում կասեցման օրվանից հետո, կարող են տարածքից հեռացվել:
- **Անապահով կամ խոցելի** տերմինը վերաբերում է նրանց, ովքեր Ծրագրի ընթացքում առավել հավանական է որ ենթարկվեն բացասական ազդեցությունների, և/կամ ավելի սահմանափակ լինեն իրենց կարողություններով, որպեսզի օգուտ քաղեն Ծրագրից: Նման անհատը/խումբը նույնպես ավելի հավանական է, որ կբացառվի/ունակ չի լինի լիարժեք մասնակցել հիմնական խորհրդատվական հանդիպումներին: Մասնավորապես հաշվի կառնվեն հետևյալ նկատառումները՝ տարիքը, ներառյալ տարեցներն ու անչափահասներն, ինչպես նաև այն իրավիճակները, երբ նրանք կարող են առանձնանալ իրենց ընտանիքից, համայնքից կամ այլ անհատներից, որոնցից կախված են:
- **Իրավասություն** - Տարհանված անձանց սահմանում և չափորոշիչներ՝ փոխհատուցման և տարաբնակեցման այլ աջակցության համար նրանց իրավասությունը որոշելու համար, ներառյալ համապատասխան կասեցման օրը:
- **Վարկադիր վտարումը** սահմանվում է որպես անհատների, ընտանիքների և/կամ համայնքների կամքին հակառակ մշտական կամ ժամանակավոր հեռացում այն տներից և/կամ հողից, որը նրանք զբաղեցնում են՝ առանց իրավական և այլ պաշտպանության համապատասխան ձևերի տրամադրման և հասանելիության ապահովման, ներառյալ ԲՄՄ5-ի բոլոր կիրառելի ընթացակարգերն ու սկզբունքները: Վարկառուի կողմից նշանակալի տիրույթի, պարտադիր ձեռքբերման կամ նմանատիպ լիազորությունների իրականացումը չի համարվի հարկադիր վտարում, եթե այն համապատասխանում է ազգային օրենսդրության պահանջներին, ԲՄՄ5-ի դրույթներին համահունչ և իրականացվում է պատշաճ ընթացակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան (ներառյալ նախապես համապատասխան ծանուցման տրամադրումը, բողոքներ և դիմումներ ներկայացնելու հնարավորությունները, ինչպես նաև անհարկի, բռնի կամ ավելորդ ուժի կիրառումից խուսափելը):
- **Բողոքների մեխանիզմը** գործընթաց է, կամ ընթացակարգ՝ Ծրագրի հետ կապված ազդակիր կողմերի մտահոգությունները ստանալու և նպաստելու և բողոքները, մասնավորապես, Վարկառուի բնապահպանական և սոցիալական հաշվետվության հետ կապված, լուծելու համար: Բողոքների մեխանիզմը համահունչ պետք է լինի Ծրագրի ռիսկերին և ազդեցություններին:

- **Հարկադիր տարաբնակեցում** - «Հարկադիր տարաբնակեցում» տերմինը վերաբերում է ազդեցություններին, երբ ազդակիր անձինք կամ համայնքներն իրավունք չունեն հրաժարվել հողի օտարումից կամ հողօգտագործման սահմանափակումներից, որոնք հանգեցնում են տարհանման:
- **Հողի օտարում** - Ծրագրի հետ կապված հողի օտարումը կամ հողօգտագործման սահմանափակումները կարող են առաջացնել ֆիզիկական տարհանում (տեղափոխություն, բնակելի հողի կամ կացարանի կորուստ), տնտեսական տարհանում (հողի, ռեսուրսներ կամ ռեսուրսների հասանելիության կորստի, ներառյալ այն դեպքերը, որոնք հանգեցնում են կամ եկամտի աղբյուրների կորստի կամ ապրուստի այլ միջոցների կորստի կամ երկուսը միասին: «Հարկադիր տարաբնակեցում» տերմինը վերաբերում է այս երկուսին միասին: Տարաբնակեցումը համարվում է հարկադիր, երբ ազդակիր անձինք կամ համայնքներն իրավունք չունեն հրաժարվել հողի օտարումից կամ հողօգտագործման սահմանափակումներից, որոնք հանգեցնում են տարհանման:
- **Հողը** ներառում է հողի վրա աճող կամ մշտապես հողի վրա գտնվող ցանկացած բան, ինչպիսիք են մշակաբույսերը, շենքերը և այլ բարելավումներ, ինչպես նաև առկա ջրային մարմինները:
- **Կենսամիջոցը** վերաբերում է այն միջոցների ամբողջական շրջանակին, որոնք անհատները, ընտանիքները և համայնքները օգտագործում են ապրուստ վաստակելու համար, ինչպիսիք են աշխատավարձի վրա հիմնված եկամուտը, գյուղատնտեսությունը, ձկնորսությունը, կեր որոնելը, բնական ռեսուրսների վրա հիմնված այլ կենսամիջոցները, մանր առևտուրը և փոխանակումը:
- **Ֆիզիկական տարհանումը** վերաբնակեցումն է, բնակելի տարածքի կորուստը կամ ապաստանի կորուստը:
- **Տնտեսական տարհանումը** վերաբերում է կենսամիջոցների կամ եկամուտների ստեղծման հնարավորության վրա ազդելուն, ինչը հանգեցնում է եկամտի աղբյուրների կամ ապրուստի այլ միջոցների կորստի:
- **Փոխարինման արժեքը** սահմանվում է որպես գնահատման մեթոդ, որը տալիս է ակտիվները փոխարինելու համար բավարար փոխհատուցում, գումարած ակտիվների փոխարինման հետ կապված անհրաժեշտ գործարքի ծախսերը: Շուկայի առկայության դեպքում փոխարինման արժեքը շուկայական արժեքն է, որը հաստատվել է անշարժ գույքի անկախ և իրավասու գնահատման միջոցով, գումարած գործարքի ծախսերը: Եթե շուկա գոյություն չունի, փոխարինման արժեքը կարող է որոշվել այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են հողի կամ արտադրական ակտիվների ելքային արժեքի հաշվարկը, կամ կառույցների կամ այլ հիմնական միջոցների կառուցման համար փոխարինող նյութի և աշխատուժի չամորտիզացված արժեքը, գումարած գործարքի ծախսերը: Բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական տարհանումը հանգեցնում է ապաստանի կորստի, փոխարինման արժեքը պետք է առնվազն բավարար լինի բնակարանների գնման կամ կառուցման համար, որոնք համապատասխանում են տվյալ համայնքի որակի և անվտանգության ընդունելի նվազագույն չափանիշներին: Փոխարինման արժեքի որոշման գնահատման մեթոդը պետք է փաստաթղթավորվի և ներառվի տարաբնակեցման պլանավորման համապատասխան փաստաթղթերում: Գործարքի ծախսերը ներառում են վարչական վճարներ, գրանցման կամ սեփականության իրավունքի վճարներ, խելամիտ

տեղափոխման ծախսեր և ազդակիր անձանց վրա դրված ցանկացած նմանատիպ ծախս: Փոխարինման արժեքով փոխհատուցում ապահովելու համար, հնարավոր է պլանավորված փոխհատուցման դրույքաչափերի վերանայման կարիէ առաջանա նախագծային տարածքներում, որտեղ գնաճը բարձր է կամ փոխհատուցման դրույքաչափերի հաշվարկի և փոխհատուցման տրամադրման միջև ընկած ժամանակահատվածը մեծ է:

- **Հողօգտագործման սահմանափակումները** վերաբերում են իրավիճակներին, որոնք պատճառ են դառնում, որ համայնքը կամ համայնքի խմբերը կորցնում են ռեսուրսների օգտագործման հասանելիությունը, որի հանդեպ ունեն ավանդական կամ օգտագործման ճանաչելի իրավունքներ: Սա վերաբերում է այն իրավիճակներին, երբ ստեղծված պահպանվող տարածքները, անտառները, կենսաբազմազանության տարածքները կամ բուֆերային գոտիները Ծրագրի արդյունքում հանգեցնում են կապված գյուղատնտեսական, բնակելի, առևտրային կամ այլ հողերի օգտագործման սահմանափակումների կամ արգելքների, որոնք ուղղակիորեն ներդրվում և ուժի մեջ են մտնում որպես նախագծի մաս: Դրանք կարող են ներառել օրենքով սահմանված պարկերի և պահպանվող տարածքների մուտքի սահմանափակումներ, ընդհանուր սեփականության այլ ռեսուրսների հասանելիության սահմանափակումներ, կոմունալ ծառայությունների կամ անվտանգության գոտիներում հողօգտագործման սահմանափակումների:
- **Տարաբնակեցման պլան (ՏՊ)** – պլանավորման փաստաթուղթ, որը նկարագրում է, թե ինչ է արվելու հարկադիր տարաբնակեցման հետ կապված ուղղակի սոցիալական և տնտեսական ազդեցությունները լուծելու համար՝ համաձայն սույն ՏՀ-ի:
- **Տարաբնակեցման շրջանակ (ՏՇ)** - Տարաբնակեցման շրջանակի նպատակն է պարզաբանել վերաբնակեցման սկզբունքները, կազմակերպչական միջոցառումները և նախագծման չափանիշները, որոնք պետք է կիրառվեն ծրագրի իրականացման ընթացքում նախապատրաստվող ենթածրագրերի կամ Ծրագրի բաղադրիչների նկատմամբ (տես ԲՄՄ5, պար. 25): Ենթածրագիրը կամ առանձին Ծրագրի բաղադրիչները սահմանվելուց հետո, երբ անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի դառնա, նման շրջանակը կընդլայնվի և կվերաձևակերպվի պոտենցիալ ռիսկերին և ազդեցություններին համաչափ հատուկ պլանի մեջ: Ծրագրի գործողությունները, որոնք կառաջացնեն ֆիզիկական և/կամ տնտեսական տարհանում, չեն սկսվի այնքան ժամանակ, քանի դեռ նման հատուկ պլանները չեն վերջնականացվել և հաստատվել Բանկի կողմից:
- **Մարդահամարի հետազոտություն** – Տնային տնտեսությունների մակարդակով մարդահամարի արդյունքները, որոնք բացահայտում և հաշվառում են ազդեցության ենթակա անձանց, և, ազդակիր անձանց ներգրավմամբ հետազոտում են հողերը, կառույցները և այլ հիմնական միջոցները, որոնք ենթակա են ծրագրի ազդեցությանը:
- **Շահակիրներ** – ներառում են համայնքները, խմբերը կամ անհատների, որոնք ազդեցություն են կրում ծրագրից և այլ շահագրգիռ կողմեր:

1. Ներածություն

1. Սույն Տարաբնակեցման շրջանակային (ՏՇ) փաստաթղթի նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան մարմինների և Համաշխարհային բանկի (ՀԲ) միջև համաձայնության պայմաններ սահմանել այն սկզբունքների և ընթացակարգերի վերաբերյալ, որոնք պետք է կիրառվեն տարաբնակեցման պլանի (ՏՊ) կամ տարաբնակեցման պլանների¹ հետագա պատրաստման ժամանակ: Նախքան Ծրագրի ղեկավարության կողմից մրցույթ հայտարարելը ցանկացած պայմանագրի համար, որի շրջանակներում ակնկալվում է ֆիզիկական կամ տնտեսական տարհանում, հողի ձեռքբերման կամ բնական ռեսուրսների հասանելիության կամ օգտագործման սահմանափակումներ, պահանջվում է ՏՊ-ի (կամ ՏՊ-ների) հաստատում ՀԲ-ի կողմից:
2. ՏՇ-ի նպատակն է խուսափել կամ նվազագույնի հասցնել ֆիզիկական կամ տնտեսական տեղաշարժի հետ կապված ցանկացած անբարենպաստ ազդեցություն և ապահովել միջոցառումներ՝ մեղմելու ցանկացած հնարավոր անբարենպաստ ազդեցություն: Հայաստանի կառավարությունը սույնով համաձայնում է կիրառել ՀԲ-ի Բնապահպանական և սոցիալական շրջանակի (ԲՄՇ) Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 5-ում (ԲՄՄ5) ներառված սկզբունքներն, ընթացակարգերը և չափորոշիչները, եթե ծրագրի օգտագործման համար որևէ տեղամասի ձեռքբերումը կառաջացնի տնտեսական² կամ ֆիզիկական տարհանում³:
3. Սույն ՏՇ-ն կկիրառի Հայաստանի գործող իրավական և քաղաքականության շրջանակը՝ ներառելով լրացուցիչ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ԲՄՄ5-ի սկզբունքներին և չափանիշներին համապատասխանության հասնելու համար:

1.1 Ծրագրի նկարագրությունը

4. Ծրագիրը կաջակցի մարզային զարգացմանն ուղղված կայուն, ներառական և ճկուն միջամտություններին յոթ առաջնահերթ կլաստերներում (i) Արենի; (ii) Գյումրի; (iii) Գորիս; (iv) Դիլիջան; (v) Դվին; (vi) Ջերմուկ և (vii) Եղեգիս: Ծրագրի հիմնական միջամտությունները կվերացնեն կլաստերներից յուրաքանչյուրում կենսունակության և համաչափ մարզային զարգացման հիմնական սահմանափակումները, ներառյալ՝ հիմնական ենթակառուցվածքների և ծառայությունների պակասի լրացումը և զբոսաշրջության հետ կապված առաջարկների դիվերսիֆիկացումը/բազմազանեցումը:
5. ԶՄԵԾ-ը բաղկացած է չորս ինտեգրված բաղադրիչներից, որոնք միասին կնպաստեն կլիմայական առումով դիմացկուն ենթակառուցվածքների հասանելիության բարելավմանն՝ ի շահ տեղական համայնքների և այցելուների, բարձրացնելով ընտրված վայրերի գրավչությունը, հնարավորություն տալով ստեղծել աշխատատեղեր և ավելացնելով տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության հատվածի ներդրումը:
6. **Բաղադրիչ 1 – «Ինտեգրված եւ կայուն կլաստերի զարգացման խթանումը»** կֆինանսավորի տեխնիկական աջակցությունը (ՏԱ), խորհրդատվական ծառայությունները, ապրանքներն ու սարքավորումն ի թիվս այլոց, և առնչվող վերլուծական և տեխնիկական

¹ Ապփովել ու, որ համապատասխան մարմինը սեղյ սկ է իր պրոտակրոյթ ու նների մասին, խորհուրդ է սրվում, որ ՏՇ-ն ներկայ սցվ ու ղեկցող գրույթ ամբ՝ ստորագրված իրականացնող գործակալ ույթ սն (կամ նմանաթայանապատասխան մարմնի) գլ խալոր գործաղիր սնօրենի կողմից:

² Ինչ սխս նկարագրված է ԲՄՄ, 33–36 պրբերույթ ու նու մ

³ Ինչ սխս նկարագրված է ԲՄՄ, 33–36 պրբերույթ ու նու մ

ուսումնասիրությունների աշխատանքները՝ կլաստերի զարգացման ծրագրերի (ԿԶԾ) մշակման և իրականացման համար: ԿԶԾ-երը կօգնեն ղեկավարել ինտեգրված և կայուն զարգացումը և կներառեն կլաստերի ընդհանուր տեսլականը 10-ամյա պլանավորման հորիզոնում, ներառյալ զարգացման մանրամասն պլանները, որոնք ներառում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր՝ կապիտալացնելու յուրաքանչյուր կլաստերի զբոսաշրջության զարգացման ներուժը և աշխատանքի ստեղծումը: ԿԶԾ-երը կհաստատվեն Ծրագրի կառավարման կոմիտեի (ՄԿԿ)4 կողմից և կժառայեն որպես ուղեցույց՝ համապատասխան կլաստերների ներքո միջամտությունների առաջնահերթության համար, ներառյալ դրանց ընդհանուր կառավարումը, ինչպես նաև շահագործման ու պահպանման դրույթները: Այս բաղադրիչով նախատեսվում են տեխնիկական աջակցության հետևյալ հիմնական գործողությունները, որոնք ներառում են.

(ա) Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Ջերմուկի և Եղեգիսի ԿԶԾ-երի մշակումը և վերջնականացումը, որը կհաստատվի ՄԿԿ-ի կողմից⁵: ԿԶԾ-երը նաև հաշվի կառնեն կանաչ, ճկուն և ներառական զարգացման մոտեցումները, քաղաքային և տարածքային պլանավորումը և համապատասխանությունը գործող մարզային և համայնքային զարգացման ծրագրերին: Պահանջարկի գնահատումը և տնտեսական վերլուծությունը կիրականացվեն որպես ԿԶԾ մշակման մաս, և կլաստերների զարգացման առաջնահերթությունները կընտրվեն տեղական համայնքների, բիզնեսի և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ՝ մասնակցային մոտեցումների միջոցով: ԿԶԾ-երը կընդգրկեն կլիմայական առումով զգայուն գործողությունների պլաններ, որոնց միջոցով կլաստերների համար կընտրվեն ցածր ածխածնի առաջացմամբ և հարմարվողական ներդրումների տարբերակներ⁶: ԿԶԾ-երը նաև նպատակ կունենան առավելագույնի հասցնել կլաստերների շրջանակում զբոսաշրջության և առնչվող ոլորտներում զբաղվածության ներուժը: ԿԶԾ-երի առաջնահերթ միջամտությունները կիրականացվեն Բաղադրիչ 2-ի շրջանակներում:

(բ) Կլիմային և աղետներին դիմակայուն գոտիավորման և գլխավոր պլանների, ներդրումների պլանավորման ուսումնասիրությունների և այլ վերլուծական աշխատանքների պատրաստում (օրինակ՝ տեխնիկատնտեսական հիմնավորումները), որոնք անհրաժեշտ են ԿԶԾ-երի պատրաստման, մշակման և վերջնական տեսքի բերելու համար:

(գ) Հանրային իրազեկման արշավներ և առնչվող քաղաքացիների ներգրավման գործողություններ ԿԶԾ-ների պատրաստման ընթացքում և դրանից հետո՝ խթանելու տեղական սեփականության իրավունքը, հազեցնելու ապագա քաղաքային և տարածքային պլանավորումը տեղեկություններով, աջակցելու որոշումների կայացմանը:

(դ) Ընտրված զբոսաշրջային ակտիվների և մշակութային ժառանգության վայրերի համար տեղամասի կառավարման և/կամ գործառնական և սպասարկման պլանների մշակում՝ աջակցելու բնական, մշակութային և սոցիալական ակտիվների մշտադիտարկմանը և

⁴ ՄԿԿ-ն նախագահու մ է վոլիսքս ավսր, ՄԿԿ նկարագրու թ յու նր ներկայ սցված է «Բաժին III. Ծրագրի իրականացում» հատվածում:

⁵ Արենիի ԿԶԾ-ն մշակվել է ՏՏԵԶԻ շրջանակներում, իսկ սրտենցիալ ներդրումները նախագծվել ու են ՋՍԵԻ շրջանակներում, երբ ծրագիրը մեկնարկի: Գ ու մրու համար ՋՍԵԻ կօգտագործի արդեն մշակված գոյ ու թ ու և ու նեցող ռազմավարու թ ու նները և զարգացման ծրագրերը, և նոր ԿԶԾ-ի մշակվի:

⁶ Տես նաև Բաժին IV. Ծրագրի գնահատման ամփոփում: Ծրագրի գնահատման վիստարթում մ Փարիզի համաձայ նագրի հետնեղդսնակեցու մ:

պահպանմանը՝ երկարաժամկետ կայուն գործունեության և զբոսաշրջային ակտիվների կառավարման համար:

(ե) Հարցումների և զբոսաշրջության տվյալների հավաքագրման այլ գործողությունների իրականացում անանուն տեղեկատվության հավաքագրման նպատակով՝ տեղեկություններով համալրելու տեղական զբոսաշրջության վիճակագրությունը զբոսաշրջության շահագրգիռ կողմերի միջոցով, ինչպիսիք են Զբոսաշրջության կոմիտեն, Ուղղությունների կառավարման գրասենյակները (ՈԻԿԳ) և զբոսաշրջության այլ շահագրգիռ կողմերը:

(զ) Աջակցություն Արենի, Դիլիջան, Եղեգիս և Ջերմուկ կլաստերներում ՈԻԿԳ-ների ստեղծմանը և/կամ գործունեությանը՝ դասընթացների և ներուժի զարգացման, ապրանքների և սարքավորումների տրամադրման միջոցով:

(է) Առաջնորդների վերապատրաստման միջոցառումներ և զբոսաշրջության արժեքային շղթայում կանանց տեղական մասնակցության խթանում՝ որոշումներ կայացնող

մարմիններում առաջնորդի դեր ստանձնելու համար, այդ թվում՝ Ծրագրի շրջանակներում Տեղական աշխատանքային խմբերում (ՏԱԽ)⁷ ներկայացվածության ընդլայնման միջոցով,

ինչպես նաև աջակցություն կանանց՝ անհրաժեշտ կարողությունների զարգացման և հմտությունների ընդլայնման միջոցով:

7. **Բաղադրիչ 2 – «Աջակցություն կլիմայական առումով ճկուն ենթակառուցվածքներին եւ տեղական տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնակցության խթանում»** բաղադրիչը նպատակ ունի վերացնել ԿԶՕ-երով հայտնաբերված հիմնական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև մարզային զբոսաշրջության զարգացման տեսակետից ծառայությունների բացերն առաջնահերթ յոթ կլաստերներում: Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունների ընտրությունը կհիմնվի 1-ին բաղադրիչի ներքո մշակված և վերջնականացված ԿԶՕ-երի վրա: Այս բաղադրիչը կֆինանսավորի ինժեներական, տեղանքի և այլ տեխնիկական գնահատումները, տեխնիկատնտեսական հիմնավորումները (ՏՏՀ), ճարտարապետական և մանրամասն ինժեներական նախագծերը և շինարարական աշխատանքները: Բաղադրիչը ներառում է հետևյալ ենթաբաղադրիչները.

8. **Ենթաբաղադրիչ 2.1. «Ենթակառուցվածքների եւ ծառայությունների վերականգնում եւ արդիականացում»** ենթաբաղադրիչը կֆինանսավորի խորհրդատվական և շինարարական աշխատանքները՝ կատարելով միջամտություններ ուղղված հիմնական ենթակառուցվածքների բարելավմանը և քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, կենսունակության բարձրացմանը և զբոսաշրջային վայրերի և հարակից տարածքների հասանելիության բարելավմանը: Ամբողջ ենթակառուցվածքը նախագծվելու և ներդրվելու է կլիմայական և աղետների ռիսկերին, այդ թվում՝ երկրաշարժերին դիմակայելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության նորմերին շինարարական չափանիշներին հաշվի առնելով համաշխարհային

⁷ ՏԱԽ-երի մային լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Բնասխույժից ռիսկերի նվազեցման միջոցառումները» բաժին III. Ծրագրի իրականացում:

լավագույն փորձը: Բաղադրիչի շրջանակներում ներդրումները կներառեն, բայց չեն սահմանափակվի հետևյալով⁸.

(ա) Ճանապարհների և տրանսպորտի հետ կապված ենթակառուցվածքների որակի և վիճակի բարելավում, ներառյալ կանաչ և էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոցներ այլընտրանքային ձևերի (օրինակ՝ հասարակական տրանսպորտի համակարգեր, ինչպիսիք են ճոպանուղիները, էլեկտրական ավտոբուսները, հեծանիվները և այլն) խթանումը: Այս գործունեությունը կներառի ճանապարհների և կամուրջների կառուցում, վերականգնում / բարելավում և / կամ սպասարկում, հետիոտնային գոտիների ընդլայնում, փողոցների ձևավորում և լուսադիոդային լուսավորության տեղադրում և կանաչ ենթակառուցվածքի այլ տարրերի օգտագործում՝ կլիմայական առումով ձկունության ապահովման և փողոցների, մոտեցնող ճանապարհների և ավտոկայանատեղերի գրավչության բարելավման նպատակով: Ներդրումները նախագծված կլինեն ազգային չափանիշներին համապատասխան և հաշվի կառնեն հաշմանդամության ներառման գլոբալ լավագույն փորձը, ինչպես նաև կլիմայի և աղետների դիմակայունության բարելավումը (օրինակ՝ հեղեղումների մեղմացման և էրոզիայի վերահսկման միջոցառումների ներդրում): Բարելավումները կներառեն նաև հասարակական փոխադրամիջոցները՝ բարելավելու մուտքը դեպի զբոսաշրջային վայրեր, կայանատեղիները և հետիոտների հետ կապը՝ խրախուսելով մուտքը դեպի հիմնական տեսարժան վայրեր առանց շարժիչի փոխադրամիջոցներով:

(բ) Հիմնական ենթակառուցվածքների և ծառայությունների արդիականացում և քաղաքային ենթակառուցվածքների վերականգնում, ներառյալ առկա տեղական ջրամատակարարման բարելավումը. կոյուղու համակարգերի, կեղտաջրերի հավաքման և հեռացման համակարգերի վերականգնում և արդիականացում և բարելավումներ՝ հեղեղաջրերի պատշաճ կառավարման համար:

Ենթաբաղադրիչը նաև կաջակցի հեռահաղորդակցության ենթակառուցվածքի վերականգնմանը և/կամ արդիականացմանը՝ տեղական համայնքների և ձեռնարկությունների թվային հասանելիությունն ու կապը բարելավելու համար:

(գ) Հասարակական վայրերի և տարածքների գրավչության բարձրացում, ներառյալ կանաչ տարածքների վերականգնումը և/կամ ընդլայնումը, հանրային պարկի բարելավումը, փողոցների կանաչապատումը և համապատասխան քաղաքային հարմարությունների ապահովումը՝ զբոսաշրջային բավարար փորձին համապատասխանելու համար:(դ) Զբոսաշրջությանն առնչվող ենթակառուցվածքների և ծառայությունների տրամադրում, ներառյալ զբոսաշրջային հարմարությունների կառուցումը կամ վերականգնումը, ինչպիսիք

են ուղղությունների կառավարման գրասենյակները և թանգարանները, և մշակութային ժառանգության արժեքների պահպանումն ու բարելավումը: Հարմարությունների

վերականգնման առումով գերապատվություն կտրվի էներգաարդյունավետության բարելավմանը, և բոլոր նորակառույց շենքերը կհամապատասխանեն

⁸ Յու ըստնայ ռու ր կլ աստրու մ միջանու թյ ու նների հնարավոր ցանկը և դրանց պարաստվածու թյ ու նը ներկայ սցված է Հավելվ ված 2-ու մ:

Էներգաարդյունավետության չափանիշներին, որոնք առնվազն համահունչ են Առավել արդյունավետ չափանիշներով գերազանցության նախագծին (1) (EDGE-մակարդակ):

Նախագծերը կներառեն նաև թափոնների նվազեցման նկատառումներ՝ օգտագործելով ցածր անխաճնային նյութեր և բարձրացնելով ջրի օգտագործման արդյունավետությունը:

ե) Աջակցություն Հանրային-մասնավոր ներդրումներին (ՀՄՆ), որը ներառում է մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով լրացուցիչ հանրային ենթակառուցվածքների բարելավման ապահովում: Այս գործունեությունը կապահովի հանրային ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են առևտրային ներդրումների կենսունակությունը ապահովելու համար, ինչպիսիք են նոր կամ վերականգնված հարակից հանրային օբյեկտները, ճանապարհներն ու փողոցները, ջուրը և սանիտարական համակարգը և

հեռահաղորդակցությունը⁹: Հիմնվելով մասնավոր հատվածի կազմակերպությունների ցուցաբերած հետաքրքրության և հանձնառության վրա՝ այս գործունեությունը

նպատակաուղղված կլինի նպաստել ավելի լայն տնտեսական զարգացման և առևտրային ներդրումների կուտակման բարենպաստ միջավայրին:

ՀՄՆ ներդրումների բացահայտման, ընտրության և մշակման հատուկ ընթացակարգերը կներկայացվեն Ծրագրի կառավարման ձեռնարկում (ԾԿԶ):

9. ԿԶԾ-երի վերջնականացումը նախապայման չէ Բաղադրիչ 2-ի շրջանակներում գործողություններ սկսելու համար: Մինչ ԿԶԾ-երը պատրաստվում են, բաղադրիչ 2-ի համար իրավասու ենթաձրագրերի տեսակը սահմանափակվում է ներդրումներով, որոնք շահավետ կլինեն համայնքի՝ և զբոսաշրջության զարգացման համար՝ անկախ ԿԶԾ-ի վերջնական արդյունքներից, այսինքն՝ ներդրումների հետ կապված «ոչ մի ավստանք» չի կարող լինել: Հնարավոր «առանց ավստանքի» ներդրումները նկարագրված են Հավելված 2-ում:

10. Ենթաբաղադրիչ 2.2. Մասնավոր հատվածի մասնակցության խթանումը, մասնագիտական հմտությունների բարձրացումը եւ աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը (5 մլն ԱՄՆ դոլար) կֆինանսավորի խորհրդատվական ծառայությունները կլաստերների առաջնորդման և տեղական տնտեսական զարգացման և զբոսաշրջության ոլորտում տեղական ընկերությունների և անհատների մասնակցության խթանման նպատակով: Առաջարկվող գործողությունները կներառեն.

(ա) Բրենդինգի, շուկայավարման և խթանման գործողություններ զբոսաշրջության արժեքային շղթայում:

(բ) Հանրային մասնավոր համագործակցության (ՀՄՀ) խթանում, ներառյալ ԿԶԾ-երի շրջանակներում բացահայտվող պոտենցիալ կենսունակ ՀՄՀ-ների գնահատումը, նախագծումը և պատրաստումը, օրինակ՝ զբոսաշրջության հետ կապված հասարակական տրանսպորտի համակարգերի շահագործման և պահպանման երկարաժամկետ պայմանավորվածությունների անհրաժեշտությունը (օրինակ՝ Դիլիջանում քննարկվող ճոպանուղու համակարգի առաջարկը):

⁹ Առաջարկների ներկայ սցու մը, ընտրության ընթացակարգերը և հաստատման չափանիշները կհաստիցվեն Ծրագրի կառավարման ձեռնարկում:

(գ) Զբոսաշրջության և առնչվող բիզնեսում ներգրավված տեղացի աշխատողների համար HoReCa (հյուրանոց, ռեստորան և սննդի ծառայություններ) ոլորտում մասնագիտական հմտությունների զարգացումը՝ առաջնահերթություն տալով խոցելի և անապահով խմբերին (օրինակ՝ կանայք, երիտասարդները և խոցելի խմբերը, որոնք կարող են չունենալ անհրաժեշտ հմտություններ, ֆինանսական հնարավորություններ և աշխատանքային հնարավորություններ): Սա կներառի նաև զբոսաշրջության ոլորտի մասնագետների թիրախային թվով մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի մշակումն ու իրականացումը:

(դ) Աշխատանքի վայրում ուսուցում (օրինակ՝ ռեստորանային և խոհարարական ուսուցում) և ֆորմալ ուսուցում (օրինակ՝ HoReCa սերտիֆիկացման ծրագրեր), որոնք պետք է մշակվեն և իրականացվեն ոլորտում ակտիվ ընտրված գործընկերների հետ¹⁰:

(ե) Տեղական զբոսաշրջային ընկերությունների և ձեռնարկատերերի համար դասընթացների և կարողությունների զարգացման այլ միջոցառումների իրականացում, որոնք ներառում են

կանանց նախասիրությունները, կարիքները և նախագծային ներդրումները՝ մասնակցային գենդերային ընդգրկուն գործընթացի միջոցով:

(զ) Ուսումնասիրությունների և վերլուծական աշխատանքների մշակում՝ նախագծելու, աջակցելու իրականացմանը և/կամ մշտադիտարկելու գործողությունները՝ զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի ստեղծումը կլաստերների շրջանակներում խթանելու նպատակով, ներառյալ պոտենցիալ միջամտությունների բացահայտումը, որոնց Ծրագիրը կարող է սատարել:

(է) Թվային գործիքների մշակում և/կամ առաջխաղացում, ինչպիսիք են ծրագրային հավելվածները, օրինակ՝ տրանսպորտի տարբերակների, իրադարձությունների, փառատոների օրացույցների, մատչելի հարմարությունների, արշավային արահետների և տուր կազմակերպիչների մասին՝ իրական ժամանակում տեղեկատվություն տրամադրելու համար:

11. Բաղադրիչ 3 - Ծրագրի կառավարման եւ գործառնական աջակցության (4,5 մլն ԱՄՆ դոլար)
Բաղադրիչը կֆինանսավորի ծրագրի կառավարման ընդհանուր ծախսերը՝ կապված գործառնական գործունեության, խորհրդատվական ծառայությունների, ոչ խորհրդատվական ծառայությունների, տրանսպորտային միջոցների, ապրանքների և հաղորդակցության, իրազեկման և վերապատրաստումների ծախսերը: Այն կֆինանսավորի ծրագրի իրականացման գործակալության ծախսերը կապված կառավարման գործառնականների հետ և կապահովի, որպեսզի Ծրագիրը համապատասխանի Բանկի պահանջներին՝ կապված բնապահպանական, սոցիալական, ֆինանսական, առողջիտի և տեխնիկական չափորոշիչների հետ, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման խորհրդատվական ընկերության ծախսերը՝ աջակցելու և ընդլայնելու իրականացնող գործակալության առկա ՄևԳ համակարգերի կարողությունները: Բաղադրիչը նաև նպատակ ունի ընդլայնել ծրագիրն իրականացնող գործակալության Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարողությունները՝ վերապատրաստման և գիտելիքների փոխանակման միջոցառումների միջոցով:

¹⁰ Տես «Ծրագրի նկարագրող ու նը» ենթաբաժինը «Ե Գործընկերների դերը»՝ գործընկերների հետաքրքրվող լրացուցիչ գործողությունների և մասնագիտական ու վերապատրաստման ծրագրեր սրամտրելու վերաբերյալ մանրամասների համար:

12. **Բաղադրիչ 4 - Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ (ԱԻԱԲ).** Զրո դուլար արժողությամբ այս բաղադրիչը թույլ կտա արագորեն վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները հրատապ կարիքների համար աղետի (երկրաֆիզիկական, կլիմայական կամ տեխնածին) կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակների դեպքում: Նման իրադարձությունները կարող են ներառել ջրհեղեղներ, երկրաշարժեր, երաշտներ և հիվանդությունների բռնկում: ԱԻԱԲ-ի համար համաձայնեցված գործարկիչը հնարավորություն կտա վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները Ծրագրի այլ բաղադրիչներից՝ աջակցելու անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին: Իրավասու գործողությունների ցանկը կհստակեցվի ԱԻԱԲ ձեռնարկում, որը պետք է պատրաստվի նախքան Ծրագրի արդյունավետությունը, և հատկացումները կիրականացվեն կարևորագույն ապրանքների, շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների դրական ցուցակի դիմաց, որոնք անհրաժեշտ են անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին աջակցելու համար:

1.2 ՏՇ պատրաստման հիմնավորումը

- 13. Ծրագրի նախապատրաստման փուլում թիմը հստակ տեղեկատվություն չունի տարաբնակեցման ազդեցության չափի և ծավալի մասին, որոնք կարող են առաջանալ Ծրագրի գործունեության արդյունքում: Ծրագրի շրջանակներում նախատեսված ֆիզիկական շինարարական աշխատանքները կարող են պոտենցիալ բացասական հետևանքներ ունենալ համայնքների կամ ծրագրի ազդեցությանը ենթակա անձանց (ՕԱԵԱ) վրա և կարող են հողի, բերքի և/կամ ծառերի մշտական կամ ժամանակավոր կորստի կամ մուտքի կորստի, մասնավոր և հանրային սեփականությունների մուտքի ժամանակավոր սահմանափակման, փոքր և միջին բիզնեսի կորստ կամ խաթարման պատճառ հանդիսանալ:
- 14. Տարաբնակեցման ազդեցությունները, ամենայն հավանականությամբ, կապված են պետական ենթակառուցվածքների կառուցման կամ շահագործման համար հողի ժամանակավոր կամ մշտական օգտագործման կամ ձեռքբերման հետ և/կամ փոքր մասնավոր ձեռնարկությունների վրա ազդեցությունների հետ՝ կապված օժանդակ ենթակառուցվածքների կառուցման կամ վերականգնման հետ, ինչպիսիք են փողոցները, շուկաները և այլն: Ծրագիրն առաջնահերթություն կդնի մասնավոր հողօգտագործման/ձեռքբերման և մասնավոր ձեռնարկությունների գործունեության խաթարման հնարավորության սահմաններում: Բոլոր ենթածրագրերից կպահանջվի մանրամասնել վերաբնակեցման բոլոր հնարավոր ազդեցությունները իրենց նախագծերի շրջանակներում:
- 15. Բաղադրիչ 2-ի շրջանակներում նախատեսվում են որոշ շինարարական աշխատանքներ, որոնք կարող են հանգեցնել ստորև ներկայացված ազդեցությունների: Համապատասխանաբար կպատրաստվեն ՏՊ-ներ կամ Կենսամիջոցների բարելավման պլաններ (ԿԲՊ-ներ)՝ նման գործողությունների ազդեցությունները մեղմելու համար:
- 16. Ստորև բերված աղյուսակն ամփոփում է Ծրագրի շրջանակներում հնարավոր տարաբնակեցման ազդեցությունները և մասշտաբը, նման ազդեցությունների հավանականությունը և դրանց առաջացման դեպքում ձեռնարկվելիք գործողությունները:

Աղյուսակ 1. Ծրագրի ներքո տարաբնակեցման հիմնական ազդեցությունները

Տարաբնակեցման իրավիճակային սցենար	Հավանականությունը	Պահանջվող փաստաթղթերը
Ա) Ազգային օրենսդրության համաձայն հանրության գերակա շահի որոշմամբ կամ այլ հարկադիր ընթացակարգերով հողի նկատմամբ իրավունքի ձեռքբերում կամ հողօգտագործման իրավունքի սահմանափակում	Միջին	Հանրային գերակա շահի մասին ՀՀ կառավարության որոշում, Տարաբնակեցման պլանի (ՏՊ) մշակում և հաստատում ՀԲ և ՀՀ կառավարության կողմից
Բ) Մեփականատերերից կամ հողի նկատմամբ օրինական իրավուն ունեցող անձանցից հողի նկատմամբ իրավունքի ձեռքբերում կամ հողօգտագործման իրավունքի սահմանափակում բանակցությունների միջոցով, բանակցությունների ձախողման արդյունքում հողի օտարումը կատարվում է հանրային գերակա շահի մասին որոշմամբ կամ այլ հարկադիր ընթացակարգերով ¹¹	Միջին	Հանրային գերակա շահի մասին ՀՀ կառավարության որոշում, ՏՊ մշակում և հաստատում ՀԲ և ՀՀ կառավարության կողմից
Գ) Ազդեցություն կենսամիջոցների կամ եկամտի աղբյուրի վրա	Միջին	ՏՊ-ի և ԿԲՊ-ի մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԻՄ-երի կողմից
Դ) Հողի օտարումը կամ հողօգտագործման սահմանափակումն ազդում է կոմերցիոն ձեռնարկության վրա, ազդեցության են ենթարկվում ձեռներեցներն ու աշխատողները	Միջին	ՏՊ և ԿԲՊ մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԻՄ-երի կողմից
Ե) Հողօգտագործման և բնական ռեսուրսների հասանելիության սահմանափակումներ, որոնց պատճառով համայնքը կամ համայնքի խմբերը զրկվում են ռեսուրսների օգտագործման հասանելիությունից, որոնց հանդեպ ունեցել են ավանդական կամ օգտագործման ճանաչելի իրավունքներ: Մա վերաբերում է այն իրավիճակներին, երբ նախագծի հետ կապված սահմանվեն	Ցածր	Ընթացակարգային շրջանակի կամ ԿԲՊ-ի մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԻՄ-երի կողմից

¹¹ Չույ սծ պ ս ԲՄ-ի կիրառումը նման իրավիճակներում, իրսիու սել ի, որսբսզի Կսրկսու ո սղրսկիր սնձսնց հետբսնսկցս ին լ ու ծու մներ վնսրի սու յ ն ԲՄ-ի սբհսնջներին հսնսստսսյսն, որսբսզի օզնի խու սսսյել սղստնսկսն օտսրմսն հետկսսսյսն վսրչ սկսն կսմ դստկսն ձզձզու մներից և հնսսրկրինս խու սսսյի, նվսղեցնի սղրսկիր սնձսնց վրսսսղստնսկսն օտսրմսն հետկսսսյսն սղրեցու յղ ու նները:

պահպանվող տարածքներ, անտառներ, կենսաբազմազանության տարածքներ կամ բուֆերային գոտիներ ¹²		
Զ) Մինչև Ծրագրի կատարման օրն արանց օրինական, ավանդական կամ ճանաչելի իրավունքի հողն օգտագործող կամ զբաղեցնող մարդկանց տարհանում	Ցածրից միջին	ՏՊ մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԲՄ-երի կողմից
Է) Մարդկանց տեղահանում Ծրագրի ազդեցության հետևանքով, որը նրանց հողը դարձնում է անօգտագործելի կամ անհասանելի	Ցածր	ՏՊ մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԲՄ-երի կողմից
Ը) Հողամասի հասանելիության կամ այլ ռեսուրսների օգտագործման սահմանափակում, ներառյալ համայնքային սեփականությունը և բնական ռեսուրսները, ինչպիսիք են ծովային և ջրային ռեսուրսները, փայտանյութը և ոչ փայտային անտառային արտադրանքները, քաղցրահամ ջուրը, բուժիչ բույսերը, որսորդական և հավաքատեղիները, արոտավայրերն ու մշակաբույսերը	Ցածր	ՏՊ մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԲՄ-երի կողմից
Թ) Հողային իրավունքներ կամ պահանջներ հողի կամ ռեսուրսների նկատմամբ, որոնք զիջել են անհատները կամ համայնքները՝ առանց փոխհատուցման լրիվ վճարման ¹³	Ցածրից միջին	ՏՊ մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԲՄ-երի կողմից
Ժ) Հողերի օտարման կամ հողօգտագործման սահմանափակումները, որոնք տեղի են	Միջին	ՏՊ մշակում և հաստատում ՀԲ-ի և ՏԲՄ-երի կողմից

¹² Անս իրավիճակներում սզդակիր անձինք հաճախ պթտոնական սեփականություն ունենեն: Ասկարող է վերաբերել քաղցրահամ ջրային և ծովային միջակայրերը: Մեւյն ԲԱՄն չի տարածվում հասնց նքի բնական ռեսուրսների կառավարման ծրագրերի շրջանակներում բնական ռեսուրսների հասանելիություն սահմանափակումների վրայ պիներն՝ երբ ռեսուրսներն օգտագործող հասնց նքը համատեղ որոշի սահմանափակել մու սքը դեպի պ ո ռեսուրսները, պց մնտուլ, որ Բանկը բավարար գնահատի հասնց նքի որոշումների կպ սցման գործընթացը որմես համարժեք և կամավոր, սեղեկացված կոնսենսուս ու սրտուպ տող որոշում մ, և որ համապատասխան միջոցները համաձայնեցվել և ներդրվել են հասնց նքի խոցելի անդամների վրաբացասական ազդեցությունները, եթե պ դախիք կան, մեղմել ու համար:

¹³ Որոշ հանգամանքներում կարող է առաջարկվել, որ ծրագրի կողմից օգտագործվող հողատարածքի մի մասը կամ ամբողջը նվիրաբերվի կամավոր հիմունքներով՝ առանց ամբողջական փոխհատուցման վճարման: Բանկի կողմից նախնական հաստատման դեպքում մ դակարող է ընդունել ի լ ինել, եթե Վարկատուն ցույց տպ որ. (բ) սրտենցիպ դոնորները սեղյ սկ են, որ մերծումը տարբերակ է, և գրավոր հաստատել են նվիրատությունը ու նը շարունակել ու իրենց պարատականությունը ու նը. գ) նվիրաբերվող հողատարածքի չակը չնչին է և չի նվազեցնի նվիրատուի մնացած հողատարածքն պ նքան, որ չբավարարի նվիրատուի սարու ստը ներկանակարդակներում պեպանել ու համար. դ) սնային սնտտություններն սնների սեղակոխությունը ու ն չի ենթադրվում. (ե) սկնկպ վում է, որ նվիրատուն ու դոնակոխորեն կշանի ծրագրից. և (զ) հասնց նքային կամ կող եկսիվ հողերի համար նվիրատությունը ու նը կարող է իրականացվել միպ ն հողն օգտագործող կամ զբաղեցնող անհատների համաձայնությունը ամբ: Վարկատուն կպեպանի ձեռք բերված բող որ խորհրդատությունների և պց մնտակորվածություններն սրծանսգրություններն:

<p>ունեցել նախքան Ծրագիրը, բայց որոնք ձեռնարկվել կամ նախաձեռնվել են Ծրագրի ակնկալիքով կամ Ծրագրի համար նախապատրաստվելիս</p>		
---	--	--

17. ԶՄԵԾ-ի շրջանակներում աշխատանքները կիրականացվեն հիմնականում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին (համայնքներին¹⁴) պատկանող տարածքներում, որոնք տարաբնակեցման էական ռիսկեր չեն ներկայացնում: Այնուամենայնիվ, Ծրագրի շրջանակներում կարող են ակնկալվել մասնավոր հողերի որոշակի օգտագործում, ինչպես նաև տեղական բիզնեսի կամ եկամուտ ստեղծող գործունեություն մշտական կամ ժամանակավոր խափանում: Ծրագրի ազդեցության տակ գտնվող անձանց գույքի կամ եկամուտների և ապրուստի միջոցների վրա բոլոր ազդեցությունների համարժեք մեղմացման նպատակով պահանջվում է ՀՖ ԲՄՇ-ի համապատասխան ՏՊ-ների պատրաստում և իրականացում:
18. Թեև ակնկալվում է, որ տարաբնակեցման ազդեցությունը տարբեր կլաստերների վրա կլինի նվազագույն, Գյումրու կլաստերում ներդրումները կարող են ազդել Հայաստանի ամենամեծ և ամենաակտիվ բացօթյա շուկաներից մեկի վրա, որը գտնվում է Գյումրիի կենտրոնում՝ Շահումյան փողոցում: Շուկայի ներկայիս ենթակառուցվածքը քայքայված է, վաճառողների կրպակները անկանոն կառուցված են և չունեն ընդհանուր տարածական և գործառնական պլան: Այս կլաստերում ներդրումներն, ի թիվս այլոց, նպատակ կունենան վերակենդանացնել քաղաքային շուկան (մշակութային ժառանգության վայր) և բարելավել շրջակա ենթակառուցվածքը՝ ստեղծելով ավելի լավ հարթակ՝ ցուցադրելու տեղական խոհանոցը և համայնքային կյանքի այլ ավանդական ասպեկտները, ինչպես օրինակ՝ սոցիալական խոհանոցի ստեղծումը: Այս գործունեությունը, հավանաբար, կպահանջի առևտրի ժամանակավոր, իսկ որոշ դեպքերում՝ մշտական դադարեցում մի քանի տասնյակ փողոցային առևտրականների համար, ում կրպակները տեղակայված են Շահումյան փողոցի հին քաղաքային շուկայի շենքի դիմաց: Այս ծրագրով քաղաքապետարանի գործընկերը ԹՈՒՄՈ - Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնն է, որը պատասխանատու է շուկայի հայեցակարգի և նախագծի մշակման համար:
19. Այս ենթածրագրի իրականացման համար կպահանջվի ՏՊ և/կամ Կենսամիջոցների բարելավման պլանի (ԿԲՊ) մշակում և իրականացում վարձված փորձառու խորհրդատվական ընկերության/ընկերությունների կողմից և Արտաքին մշտադիտարկման գործակալության ներգրավում՝ ՏՊ/ԿԲՊ-ի իրականացման արդյունքները վերահսկելու համար: Այս ենթածրագրի իրականացման համար կպահանջվի նաև ԶԿ/ԷՆ-ի ակտիվ ներգրավվածություն՝ ՀՀ կառավարության կողմից ընդունվելիք հանրային գերակա շահի մասին որոշման նախագիծը պատրաստելու և շրջանառության մեջ դնելու, ինչպես նաև տարաբնակեցման փոխհատուցման համար միջոցներ ապահովելու համար: ՀՏԶՀ-ն սերտորեն կհամագործակցի ԹՈՒՄՈ-Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ, որը պատասխանատու է շուկայի մանրամասն նախագծի մշակման համար՝ ապահովելու, որ բոլոր գործողությունները համապատասխանեն ԲՄՄ5-ին և ՏՇ-ին: ՀՏԶՀ-ն պատասխանատու կլինի ՏՊ-ների և ԿԲՊ-ների մշակման և

¹⁴ Համայնքները Հայ աստուծու մ տեղական ինքնակառավարման վարչական տարածքային միավորներ են: Համայնքները ներառում են մեկ կամ մի քանի բնակավայր: Հայ աստուծու բոլոր բնակավայրերը ներառված են համայնքներում՝ առանձին կամ այլ բնակավայր(ների) հետ միասին: Համայնքներ են նաև Երևան և Գյումրիի քաղաքները:

իրականացման համար՝ համագործակցելով ԹՈՒՄՈ-ի և Գյումրու քաղաքապետարանի հետ: Գյումրու քաղաքապետարանը կաջակցի ՀՏԶՀ-ին՝ տրամադրելով այլընտրանքային տարածքներ ԾԱԵԱ-ների ժամանակավոր տեղափոխման համար և աջակցելով ԾԱԵԱ-ների հետ բարդ իրավիճակներում և հակամարտությունների կարգավորման հարցերում:

1.3 Հիմնական սկզբունքներ

20. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերում վարկառուներից ակնկալվում է, որ ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու հողի օտարման բացասական ազդեցությունները և Ծրագրի զարգացման հետ կապված հողօգտագործման սահմանափակումները: ԲՄՄ5-ի հիմնարար նպատակն է ապահովել, որպեսզի տարհանված անձինք (ինչպես սահմանված է ստորև) փոխհատուցվեն հողի և այլ ակտիվների փոխարինման արժեքով, և ըստ անհրաժեշտության ստանան այլ աջակցություն՝ բարելավելու կամ առնվազն վերականգնելու իրենց եկամուտներն ու կենսամակարդակը, եթե ֆիզիկական կամ տնտեսական տարհանումից հնարավոր չէ խուսափել:
21. ԲՄՄ5-ի մյուս նպատակները հետևյալն են.
 - ա) Խուսափել հարկադիր տարհանումից
 - բ) Բարելավել ֆիզիկապես տարհանված աղքատ կամ խոցելի անձանց կենսապայմանները՝ համապատասխան բնակարաններով ապահովման, ծառայությունների և հարմարությունների հասանելիության և կեցավայրի ապահովության միջոցով:
 - գ) Տարաբնակեցման գործողությունները պատկերացնել և իրականացնել որպես կայուն զարգացման ծրագրեր՝ ապահովելով բավարար ներդրումային ռեսուրսներ, որպեսզի տեղահանված անձանց հնարավորություն ընձեռվի ուղղակիորեն օգտվել Ծրագրից՝ ելնելով Ծրագրի բնույթի երաշխիքներից:
 - դ) Ապահովել, որպեսզի տարաբնակեցման աշխատանքները պլանավորվեն և իրականացվեն տեղեկատվության համապատասխան բացահայտմամբ, բովանդակալից խորհրդատվությամբ և ազդակիրների տեղեկացված մասնակցությամբ:
22. Տարհանված անձը (ԲՄՄ5, պար. 10) Ծրագրի ազդեցությանը ենթարկված ցանկացած անձն է, որը (ա) ունի հողի կամ ակտիվների նկատմամբ օրինական իրավունքներ. բ) պահանջ ունի հողի կամ ակտիվների նկատմամբ, որոնք ճանաչված կամ ճանաչելի են ազգային օրենսդրության համաձայն. կամ (գ) ովքեր չունեն ճանաչելի օրինական իրավունք կամ պահանջ իրենց զբաղեցրած կամ օգտագործած հողի կամ ակտիվների նկատմամբ: Տերմինը ներառում է հողի օտարման և հարակից ազդեցություններից տուժած անձանց բոլոր հնարավոր կատեգորիաները. բոլոր նրանք, ում վրա բացասական ազդեցություններ են եղել, համարվում են «տարաբնակեցված» այս սահմանման համաձայն՝ անկախ տեղափոխության իրական անհրաժեշտության փաստից:
23. Փոխարինման արժեքը (ԲՄՄ5, պար. 2, ծանոթագրություն 6) սահմանվում է որպես գնահատման մեթոդ, որը տրամադրում է բավարար փոխհատուցում ակտիվները փոխարինելու համար,

գումարած ակտիվների փոխարինման հետ կապված գործարքի անհրաժեշտ ծախսերը: Գործող շուկաների առկայության դեպքում փոխարինման արժեքը կլինի անշարժ գույքի անկախ և լիազորված գնահատողի միջոցով հաշվարկված և հաստատված շուկայական արժեքը գումարած գործարքի ծախսերը: Եթե գործող շուկաներ գոյություն չունեն, փոխարինման արժեքը կարող է որոշվել այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են հողի կամ արտադրական ակտիվների էլքային արժեքի հաշվարկը, կամ կառույցների կամ այլ հիմնական միջոցների կառուցման համար փոխարինող նյութերի և աշխատուժի չամորտիզացված արժեքը, գումարած գործարքի բոլոր ծախսերը կապված ակտիվների փոխարինման հետ: Բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական տեղահանումը հանգեցնում է անորակ ապաստանի կորստի, փոխարինման արժեքը պետք է առնվազն բավարար լինի բնակարանների գնման կամ կառուցման համար, որոնք համապատասխանում են համայնքի որակի և անվտանգության նվազագույն չափանիշներին:

24. ԲՄՍ5-ը նաև սահմանում է հիմնական սկզբունքները, որոնց հարկավոր է հետևել տարաբնակեցման պլանավորման և իրականացման ժամանակ: Դրանք ներառում են.

ա) Բոլոր տեղահանված անձինք իրավունք ունեն փոխհատուցում ստանալու հողի և կից գույքի համար կամ փոխհատուցման փոխարեն այլընտրանքային, բայց համարժեք օգնության ձևերով: Կորցրած ակտիվների նկատմամբ օրինական իրավունքների բացակայությունը տեղահանված անձանց չի գրկի նման փոխհատուցման կամ օգնության այլընտրանքային ձևերի իրավունքից:

բ) Փոխհատուցման դրույքաչափերը վերաբերում են այն գումարներին, որոնք ամբողջությամբ պետք է վճարվեն կորցրած ակտիվի իրավասու սեփականատեր(երին) կամ օգտագործող(ներին) առանց հարկերի, մաշվածության կամ նվազեցման կամ այլ նպատակների վճարների:

գ) Հողի, շինությունների, չհավաքված մշակաբույսերի և բոլոր այլ հիմնական միջոցների փոխհատուցումը պետք է վճարվի մինչև օտարման պահը:

դ) Երբ մշակվող հողերը պետք է օտարվեն Օրագրի նպատակների համար, իրականացնող գործակալությունը ձգտում է տրամադրել համարժեք արտադրական արժեքով փոխարինող հող, եթե դա տեղահանված անձանց նախապատվությունն է:

ե) Օրագրի ազդեցությանը ենթարկվելու դեպքում համայնքային ծառայությունները կվերականգնվեն կամ շինությունները կվերանորոգվեն:

զ) Տարհանված անձանց հետ պետք է խորհրդակցել ՏՊ-ի պատրաստման ժամանակ, որպեսզի նրանց նախապատվությունները ներկայացվեն և հաշվի առնվեն:

է) ՏՊ-ն (նախագծային և վերջնական տարբերակներում) հրապարակայնորեն հանրայնացվում է տարհանվածների համար մատչելի ձևով:

ը) Կատեղծվի և կներկայացվի բողոքների լուծման մեխանիզմ, որով տարհանված անձինք կարող են հետամուտ լինել բողոքներին:

թ) Բանակցային կարգավորման գործընթացներն ընդունելի են որպես օրինական օտարման այլընտրանք, եթե դրանք պատշաճ կերպով իրականացվեն և փաստաթղթավորվեն¹⁵:

¹⁵ Գործարքները բնակցային գործընթացներով կարգավորելու համապատասխան սկզբունքները ներառում են (ա) նախատվող ծրագրի սեղանները ու սու մասիրվում են պրզել ու սեվիսմոյն ան կամ օգտագործման վերաբերյ պ ծանրաբեռնվածոյն ու նները, որոնք կլոչ ընդունեն երկկողմանի

ժ) Հողի նվիրատվությունն ընդունելի է միայն այն դեպքում, եթե այն իրականացվում է ամբողջությամբ կամավոր կերպով և համապատասխան փաստաթղթերով¹⁶:

ի) Վարկառուն պաշտոնական պատասխանատվություն է կրում Ծրագրի տարածքների ձեռքբերման հետ կապված բոլոր ծախսերը հոգալու համար, ներառյալ փոխհատուցումը և տեղահանված անձանց հետ կապված այլ նկատառումները: ՏՊ-ն ներառում է բոլոր ծախսերի բյուջեն, ներառյալ՝ գնաճը և չնախատեսված ծախսերն, ինչպես նաև չնախատեսված ֆինանսական կազմակերպչական միջոցառումների կատարման ծախսերը:

յ) Մշտադիտարկման միջոցառումները կհստակեցվեն ՏՊ-ում՝ գնահատելու ՏՊ իրականացման կարգավիճակը և արդյունավետությունը:

բանկցույթ ու ներքին. (բ) եթե տարածքը կողմնակալ կամ համայնքային սեփականույթ ունի է կամ օգտագործվում է, ապա բանկցույթն ինքնուրույն գործընթացը ներառում է այն անհանդերձ կամ սույն ինստիտուցիաներին, որոնք ուղղակիորեն զբաղեցնում կամ օգտագործում են այն. գ) նախքան բանկցույթ ու ներքին, սեփականատերերը կամ օգտագործողները ծրագրի ղեկավարույթ ան կողմից ստեղծվում են ծրագրի օգտագործման համար համապատասխան հող (և այլ սկիզբներ) ձեռք բերելու իրենց մտադրույթ ան մասին. (դ) սեփականատերերը կամ օգտագործողները ստեղծված են իրավական պաշտպանույթ ան կամ այլ գործողույթ ու ներքին իրականացնելու իրենց իրավունքների և տարբերակների մասին և ստորագրում են հայ տարբարույթ ուն, որը ցույց է տալիս, որ պարտատեն բանկցույթ ու ներքին վարել. է) բանկցույթ ու ներքին սկզբում նախաձեռնությունները սեփականատիրոջը կամ օգտագործողին ներկայացնում են փոխհատուցման առաջարկվող վաճառք կամ այլ շահավետ նկատառումներ՝ այս նախնական առաջարկի հիմքի հետ միասին. (զ) սեփականատերերը կամ օգտագործողները ստեղծված են, որ նրանք կարող են հակաառաջարկներ ստեղծել, ինչպես որ հարմար գտնեն. է) բանկցույթ ու ներքին իրականացվում են առանց որևէ ձևի հարկարանքի կամ սնուցման. ը) այս մանուկիրը, որը սահմանում է վճարման գույքներ կամ այլ համաձայնեցված նկատառումներ, գրվում, ստորագրվում և գրանցվում է. (i) փոխհատուցման վճարումը և ցանկացած այլ համաձայնեցված նկատառումներ կատարվում են նախքան հոգու տծրագրի օտարումը. և (ժ) սեփականատերերը կամ օգտագործողները պաշտպանում են բողոքների մեխանիզմի հասանելի ույթ ան իրավունքը, եթե նրանք բողոքներ ունեն բանկցույթ ին կարգավորման գործընթացի որևէ ասպեկտի վերաբերյալ :

¹⁶ Ծրագրի օգտագործման համար հողի կամ գույքի ցանկացած նվիրատույթ ուն պետք է համապատասխանի այս սկզբունքներին. ա) ստեղծվող նվիրատու և ստեղծվողում է, որ մերժումը տարբերակ է, և մերժման իրավունքը նշված է նվիրատույթ ան փաստաթղթում, որը նվիրատու և կատարողի.բ) նվիրատույթ ուն իրականացվում է առանց հարկարանքի, մանիսույթ սցիպի կամ այլ ճնշման հանրային կամ ավանդական իշխանույթ ու ներքին կողմից. գ) նվիրատու և կարող է բանկցել վճարման ինչ-որ ձևի, մասնակի օգտագործման իրավունքների կամ այլ ընտրանքային օգույթ սնուցի համար՝ որպես նվիրատույթ ան պայման. (դ) հողի նվիրատույթ ուն անընդունելի է, քանի դեռ նախատեսված չէ ներգրավված անձանց եկամուտների կամ կենսամակարդակի վրանական ազդեցույթ ան մեղմացման միջոցառում. է) հողի նվիրատույթ ունը չի կարող ստեղծելու նենսպ, եթե դրանհամար անհրաժեշտ լինի սույն ինստիտուցիաների ստեղծվում. գ) համայնքային կամ կողմնակալ հողի համար նվիրատույթ ունը կարող է իրականացվել միայն այն անհանդերձ համաձայնույթ անք, որոնք ուղղակիորեն օգտագործում կամ զբաղեցնում են հողը. (ե) նվիրաբերվող հողատարածքը չի օգտագործվում այլ անձանց կողմից, որոնք վրակարող է բացառաբար ազդել. (ը) ցանկացած նվիրաբերված հող, որը չի օգտագործվում նախաձեռնվող իր համաձայնեցված նպատակների համար, ժամանակին վերադարձվում է նվիրատուին. և (i) հողի նվիրատույթ անյ ու ըսքանչյ ուր դեպ փաստաթղթավորված է, ներառյալ նվիրաբերված հողը կամ սկիզբները նույն նկատառող հայ տարբարույթ ուն և նվիրատույթ ան պայմանները, որը ստորագրված է յ ու ըսքանչյ ուր սեփականատիրոջ կամ օգտագործողի կողմից: Ծրագրի օգտագործման համար հող կամ սկիզբները նվիրաբերող անձինք կարող են օգտագործել ծրագրի բողոքարկման մեխանիզմը՝ բողոքներ ներկայացնելու նվիրատույթ ան գործընթացի ցանկացած ասպեկտի վերաբերյալ :

2. Ինստիտուցիոնալ եւ իրավական շրջանակ

2.1 Ինստիտուցիոնալ կարգավորումներ

25. Մի քանի հաստատություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր դերեր և պարտականություններ, պատասխանատվություն է կրում ՏՇ-ի վերահսկման և իրականացման համար՝ մշակելով և իրականացնելով հետագա ՏՊ-ը(ներ) և/կամ ԿԲՊ-ը(ներ): Հիմնական հաստատությունները, որոնք դերակատարություն ունեն ՁՄԵԾ-ի իրականացման հետ կապված տարաբնակեցման հարցերում, ներկայացված են ստորև: Հիմնական դերակատարները, ներառյալ նրանց փոխհարաբերությունները, ներկայացված է Գծապատկեր 1-ում:
26. Ծրագրի վերաբերյալ ընդհանուր որոշումների կայացումը և ռազմավարական դեկլարությունը կատարվում է ԷՆ կողմից: Զբոսաշրջության կոմիտեն (ԶԿ), որը գտնվում է ԷՆ-ի ներքո, ծառայում է որպես երկրում զբոսաշրջության զարգացման և խթանման հանձնառություն ունեցող առաջնային պետական գործակալություն: Այս նախաձեռնության շրջանակներում ԶԿ-ն կարևոր դեր կխաղա Ծրագրի շրջանակներում ներդրումների ձևակերպման և բացահայտմանն աջակցելու գործում և կլինի ԷՆ-ի գլխավոր գործընկերը, որը պատասխանատու է Ծրագրի համակարգման և քաղաքականության հարցերում աջակցության համար: ԶԿ-ն պատասխանատու կլինի պետական գերատեսչությունների հետ հարաբերությունների համակարգման համար, ներառյալ ազգային և տեղական ինքնակառավարման մարմինները, հանրային գերակա շահի վերաբերյալ կառավարության որոշման նախագծի պատրաստման և շրջանառության, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՏՊ-ի ֆինանսական կառավարման համար:
27. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏՁՀ) ծառայելու է որպես Ծրագրի իրականացման գործակալություն: ՀՏՁՀ-ն պատասխանատու կլինի ծրագրի բոլոր գործողությունների և հավատարմագրային պարտականությունների կատարման համար, ներառյալ գնումների և ֆինանսական կառավարումը, բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) մշտադիտարկումն, ինչպես նաև տեխնիկական գնահատման, նախագծման և շինարարական աշխատանքների հետ կապված բոլոր պարտականությունները, ներառյալ աշխատանքների վերահսկումը, մշտադիտարկումն ու գնահատումը (ՄևԳ) և հաշվետվողականությունը:
28. Կստեղծվի բարձր մակարդակի Ծրագրի կառավարման կոմիտե (ԾԿԿ)՝ ապահովելու ծրագրի իրականացման ընդհանուր վերահսկողությունը և միջգերատեսչական համակարգումը:
29. Տարաբնակեցման հետ կապված սոցիալական ռիսկերի գնահատման, համապատասխան եզրակացությունների տրամադրման և պահանջվող ՏՊ-ների պատրաստման պատասխանատվությունը կրում է ՀՏՁՀ մասնագետների խումբը: Խմբի կազմում կլինեն ծրագրի համակարգողը, իրավաբան, բնապահպանական և սոցիալական մասնագետներ: Ամենօրյա պատասխանատվությունը կրելու է սոցիալական մասնագետը և ծրագրի համակարգողը, ովքեր ծրագրի ինժեներների օգնությամբ կստանան ելակետային տեղեկատվություն, կիրականացնեն տեղանքի տեսողական գնում և կպատրաստեն վերը նշված փաստաթղթերը: ՀՏՁՀ-ն ՏՊ-ները կուղարկի Համաշխարհային բանկ՝ հաստատման համար: ՏՊ-ները պետք է հաստատվեն Համաշխարհային բանկի կողմից, նախքան դրանց իրականացումը: ՀՏՁՀ-ն կստեղծի Տարաբնակեցման պլանի իրականացման խումբ (ՏՊԻԽ), որն ուղղակիորեն կհամակարգի այս

գործողությունները և կապահովի ՏՊ-ի պահանջների համապատասխանության պահպանումը Ծրագրի բոլոր գործընկերների կողմից:

30. ՀՏՁՀ-ն վերջնական պատասխանատվություն է կրելու վերաբնակեցման քաղաքականության հետ կապված բոլոր գործողությունները սկսելու և իրականացնելու համար:
31. Որպես հիմնական վերահսկող մարմին, ՀՏՁՀ-ն ՏՊԻԽ-ի միջոցով կվերահսկի ՏՇ-ի իրականացման բոլոր ասպեկտները: ՀՏՁՀ-ն.
 - Հանդիսանում է նախաձեռնող գործակալություն ՁՄԵԾ ենթածրագրերի ազդեցությունները մեղմելուն ուղղված ՏՊ-ների պատրաստման և իրականացման համար.
 - Պայմանագիր կկնքի խորհրդատուների հետ՝ իրականացնելու ԾԱԵԱ-ների մարդահամար (Հավելված Բ), ակտիվների գույքագրում (Հավելված Դ), ծրագրի ազդեցության տակ գտնվող տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական հետազոտություն (ՄՏՀ), վերահսկողություն և գնահատում, ինչպես նշված է ստորև՝ հեշտացնելու ԾԱԵԱ-ների փոխհատուցման գործընթացը և վերականգնումը; ինչպես նաև կատարելու ՏՊ իրականացման մշտադիտարկում և գնահատում;
 - Կհաստատի փոխհատուցման, վերականգնման, կենսամիջոցների վերականգնման աջակցության կամ օգնության այլ ձևերի վերաբերյալ առաջարկությունները:
32. ՀՏՁՀ-ին կարող են աջակցել տարբեր խորհրդատուներ տարաբնակեցման հետ կապված խնդիրներում և գործողություններում, մասնավորապես.

ա. Նախագծման խորհրդատու (ՆԽ) կպատրաստի նախագծեր ենթածրագրերի համար: ՆԽ-ն պատասխանատու կլինի ենթածրագրի տարածքի հստակեցման և գտնվելու վայրի որոշման համար՝ հաշվի առնելով տարաբնակեցման ազդեցությունից խուսափելու կամ նվազագույնի հասցնելու ՏՇ սկզբունքները: ՆԽ-ն (ենթակապալառուի միջոցով) պատասխանատու կլինի ազդակիր հողատարածքների, ակտիվների, ինչպես նաև ԾԱԵԱ-ների և նրանց ընտանիքների/տնտեսությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման համար՝ անհրաժեշտության դեպքում մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության, Ծրագրի և ենթածրագրի հետ կապված տեղեկատվության տարածման համար նախագծման փուլում,

բ. Վերահսկող խորհրդատու կներգրավվի շինարարական աշխատանքները վերահսկելու և դրա համապատասխանությունը նախագծին, ինչպես նաև Ծրագրի բոլոր սոցիալական և բնապահպանական պահանջներին ապահովելու համար: Վերահսկողության խորհրդատուն ՀՏՁՀ-ին կտրամադրի սոցիալական կառավարման մշտադիտարկման տվյալներ:

գ. Լիցենզավորված գնահատողի հետ պայմանագիր կկնքվի՝ իրականացնելու ազդեցության ենթակա ակտիվների գնահատումը և փոխհատուցման հաշվարկը՝ համաձայն ՀՀ Գնահատման օրենքի և չափորոշիչների, ԲՄՄ5-ի և սույն ՏՇ-ի, ըստ անհրաժեշտության:

դ. Հարցումների խորհրդատուի հետ պայմանագիր կկնքվի՝ իրականացնելու մարդահամար և սոցիալ-տնտեսական հետազոտություն (ՄՏՀ) ԾԱԵՏՏ-ների շրջանում և պատրաստելու հաշվետվություն արդյունքների վերաբերյալ:

ե. ՏՊ նախապատրաստման խորհրդատուի հետ պայմանագիր կկնքվի՝ մշակելու ՏՊ-ներ՝ ապահովելով համապատասխանությունը կանոնակարգերին և շահագրգիռ կողմերի պատշաճ ներգրավումը, որտեղ տարաբնակեցման գործընթացները բարդ են և ներառում են մեծ թվով ԾԱԵԱ-ներ:

զ. ՏՊ իրականացման խորհրդատուի հետ պայմանագիր կկապվի ՏՊ-ների իրականացման համար՝ ԾԱԵԱ-ների հետ շփվելու, իրավական պահանջների վերաբերյալ տեխնիկական ուղեցույց տրամադրելու և ՏՊ-ների համապատասխանությունն ապահովելու նպատակով:

է. Արտաքին մշտադիտարկման խորհրդատուի հետ պայմանագիր կկնքվի՝ մշակելու մշտադիտարկման և համապատասխանության հաշվետվություններ տարաբնակեցման առաջընթացի և ավարտի վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացնելու հետ-տարաբնակեցման սոցիալական ազդեցության գնահատումներ:

33. ՀՏՁՀ-ն կարող է վարձել կամ ներգրավել տարաբնակեցման խորհրդատվական ընկերություն կամ մասնագետ նախագծման փուլում ՏՊ պատրաստելու նպատակով: Այս դեպքում ՀՏՁՀ-ն ուղղակիորեն պայմանագիր չի կնքի լիցենզավորված գնահատողի և հետազոտության խորհրդատուի հետ, քանի որ ՆԽ-ն ենթապայմանագիր կկնքի տվյալ խորհրդատուների հետ ՏՊ պատրաստման համար: Եթե տարաբնակեցման ազդեցության շրջանակը ընդարձակ է, ՀՏՁՀ-ն կարող է պայմանագիր կնքել ՏՊ պատրաստման և իրականացման համար մասնագիտացված խորհրդատուի, ինչպես նաև արտաքին մշտադիտարկման խորհրդատուի հետ:

34. Տարաբնակեցման իրականացմանն առնչվող մյուս գերատեսչությունները հետևյալն են.

Ֆինանսների նախարարություն


35. Ֆինանսների նախարարությունը ՏՊ-ների իրականացման բյուջեները կտրամադրի ԷՆ/ԶԿ-ին ՀՀ կառավարության կողմից վերջնական ՏՊ-ների պաշտոնական հաստատումից հետո:

Կադաստրի կոմիտե

36. Կադաստրի կոմիտեն գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը անշարժ գույքի միասնական ազգային կադաստրի պահպանման ուղղությամբ: Կադաստրի կոմիտեն պատասխանատու է անշարժ գույքի սեփականության կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման համար և պատասխանատու է սեփականության պետական գրանցման համար:

Մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններ

37. Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) կաջակցեն սոցիալական ազդեցության գնահատման հետ կապված հարցումներին, ԾԱԵԱ-ների հետ խորհրդատվությունների անցկացմանը և բողոքների լուծմանը: Նրանք կարող են նաև համայնքային բյուջեներից հատկացնել գումարներ փոքրածավալ տարաբնակեցման ծախսերը փակելու համար, որի վերաբերյալ նրանց հետ քննարկումներ կանցկացվեն նախագծման նախնական փուլում: Նախագծման վաղ փուլում փոխըմբռնման հուշագիր (ՓՀ) կստորագրվի ՏԻՄ-երի հետ՝ հաստատելու նրանց հանձնառությունը փոքրածավալ տարաբնակեցման ծախսերը ծածկելու վերաբերյալ:



Գծապատկեր 1 – Տարաբնակեցման իրականացման հիմնական դերակատարները

2.2 Իրավական շրջանակ

38. Հայաստանի Հանրապետությունում հողի օտարման և տարաբնակեցման հարցերին առնչվող իրավական դաշտը հիմնականում բաղկացած է հետևյալ օրենքներից, կանոնակարգերից և իրավական ակտերից.
- 1) Հայաստանի Հանրապետության Մահմանադրություն (ընդունվել է 1995թ., վերջին փոփոխությունները 2015թ.),
 - 2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք» (ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., վերջին փոփոխությունները 2023թ.),

- 3) «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք» (ընդունվել է 02.05.2001թ., ուժի մեջ է մտել 15.06.2001թ., վերջին փոփոխությունները 2022թ.),
- 4) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 27.11.2006թ., ուժի մեջ է մտել 30.12.2006թ., վերջին փոփոխությունները 2018թ.) օրենքի վերնագիրը վերաշարադրվել է հետևյալ խմբագրմամբ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին»,
- 5) «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 04.10.2005թ., ուժի մեջ է մտել 26.11.2005թ., վերջին փոփոխությունները 2021թ.),
- 6) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., վերջին փոփոխությունները 2023թ.)

39. **ՀՀ Սահմանադրության** 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:
40. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավունք: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, ոտնահարի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:
41. Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարումը կարող է իրականացվել միայն օրենքով սահմանված գերակա հանրային շահերից բխող բացառիկ դեպքերում՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ: Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք հողի նկատմամբ սեփականության իրավունքից չեն օգտվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
42. ՀՀ քաղաքացիական և հողային օրենսգրքեր - Թեև հողը/սեփականությունը օտարելու գործընթացը հիմնականում ղեկավարվում է Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենքով, որոշ հարցեր, ներառյալ այն հարցերը, որոնք կարող են առաջանալ ծրագրի իրականացման ընթացքում, ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման հետ կապված, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսգրքերով:
43. ՀՀ հողային օրենսգիրքը (2001թ. մայիս) Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը դասակարգում է հետյալ 9 կատեգորիաների. (1) գյուղատնտեսական նշանակության, (2) բնակավայրերի, (3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, (4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, (5) հատուկ պահպանվող օբյեկտների, (6) հատուկ նշանակության, (7) անտառային, (8) ջրային, (9) պահուստային հողերի:
44. Ազդակիր հողերը դասվում են հետևյալ երեք խմբերին, ըստ իրենց սեփականության կարգավիճակի.

1) **Մասնավոր սեփականություն** հանդիսացող հողեր՝ դրանք այն հողերն են, որոնք պատկանում են անհատներին կամ ձեռնարկություններին, և դրանց նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է ՀՀ կադաստրի կոմիտեում:

2) **Համայնքային հողեր**՝ դրանք այն հողերն են, որոնք պատկանում են համայնքին և որոնց կառավարումն իրականացնում են Տեղական ինքնակառավարման մարմինները: Համայնքային հողերը կարող են լինել չօգտագործվող, օգտագործվող ընդհանուր նպատակների համար ինչպես օրինակ արոտավայրերը՝ համայնքի անդամների համար, կարող են վարձակալությամբ հանձնվել որևէ անձի կամ ձեռնարկությանը, ապօրինի (չգրանցված) կերպով օգտագործվել տնային տնտեսության/ձեռնարկության կողմից:

3) **Պետական հողեր**՝ դրանք այն հողերն են, որոնք պատկանում են ՀՀ Կառավարությանը: Պետական հողերը կարող են լինել չօգտագործվող, օգտագործվող գլխավոր ճանապարհների, պետական օբյեկտների, ռազմական և այլ նպատակների համար: Որոշ պետական հողեր կարող են տրամադրվել վարձակալությամբ կամ ապօրինի (չգրանցված) կերպով օգտագործվել տնտեսության/ձեռնարկության կողմից:

45. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածը (ինչպես նաև Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածը) սահմանում են, որ հողատարածքի սեփականատերերը/օգտագործողները կարող են պահանջել իրենց հարևան հողատարածքի սեփականատիրոջից կամ այլ հողատարածքների սեփականատերերից իրենց շնորհել այդ հողատարածքների սահմանափակ օգտագործման իրավունքը (սերվիտուտ): Սերվիտուտը կարող է հաստատվել հարևան հողամասի միջով քայլելու և ձիով անցնելու, էլեկտրաէներգիայի գծերի տեղադրման և շահագործման, ջրամատակարարման ու մեխորացիայի նպատակով հաղորդողիների և խողովակաշարերի անցկացման համար: Սերվիտուտը կարող է լինել կամավոր կամ պարտադիր, եթե կողմերի միջև սերվիտուտի համաձայնություն չի կայանում: Քաղաքացիական օրենսգրքի 212 (3) հոդվածը նախատեսում է, որ խողովակաշարերի, հանրային կարիքներին ծառայելու համար ստեղծվող ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների պահպանման և սպասարկման համար պետք է ստեղծվի պարտադիր մշտական անվճար սերվիտուտ:

46. ՀՀ հողային օրենսգրքի 102-րդ, 104-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածները ամրագրում են սեփականության օտարումը՝ միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Ելնելով ՀՀ Սահմանադրության և վերոհիշյալ իրավական ակտերի պահանջներից՝ Հայաստանի Հանրապետության կողմից ընդունվել և օտարման ու փոխհատուցման գործընթացը կարգավորող հիմնական օրենք է հանդիսանում «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը սահմանում է սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը և դրա որոշման կարգը:

47. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է, որի իրականացման սահմանադրական պայմաններն են՝ ա) օտարման իրականացումը օրենքով սահմանված կարգով, և բ) օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցման տրամադրումը:

48. Վերոհիշյալ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը՝ գերակա հանրային շահով հետապնդվող հնարավոր նպատակները: Օրենքն ամրագրում է այն հիմնարար մոտեցումը, համաձայն որի՝ ա) հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող գույքի սեփականատիրոջ շահերից, բ) հանրային շահի արդյունավետ իրականացումը հնարավոր չի լինի ապահովել առանց այդ սեփականության օտարման, գ) սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, դ) հանրային շահը գերակա պետք է ճանաչվի Կառավարության որոշմամբ, ե) բացառիկ հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:
49. Օրենքը նաև կարգավորում է օտարվող սեփականության օտարման, փոխհատուցման պայմանները և այն որոշելու կարգը: Մասնավորապես, Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ հողամասի օտարման դեպքում դրա հետ օտարման են ենթակա նաև հողամասի վրա գտնվող անշարժ գույքը (շենքեր, շինություններ, այլ ամրացված գույք և այլն), ինչպես նաև հողամասի վրա գտնվող այլ բարելավումները: Իսկ շենքի կամ շինության օտարման դեպքում, դրա հետ միասին օտարման են ենթակա նաև այդ շենքի կամ շինության սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:
50. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենքը -Սույն օրենքը տարածվում է միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքների (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն) և կարգավորում է օտարման և փոխհատուցման հիմնական հարաբերությունները: Մասնավորապես՝
- (i) Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարության սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմինը կազմում է օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու ձեռք բերողը, սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները, եթե սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ արձանագրությունը չի կազմվել: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմին կամ դատարան,
 - (ii) Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (Հոկտեմբեր 4, 2005թ.) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

(iii) Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռք բերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն (տես՝ հավելված 10): Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը,

(iv) Եթե օտարման պայմանագիրը, այն ուղարկելուց հետո երեք ամսվա ընթացքում չի կնքվում, ապա ձեռք բերողը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշիվ՝ այդ մասին պատշաճ ձևով տեղեկացնելով օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ ձեռք բերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներին: Փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ,

(v) Եթե փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում օտարման պայմանագիրը այնուամենայնիվ չի կնքվում՝ ապա ձեռք բերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը:

51. Օրենքը սահմանում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության սեփականատիրոջ իրավունքները և երաշխիքները՝ ամրագրելով օտարվող սեփականության սեփականատիրոջ իրավունքը՝ մինչև դրա օտարումը կամ օտարումից ծագող իրավունքների պետական գրանցումը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև կատարելու միայն այնպիսի բարելավումներ, որոնք ապահովում են տվյալ սեփականության օգտագործումն իր նշանակությանը:
52. Օրենքը որոշակի սահմանափակումներ է նախատեսում օտարվող սեփականության նկատմամբ, որը Կառավարության որոշմամբ սահմանած կարգով կազմված օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը կազմելու օրն է: Նշված օրվանից հետո օտարվող սեփականության վրա նշվածից ավելի կատարված բարելավումները (հաշվի առնելով օրենքով սահմանված երաշխիքները), ինչպես նաև օտարման ենթակա սեփականության նկատմամբ ծագած ծանրաբեռնվածությունների կամ երրորդ անձանց տրված կամ նրանց կողմից դրա նկատմամբ ստացած իրավունքների դիմաց փոխհատուցում չի տրվում:
53. Հայաստանի Հանրապետության կառավարությունը համաձայնում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները ՏՇ-ի համաձայն պատրաստված ՏՊ-ների լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովելու համար, ինչպես նաև ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ ԲՍՍ5-ի բոլոր համապատասխան դրույթներն իրականացնելու համար:

2.3 Ազգային օրենսդրության եւ ՀԲ-ի ԲՍՇ-ի համեմատությունը

54. Աղյուսակ 2-ը համեմատում է ՀՀ օրենսդրությունը ՀԲ ԲՍՇ-ի հետ, բացահայտում է բացթողումները և առաջարկում գործողություններ դրանց վերացման համար:

Աղյուսակ 2 - ՀՀ օրենսդրության և ՀԲ ԲՍՇ-ի համեմատությունը

ՀՀ օրենսդրությունը	ՀՖ բնապահպանական եւ սոցիալական շրջանակ	Եզրակացություն բացերի վերաբերյալ	Գործողություններ բացերը լրացնելու համար
1. Իրավասություն			
<p>(ա) Անձինք, ովքեր ունեն օրինական փաստաթղթեր սեփականության վերաբերյալ (հողի, շենքի և այլն), իրավասու են ստանալու փոխհատուցում օտարվող հողի, ծրագրի կողմից պատճառված վնասների/ապամոնտաժման և բերքի կորստի համար (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենք), կամ այն դեպքերում, երբ հողը չի օտարվում, սակայն մասնակիորեն օգտագործվում է պետական ծրագրերի կողմից (սերվիտուտ) (Քաղաքացիական օրենսգիրք (հոդվածներ 210-218), Հողային օրենսգիրք (հոդվածներ 50 և 100)),</p>	<p>ա) Անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն իրավական գրանցման կարգավիճակ (այդ թվում՝ սովորութային և ավանդական իրավունքներ, որոնք ճանաչվում են երկրի օրենսդրությամբ) ստանում են փոխհատուցում իրենց կորցրած հողի դիմաց փոխարինման արժեքի չափով,</p>	<p>Օրենքը չի տարածվում առանց օրինական իրավունքի հողօգտագործողների վրա որպես փոխհատուցման համար իրավասու անձանց</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել</p> <p>1) ՀՖ ԲՄՄ5-ի դրույթներին,</p> <p>2) ՀՀ կառավարությունը համաձայնում է կիրառել ՀՖ ԲՄՄ5-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում</p>
<p>(բ) Անձինք, ովքեր սեփականության նկատմամբ չունեն օրինական իրավունքներ, բայց կարող են օրինականացնել իրենց իրավունքներն օրենքի համաձայն Գերակա շահի վերաբերյալ որոշման ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում, իրավասու են ստանալու փոխհատուցում (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենք (հոդված 7. 4):</p>	<p>(բ) Անձինք, ովքեր չունեն իրավական գրանցման կարգավիճակ հողի նկատմամբ, սակայն այդ հողի կամ գույքի նկատմամբ պահանջներ ունեն, եթե այդ պահանջները ընդունելի են երկրի օրենսդրությամբ կամ ընդունելի են դառնում վերաբնակեցման ծրագրով նախատեսված գործընթացով, ստանում են փոխհատուցում իրենց կորցրած տարածքի համար փոխարինման արժեքի չափով:</p> <p>(գ) Անձանց, ովքեր չունեն</p>		

<p>գ) Անձինք, ովքեր կառուցել են շինություններ կամ տնկել ծառեր այլ անձանց պատկանող հողի վրա, չեն կարող ստանալ փոխհատուցում գույքի կորստի համար:</p>	<p>օրինական իրավունք կամ պահանջ իրենց կողմից զբաղեցրած հողի նկատմամբ, տրամադրվում է տարաբնակեցման աջակցություն իրենց զբաղեցրած հողի դիմաց փոխհատուցման տեսքով և անհրաժեշտության դեպքում այլ աջակցություն, եթե ծրագրի տարածքը զբաղեցրել են կասեցման օրից առաջ:</p>		
<p>2. Իրավունքներ</p>			
<p>ՀՀ օրենսդրության համաձայն՝ փոխհատուցումը վճարվում է միայն սեփականատերերին և սեփականության իրավունք ունեցող անձանց, եթե սեփականության/գույքային իրավունքները ձեռք են բերվել նախքան սեփականության չափազրման և գնահատման օրը (որը փաստացի «կասեցման օր» է համարվում), դրանից հետո կատարված բոլոր բարելավումները, որոնք գերազանցում են օրենքով նախատեսված շրջանակը, ենթակա չեն փոխհատուցման:</p>	<p>ԾԱԵԱ-երը ստանում են տարաբնակեցման աջակցություն իրենց զբաղեցրած հողի դիմաց փոխհատուցման տեսքով և, անհրաժեշտության դեպքում, այլ օգնություն՝ սույն քաղաքականությամբ սահմանված նպատակադրումների իրականացման համար, եթե նրանք զբաղեցնում են ծրագրի տարածքը մինչև կասեցման օրը:</p>	<p>ՀՀ օրենսդրության և ԲՍՍ5-ի դրույթները նույն են</p>	<p>-</p>
<p>Օտարման դեպքում համարժեք փոխհատուցում պետք է վճարվի սեփականատիրոջը. շուկայական արժեքը 15%-ով գերազանցող արժեքը կհամարվի համարժեք փոխհատուցում:</p> <p>(Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենք (հոդված 11)):</p>	<p>Փոխհատուցման չափը պետք է բավարար լինի կորցրած հողի և այլ գույքի փոխարինման համար՝ տեղական շուկայի փոխարինման արժեքի չափով:</p>	<p>ՀՀ օրենսդրությունը և ՀՀ ԲՍՍ5-ը նախատեսում են փոխհատուցում կորցրած հողերի համար: Ազգային օրենսդրությունը ավելի նպաստավոր է օրինական սեփականատեր հանդիսացող ԾԱԵԱ-երի համար:</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել ՀՀ օրենսդրությանը օրինական սեփականատերերի փոխհատուցման և շինությունների դիմաց փոխհատուցման դեպքում:</p>

<p>Օրենքով նախատեսված փոխհատուցման միակ եղանակը դրամական փոխհատուցումն է:</p>	<p>ԲՄՍ5-ը նախատեսում է հոտելյալը՝ «Երբ տարհանված անձանց ապրուստի միջոցը հողն կամ երբ հողը կոլեկտիվ սեփականություն է, Վարկառուն տարհանվածներին կառաջարկի փոխարինող հողատարածք... Այն անձանց համար, ում ապրուստը ցամաքում է, փոխարինող հող, որը համակցված ներառում է արտադրողական ներուժը, տեղակայման առավելությունները և այլ գործոններ, որոնք առնվազն համարժեք են կորստին՝ ըստ հնարավորության»:</p>	<p>Օրենքը չի ներառում հող հողի դիմաց փոխհատուցման տարբերակը կամ որևէ այլ տեսակի ոչ դրամական փոխհատուցում:</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ՀԲ ԲՄՍ5-ի դրույթներին, 2) ՀՀ կառավարությունը համաձայնում է կիրառել ՀԲ ԲՄՍ5-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում
<p>Օրենքը չի նախատեսում փոխհատուցում տնտեսական և սոցիալական ազդեցությունների, եկամուտների կամ ապրուստի միջոցների կորուստների դիմաց, և չունի դրույթներ աղքատների և անապահով խավերի կարիքների համար օգնության և/կամ նպաստների և/կամ տարաբնակեցման ծախսերի համար (տե՛ս վերը նշված ՀՀ օրենքները)</p>	<p>Համաշխարհային բանկի քաղաքականությունը պահանջում է եկամուտների/կենսամիջոցների վերականգնում, հատուկ ուշադրություն գենդերային ասպեկտներին, աղքատների ու խոցելի խավերի կարիքներին, ինչպես նաև այն ծախսերին, որոնք կատարվել են ցանկացած և բոլոր ԾԱԵԱ-ների կողմից տարաբնակեցման գործընթացում:</p>	<p>Հայաստանի օրենսդրությունը չի նախատեսում կենսամիջոցների վերականգնման որևէ դրույթ և չունի անապահով և խոցելի մարդկանց օգնության կամ աջակցության դրույթներ: Չկան օրենսդրական պահանջներ՝ ազդակիր մարդկանց կենսամիջոցները գնահատելու, տարաբնակեցման ազդեցությունները կանխատեսելու կամ տարաբնակեցման ընթացակարգերի ընթացքում</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ՀԲ ԲՄՍ5-ի դրույթներին, 2) ՀՀ կառավարությունը համաձայնում է կիրառել ՀԲ ԲՄՍ5-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում

		<p>հատուկ վերաբերմունք ցուցաբերելու կարիք ունեցող կանանց, խոցելի մարդկանց և այլ խմբերի հատուկ կարիքները լուծելու համար: Օրենքը չի պահանջում կառավարություն ից բարելավել կամ գոնե վերականգնել ազդակիր անձանց կենսամակարդակը մինչև ծրագրի վիճակին:</p>	
<p>3. Տեղեկատվության վերաբերյալ պահանջներ</p>			
<p>Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման մասին պետք է պատշաճ ձևով տեղեկացնել սեփականատերերին և գույքի նկատմամբ սեփականության իրավունքներ ունեցող անձանց՝ դրա ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Մեփականատերը և օտարվող գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձինք իրավունք ունեն մասնակցել օտարվող գույքի նկարագրության պատրաստմանը: Նկարագրության արձանագրության պատճենը պետք է ուղարկվի սեփականատիրոջը և օտարվող գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձանց: (Հանրային և պետական կարիքների համար սեփականության օտարման</p>	<p>Հողի, կառույցների և այլ գույքի քանակական վերլուծության և արժեքի որոշման հետ կապված տեղեկությունները, փոխհատուցման իրավունքները և փոխհատուցման գումարներն ու ֆինանսական աջակցությունը պետք է լիովին տրամադրվեն այն անձանց, ում դրանք առնչվում են:</p>	<p>ՀԲ ԲՄՍ5-ի և ԲՄՍ10-ի դրույթներն ավելի ըղգրկուն են քան ազգային օրենսդրությունը</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել ՀԲ ԲՄՍ5-ի և ԲՄՍ10-ի դրույթներին ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված մեխանիզմները:</p>

<p>մասին օրենքի 7-րդ հոդված)</p> <p>Քաղաքապետարանները/ գյուղապետարանները պետք է համայնքներին լրատվամիջոցներով և հանրային լուսմների միջոցով տեղեկացնեն իրենց շրջապատում ակնկալվող փոփոխությունների մասին (Կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշում):</p>			
<p>4. Բովանդակայից խորհրդատվություն</p>			
<p>«Հանրային և պետական կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում չկա առանձնահատուկ դրույթ ազդակիր համայնքներում ազդակիր անձանց համար բովանդակայից խորհրդատվություն անցկացնելու վերաբերյալ: Քաղաքապետարանները/ գյուղապետարանները պետք է համայնքներին լրատվամիջոցներով և հանրային լուսմների միջոցով տեղեկացնեն իրենց շրջապատում ակնկալվող փոփոխությունների մասին (Կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշում):</p>	<p>ԲՄՍ10-ը պահանջում է ԾԱԵԱ-ների շրջանում անցկացնել բովանդակայից խորհրդատվություն ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում</p>	<p>Հայաստանի օրենսդրության և ՀԲ ESS10-ի պահանջները տարբեր են:</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել</p> <p>1) ՀԲ ԲՄՍ10-ի դրույթներին,</p> <p>2) ՀՀ կառավարությունը համաձայնում է կիրառել ՀԲ ԲՄՍ10-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում</p>
<p>5. Վեճերի և բողոքների լուծում</p>			
<p>Վեճերի և բողոքների լուծում «Հանրության գերակա շահերի համար սեփականության օտարման մասին» օրենքը հողի օտարման գործընթացում բողոքների մեխանիզմ չի պահանջում:</p>	<p>ԲՄՍ5-ը և ԲՄՍ10-ը պահանջում են, որ յուրաքանչյուր ՏՊ պարունակի բողոքների մեխանիզմ: Ծրագիրը նկարագրում է տարհանված կամ տարաբնակեցման հետ կապված վեճերի լուծման հասանելի</p>	<p>Հայաստանի օրենսդրության և ՀԲ ESS10-ի պահանջները տարբեր են:</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել</p> <p>1) ՀԲ ԲՄՍ10-ի դրույթներին,</p> <p>2) ՀՀ կառավարությունը</p>

	<p>ընթացակարգեր: Նման բողոքների մեխանիզմները պետք է հաշվի առնեն դատական հայցերի և համայնքային ու ավանդական վեճերի կարգավորման մեխանիզմների առկայությունը:</p>		<p>համաձայնում է կիրառել ՀԲ ԲՄՍ10-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում</p>
--	---	--	---

55. Սկզբունքորեն, Հայաստանի օրենքներն ու կանոնակարգերը, որոնք վերաբերում են հողերի օտարմանը և տարաբնակեցմանը, և ՀԲ ԲՄՍ5-ը, հետևում են ազդակիր ընտանիքների կամ անձանց փոխհատուցման նպատակին, ԲՄՍ5-ը նաև վերականգնման նպատակին: Հողերի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ՀԲ ԲՄՍ5-ի միջև հիմնական տարբերությունները հետևյալն են՝ Հայաստանի օրենքները չեն հստակեցնում, թե ինչպես պետք է իրականացվի վերականգնումը: ՀՀ օրենքների և ՀԲ քաղաքականության միջև մեկ այլ էական տարբերությունն այն է, որ ՀԲ ԲՄՍ5-ը ճանաչում է իրավասու և ոչ իրավասու սեփականատերերին/օգտագործողներին, ինչպես նաև գրանցված և չգրանցված վարձակալներին, այսինքն՝ օրինական իրավունքի բացակայությունը խոչընդոտ չէ փոխհատուցման և վերականգնման համար: Կամրջելով Հայաստանի օրենքների և կանոնակարգերի և ՀԲ ԲՄՍ5-ի միջև առկա բացերը՝ այս ՏԵ-ն նախատեսում է փոխհատուցում և՛ սեփականության իրավունքով, և՛ իրավունք չունեցող հողօգտագործողներին ազդեցության ենթակա բոլոր ակտիվների համար, ինչպես նաև նախատեսում է վերականգնողական աջակցություն այդ ակտիվների չգրանցված օգտվողների համար: Ի լրումն, ՏԵ-ն նախատեսում է, որ ՏՊ-ները պետք է ներառեն համապատասխան կենսամիջոցների վերականգնման փաթեթներ ԾԱԵԱ-ների համար, որոնք կարող են խոցելի լինել և/կամ տեղափոխվելու կարիք ունեն և/կամ կարող են կրել բիզնեսի կորուստներ և/կամ կարող են լուրջ ազդեցություն ունենալ: Ավելին, թեև հանրային քննարկումներն ու խորհրդատվությունը լավ ձևակերպված չեն ՀՀ օրենքներում, նախագիծը կապահովի (պոտենցիալ) ԾԱԵԱ-ների և նրանց փաստաբանների կամ ներկայացուցիչների (օրինակ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների) պատշաճ ընդգրկումը, մասնավորապես՝ Ծրագրի ազդեցության տակ գտնվող խոցելի խմբերի, հանրային քննարկման և մասնակցության գործընթացում՝ նախքան Ծրագրի իրականացումը և դրա ընթացքում: Բացի այդ, կատեղծվի բողոքների լուծման հասանելի մեխանիզմ, և շինարարական աշխատանքները չեն սկսվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն ավարտվել Ծրագրի կամ ենթաձրագրի բոլոր փոխհատուցման և վերականգնման միջոցառումները:

3. Տարաբնակեցման պլանի պատրաստում

56. Բոլոր այն ծրագրերը, որոնք առաջացնում են ֆիզիկական կամ տնտեսական տարհանում հողի օտարման կամ ռեսուրսների հասանելիության կամ օգտագործման սահմանափակումների միջոցով, պարտավոր են պատրաստել տարաբնակեցման պլան Համաշխարհային բանկի հաստատման համար: ՏՊ-ի (կամ ՏՊ-ների) պատրաստման և իրականացման պատասխանատվությունը կրում է ՀՏՁՀ-ն: Անհրաժեշտության դեպքում, ՀՏՁՀ-ն կկիրառի իր լիազորությունները՝ համակարգելու ցանկացած այլ ներգրավված գործակալությունների, իրավասությունների կամ ծրագրի կապալառուների գործողությունները՝ ժամանակին և արդյունավետ խթանելու պլանավորումն ու իրականացումը:
57. ՏՊ-ի նախապատրաստումը սկսվում է այն բանից, երբ որոշվում է առաջարկվող նախագծի հետագիծը՝ հաստատելով, որ որոշակի տեղամաս (կամ տեղամասեր) պետք է ձեռք բերվեն՝ ծրագրի օգտագործման համար: ՀՏՁՀ-ն ի սկզբանե գնում է առաջարկվող տարածքը՝ բացահայտելու ընթացիկ օգտագործման և վարձակալության պայմանավորվածությունները և նույնականացնում է այն տարածքը (կամ տարածքները), որոնք նվազագույնի կհասցեն ֆիզիկական և տնտեսական տարհանումը: ՀՏՁՀ-ն, այնուհետև, իրականացնում է մարդահամարի հետազոտություն (անհրաժեշտության դեպքում՝ խորհրդատուի միջոցով)՝ ընտրված վայրում (կամ տարածքում) բոլոր տարհանվածներին հայտնաբերելու և հաշվառելու, ինչպես նաև գույքագրելու և գնահատելու հողը և այլ ակտիվները, որոնք պետք է ձեռք է բերվեն Օրագրի օգտագործման համար:
58. Բնապահպանական և սոցիալական գնահատման մեջ բացահայտված խնդիրները լուծելու համար ՀՏՁՀ-ն կպատրաստի Օրագրի ռիսկերին և ազդեցություններին համահունչ պլան՝
- ա) հողերի աննշան օտարում կամ հողօգտագործման սահմանափակումներ ունեցող նախագծերի համար, որոնց արդյունքում եկամուտների վրա էական ազդեցություն չի լինի: Այդպիսի գույքագրումը պետք է ներառի խորհրդատվական, անկողմնակալ և թափանցիկ գործընթացի արդյունքում ստացված ազդակիր մարդկանց իրավունքների ողջ շրջանակը, ներառյալ սովորույթի կամ պրակտիկայի վրա հիմնված, երկրորդական իրավունքները, ինչպիսիք են՝ օգտվելու կամ կենսագործունեության համար օգտագործելու իրավունքը, նպատակները, ընդհանուր իրավունքները և այլն: Մեփականության կամ բնակության և փոխհատուցման վճարումները պետք է տրվեն երկու ամուսինների կամ միայնակ տնային տնտեսությունների ղեկավարների անուններով, ինչպես նաև տարաբնակեցման այլ օգնություն, ինչպիսիք են հմտությունների ուսուցումը, վարկերի հասանելիությունը և աշխատանքի հնարավորությունները, պետք է հավասարապես հասանելի լինեն կանանց և հարմարեցվեն նրանց կարիքներին: Օրագիրը կսահմանի ազդակիր անձանց իրավասության չափանիշները, կսահմանի փոխհատուցման ընթացակարգեր և չափորոշիչներ, ինչպես նաև կներառի խորհրդատվություններ, մշտադիտարկում և բողոքների լուծման միջոցառումներ,
 - (բ) Ֆիզիկական տարհանում առաջացնող նախագծերի համար պլանը կսահմանի ազդակիր անձանց տեղափոխման հետ կապված լրացուցիչ միջոցներ,
 - (գ) Կենսամիջոցների կամ եկամուտների վրա զգալի ազդեցություն ունեցող տնտեսական տարհանումներ առաջացնող նախագծերի համար Օրագիրը կսահմանի լրացուցիչ միջոցներ՝ կապված կենսամիջոցների բարելավման կամ վերականգնման հետ, և

(դ) Այն նախագծերի համար, որոնք կարող են պարտադրել հողօգտագործման փոփոխություններ, որոնք սահմանափակում են ռեսուրսների հասանելիությունը պաշտոնապես սահմանված զբոսայգիներում կամ պահպանվող տարածքներում կամ այլ ընդհանուր սեփականության ռեսուրսներից, որոնցից տեղացիները կարող են կախված լինել կենսապահովման նպատակներով, Պլանը կսահմանի մասնակցային գործընթաց համապատասխան սահմանափակումները օգտագործման վերաբերյալ որոշելու և նման սահմանափակումների հետևանքով կենսամիջոցների վրա բացասական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ սահմանելու նպատակով:

59. Պլանը կսահմանի ֆինանսավորման և իրականացման հետ կապված դերերն ու պարտականությունները, և կներառի չնախատեսված ծախսերը բավարարելու համար չնախատեսված ֆինանսավորման միջոցառումներ, ինչպես նաև անկանխատեսելի հանգամանքներին ժամանակին և համակարգված արձագանքման միջոցառումներ, որոնք խոչընդոտում են առաջընթացը դեպի ցանկալի արդյունքներ:
60. Մարդահամարի հետազոտությունը նաև կբացահայտի ԾԱԵԱ-ների խոցելիությունը: Ծրագրի շրջանակներում խոցելի և/կամ անապահով խմբերը կարող են ներառել մարդկանց, ովքեր իրենց հանգամանքների պատճառով կարող են կրել անհամաչափ անբարենպաստ ազդեցություն ծրագրի գործողությունների պատճառով և/կամ կարող են բախվել բացառման ավելի մեծ հավանականության, քան այլ խմբերը: ՏՊ-ն կառաջարկի համապատասխան աջակցության միջոցառումներ անապահով ընտանիքներին՝ հիմնվելով հետազոտություններում ներառված կարիքների գնահատման արդյունքների վրա: Մարդահամարի տեղեկատվության ստուգաթերթը և մարդահամարի հետազոտության տվյալների ցանկը ներկայացված են համապատասխանաբար Հավելված Բ և Գ-ում:
61. Խոցելի տնային տնտեսությունները ներառում են՝
 - Կին գլխավորով տնային տնտեսություններ, որտեղ չկան աշխատունակ տարիքի անդամներ (սա չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր ծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող կամ մինչև 23 տարեկան առկա ուսուցմամբ սովորող ուսանող);
 - Տնային տնտեսություններ, որոնք գլխավորում են կենսաթոշակային տարիքի անձինք (տարեցներ) (սա չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր ծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող կամ մինչև 23 տարեկան առկա ուսուցմամբ սովորող ուսանող);
 - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նպաստ ստացող անապահով տնային տնտեսություններ. եթե սոցիալ-տնտեսական հետազոտության հիման վրա ԾԱԵՏՏ-ն ճանաչվի որպես աղքատ, բայց գրանցված չլինի Ընտանեկան նպաստների համակարգում, ՀՏԶ-ն ժամանակ կհատկացնի ԱԵՏՏ-ին գրանցվելու համար: Հենց որ այս տնային տնտեսությունները գրանցվեն Ընտանեկան նպաստի համակարգում, նրանք նպաստի իրավունք կստանան:
 - Տարհանված ընտանիքներ, որտեղ ընտանիքի բոլոր չափահաս անդամներն ունեն փախստականի կարգավիճակ:

62. Յուրաքանչյուր ՏՊ հիմնված է սույն ՏՇ-ում սահմանված սկզբունքների, պլանավորման ընթացակարգերի և իրականացման միջոցառումների վրա և սովորաբար ներառում է հետևյալ բովանդակությունը.

ա) Ծրագրի նկարագրությունը (համապատասխան քարտեզներով և նկարագրողումներով), ներառյալ ծրագրի օգտագործման համար որոշակի տեղամասերի ձեռքբերման անհրաժեշտության բացատրությունը և ձեռնարկված ջանքերը՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու հողի օտարման կամ անհրաժեշտ համարվող այլ հնարավոր ազդեցությունները:

բ) Բոլոր ԾԱԵԱ-ների, տարհանվածների և ազդեցության ենթակա հողերի և գույքի գույքագրման ու գնահատման արդյունքները: Ծրագրի ազդեցությանը ենթակա տնային տնտեսությունների մարդահամարի հետազոտությունը և գույքագրումը կարող է իրականացվել Ծրագրի թիմի սոցիալական մասնագետի կողմից, եթե տարաբնակեցման ազդեցության շրջանակը փոքր է: Այնուամենայնիվ, եթե ակնկալվում են մեծածավալ ազդեցություններ, կարող է պայմանագիր կնքվել տարաբնակեցման խորհրդատուի հետ՝ մշակելու և իրականացնելու ՏՊ-ն: Հարցումը կանցկացվի առանձին հարցազրույցներով բոլոր ԾԱԵՏՏ-ների հետ: Դա թույլ կտա բացահայտել ԾԱԵԱ-ների խոցելիությունը: ԾԱԵԱ-ների անձնական տվյալները չեն հրապարակվի: Տեղական իշխանությունները կաջակցեն ՀՏՁՀ-ին և Խորհրդատուին (եթե կիրառելի է) ԾԱԵԱ-ների հետ կապ հաստատելու և տեղեկատվության հավաքման գործընթացում: Կորուստների գույքագրման տվյալների ցանկը ներկայացված է Հավելված Դ-ում:

գ) Ռեսուրսների օգտագործման կամ հասանելիության ծրագրի հետ կապված ցանկացած սահմանափակումների նկարագրությունը:

դ) Պաշտոնավարման պայմանավորվածությունների նկարագրությունը, ներառյալ կոլեկտիվ, համայնքային կամ սովորական օգտագործման կամ սեփականության պահանջները:

ե) Տարհանված անձանց գույքի օտարման, փոխհատուցման և այլ օգնության հետ կապված համապատասխան օրենքների և կանոնակարգերի վերանայում և բացը լրացնող միջոցառումների սահմանում, որոնք անհրաժեշտ են ԲՄՍ5-ի պահանջներին համապատասխանելու համար:

զ) Հողի և ակտիվների գնահատման ընթացակարգերի և փոխհատուցման չափորոշիչների նկարագրությունն ազդեցության ենթակա ակտիվների բոլոր կատեգորիաների համար: Ազդեցության ենթակա հողերի և ակտիվների գնահատումը կարող է իրականացվել միայն լիցենզավորված գնահատողի կողմից, որը կարող է առանձին վարձվել ՀՏՁՀ-ի կողմից, եթե ՏՊ-ն պետք է մշակի ՀՏՁՀ-ն: Ազդեցության ենթակա հողերի և գույքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքի համաձայն, որը սահմանում է Հայաստանում անշարժ գույքի գնահատման գործունեության հիմունքները: Ազդեցության ենթակա ակտիվների գնահատման մեթոդաբանությունները ներկայացված են Հավելված Բ-ում:

է) Փոխհատուցման և աջակցության բոլոր այլ ձևերի իրավասության չափանիշները, ներառյալ իրավասության վերջնաժամկետը:

ը) ՏՊ իրականացման կազմակերպական միջոցառումներ և պարտականություններ:

թ) Իրականացման ժամանակացույցը:

ժ) Մոտավոր բյուջեի և ֆինանսական անկանխատեսելի գործընթացներ:

ի) Խորհրդատվության և բացահայտման միջոցառումներ:

լ) Բողոքների մեխանիզմի նկարագրությունը:

խ) Իրականացման առաջընթացի մշտադիտարկման միջոցառումները:

63. ՏՊ-ն պետք է լրացվի յուրաքանչյուր տարիանված տնային տնտեսության կամ անձանց համար անհատական փոխհատուցման փաստաթղթերի առանձին փաթեթով: Այս փաթեթների տվյալների գաղտնիությունը պետք է ապահովվի վարկառուի կողմից, որպեսզի խուսափեն տարիանված անձանց նկատմամբ որևէ վնաս պատճառելու հավանականությունից: Անկայուն, կոնֆլիկտային և բռնության միջավայրերում ՏՊ-ները պետք է նաև հստակեցնեն այն ընթացակարգերը, որոնք պետք է կիրառվեն՝ տարիանված անձանց անվտանգությունն ապահովելու համար, երբ նրանք ստանան փոխհատուցումները:

4. Իրավասություն և իրավունքներ

4.1 Իրավասություն

64. Ծրագրի շրջանակներում տարաբնակեցման առաջադրանքները կիրականացվեն համաձայն փոխհատուցման իրավասության և իրավունքների շրջանակի, որը մշակվել է ինչպես ՀՀ օրենսդրության, այնպես էլ ՀԲ ԲՄՇ 2018-ի ԲՄՄ5-ի համաձայն:
65. Ազդեցության ենթակա անձինք կարող են դասակարգվել որպես անձինք.
- ա) ովքեր ունեն հողի կամ ակտիվների նկատմամբ օրինական իրավունքներ.
 - բ) ովքեր չունեն օրինական իրավունքներ հողի կամ ակտիվների նկատմամբ, բայց ունեն պահանջներ հողի կամ ակտիվների նկատմամբ, որոնք ճանաչված կամ ճանաչելի են ազգային օրենսդրության համաձայն, կամ
 - գ) ովքեր չունեն ճանաչելի օրինական իրավունք կամ պահանջ իրենց զբաղեցրած կամ օգտագործած հողի կամ ակտիվների նկատմամբ:
66. Մարդահամարը կսահմանի ազդակիր անձանց կարգավիճակը:
67. Եթե հողի օտարումից կամ հողօգտագործման սահմանափակումներից (մշտական կամ ժամանակավոր) հնարավոր չլինի խուսափել, Վարկառուն կառաջարկի ազդակիր անձանց փոխհատուցում փոխարինման արժեքով կամ փոխհատուցում՝ համաձայն ՀՀ օրենսդրության, որն ավելի բարենպաստ է ԾԱԵԱ-ների համար, և հնարավոր այլ օգնություն, որն անհրաժեշտ կլինի իրենց կենսամակարդակը կամ ապրուստի միջոցները բարելավելու կամ գոնե վերականգնելու համար:
68. Հողամասերի և հիմնական միջոցների կատեգորիաների փոխհատուցման չափորոշիչները կբացահայտվեն և հետևողականորեն կկիրառվեն: Փոխհատուցման դրույքաչափերը կարող են ենթարկվել դեպի վեր ճշգրտման, երբ կիրառվում են բանակցային ռազմավարություններ: Բոլոր դեպքերում կփաստագրվի փոխհատուցման հաշվարկման հստակ հիմք, իսկ փոխհատուցումը կբաշխվի թափանցիկ ընթացակարգերի համաձայն:
69. Ծրագրի տարածքում ապրող բոլոր ԾԱԵԱ-ները մինչև վերջնաժամկետը կարող են դիտարկվել իրենց կորուստների փոխհատուցման և/կամ վերականգնողական օգնության համար: Օրինական իրավունքների կամ սեփականության իրավունքների բացակայությունը նրանց չի դարձնում անիրավասու իրավունքների առումով:
70. ԲՄՄ5-ն ընդգրկում է փոխհատուցման/վերականգնման ենթակա հետևյալ ուղղակի տնտեսական և սոցիալական ազդեցությունները, որոնք առաջանում են հողի հարկադիր օտարման հետևանքով.
- ա. Կացարանի տեղափոխում կամ կորուստ,
 - բ. Մշտական կամ ժամանակավոր ազդակիր հող,
 - գ. Ակտիվների կամ ակտիվների հասանելիության կորուստ, ներառյալ՝ տներ կամ այլ շինություններ, մշակաբույսեր, ծառեր կամ այլ ակտիվներ, ձեռնարկություններ և կամ արտադրության գործոններ.
 - դ. Եկամտի աղբյուրների կամ ապրուստի միջոցների կորուստ՝ անկախ նրանից, թե ազդակիր անձինք պետք է տեղափոխվեն այլ վայր, թե ոչ, կամ

ե. Պաշտոնապես սահմանազատված զբոսայգիների և պահպանվող տարածքների մուտքի կամավոր սահմանափակումը, ինչը բացասական ազդեցություն է ունենում տարհանված անձանց կենսապահովման վրա:

4.2 Կասցման օր

71. Փոխհատուցման իրավունքը կսահմանափակվի վերջնաժամկետով: ԲՍՍ5-ը ընդունում է, որ ԾԱԵԱ-ները, ովքեր զբաղեցնում են ծրագրի ազդեցության տարածքները վերջնաժամկետից/կասեցման օրից հետո, իրավասու չեն փոխհատուցման: Այն փաստը, որ Ծրագիրը սահմանելու է փոխհատուցման իրավասության կասեցման օր, ազդակիր համայնքներին կհաղորդվի նախնական հանրային քննարկումների ընթացքում: ՀՏԶ-ի և ՏԻՄ-երի կողմից նախապես հրապարակայնորեն կհայտարարվի կասեցման օրվա ամսաթիվը, և ԾԱԵԱ-ների և ակտիվների գույքագրման մարդահամարի հետազոտությունը կսկսվի հայտարարությունից անմիջապես հետո: Վերջնական ամսաթիվը կլինի ԾԱԵԱ-ների մարդահամարի հետազոտության մեկնարկի ամսաթիվը: Ազդեցության ենթակա ակտիվների նկարագրության արձանագրությունները կպատրաստվեն ակտիվների գույքագրման ընթացքում: Ազդեցության ենթարկված ակտիվների մասին տեղեկատվությունը կգրանցվի ԾԱԵԱ-ի և/կամ ՏԻՄ-ի ներկայացուցչի ներկայությամբ: Այնուհետև արձանագրությունը կստորագրվի ԾԱԵԱ-ի և/կամ համայնքի ներկայացուցչի կողմից, եթե ԾԱԵԱ-ն անհասանելի է: Ամեն ինչ արվելու է ԾԱԵԱ-ի համար հարմար պահին ստորագրումը կազմակերպելու և ստորագրումը հետաձգելու մինչև ԾԱԵԱ-ի հասանելիությունը: Եթե ԾԱԵԱ-ն մնում է անհասանելի, ապա ԾԱԵԱ-ի բացակայության պատճառները պետք է փաստաթղթավորվեն և կցվեն արձանագրությանը:
72. Բոլոր մարդիկ, կազմակերպությունները, որոնք տեղափոխվում են Ծրագրի տարածք և/կամ այն մարդիկ, ովքեր շինարարական աշխատանքներ են իրականացնում, ծառեր տնկում և այլն, կասեցման օրից հետո, իրավասու չեն որպես ԾԱԵԱ և, հետևաբար, որևէ փոխհատուցում չեն ստանա: Այնուամենայնիվ, նրանց նախապես կտեղեկացվի՝ խնդրելով ազատել իրենց տարածքները և ապամոնտաժել ազդակիր կառույցները նախքան Ծրագրի իրականացումը: Նրանց ապամոնտաժված կառույցների նյութերը չեն առգրավվելու, նրանք չեն վճարելու ոչ մի տուգանք կամ պատժամիջոց: Դա հեշտացնելու համար Ծրագիրը նրանց տրամադրության տակ կդնի նրանց տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցները:

4.3 Իրավունքներ

73. Փոխհատուցման իրավունքները հիմնված են այն նախադրյալի վրա, որ տարաբնակեցման, վերականգնման և փոխհատուցման ծրագրերը պետք է բարելավեն կամ, առնվազն, վերականգնեն ԾԱԵԱ-ների նախածրագրային կենսամակարդակը և ապահովեն նրանց մասնակցությունը Ծրագրի օգուտներին: Բոլոր այն ԾԱԵԱ-ները, որոնք իրավասու են փոխհատուցման և/կամ վերականգնման համար, կփոխհատուցվեն մինչև շինարարական աշխատանքները: Որոշ ԾԱԵԱ-ների կտրամադրվի փոխհատուցում իրենց կորցրած հողի համար և այլ օգնություն՝ համաձայն պատրաստված Տարաբնակեցման պլանի: Մյուս ԾԱԵԱ-ներին (նրանց, ովքեր ճանաչելի պահանջ չունեն) նույնպես

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՒՆՏՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐԱԿԱՆ ԾՐԱԲԻՐ

կտրամադրվի տարաբնակեցման աջակցություն՝ իրենց զբաղեցրած հողի փոխհատուցման փոխարեն, և այլ օգնություն՝ համաձայն ՏՊ-ի: Բոլոր ԾԱԵԱ-ները իրավասու կլինեն փոխհատուցում ստանալ այլ ակտիվների կորստի համար, բացի հողից: Իրավունքների մատրիցը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 3. Իրավունքների մատրից

Կորստի տեսակը	Կիրառում Առանձնահատկություն	ԾԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
Հող			
<p>Հողի մշտական կորուստ (գյուղատնտեսական, առևտրային, բնակելի կամ այլ)</p>	<p>ԾԱԵԱ-ներ, ովքեր կորցնում են հող՝ անկախ ազդեցության չափից</p>	<p>Սեփականության իրավունքը գրանցած անձիք</p>	<p>* Դրամական փոխհատուցում լրիվ փոխարինման արժեքով կամ</p> <p>* Դրամական փոխհատուցում՝ համաձայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 27.11.2006թ., ուժի մեջ է մտել 30.12.2006թ.), որն ավելի բարենպաստ պայմաններ է առաջարկում ԾԱԵԱ-ի համար, կամ.</p> <p>* Փոխարինող հողատարածք նույն արժեքով ԾԱԵԱ-ների համար ընդունվելի վայրում, հնարավորության դեպքում:</p> <p>* Եթե մնացող հողակտորները դառնան անօգտագործելի, ապա Ծրագիրը ձեռք կբերի ամբողջ հողամասը ԾԱԵԱ-ի պահանջով՝ համաձայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի:</p> <p>* Եթե սոցիալ-տնտեսական ելակետային հետազոտությունը բացահայտի, որ օտարվող հողամասը ԾԱԵԱ-ների համար ապրուստի հիմնական աղբյուրն է, Ծրագիրը ԾԱԵԱ-ներին կտրամադրի հետագա տեխնիկական և/կամ կենսամիջոցների վերականգնման աջակցություն՝ համաձայն ՏՊ-ի կամ ԿԲՊ-ի:</p>
		<p>Սեփականատեր, որի իրավունքները ենթակա են գրանցման՝ օրենքով սահմանված կարգով</p>	<p>* ԾԱԵԱ-ները կգրանցեն իրենց իրավունքներն օրենքով սահմանված կարգով և կստանան</p> <p>* Դրամական փոխհատուցում լրիվ փոխարինման արժեքով կամ</p> <p>* Դրամական փոխհատուցում՝ համաձայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 27.11.2006թ.,</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐԱԿԱՆ ԾՐԱԲԻՐ

Կորստի տեսակը	Կիրառում Առանձնահատկություն	ԾԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
			<p>ուժի մեջ է մտել 30.12.2006թ.), որն ավելի բարենպաստ պայմաններ է առաջարկում ԾԱԵԱ-ի համար, կամ.</p> <p>* Փոխարինող հողատարածք նույն արժեքով ԾԱԵԱ-ների համար ընդունելի վայրում, հնարավորության դեպքում:</p> <p>* Եթե մնացող հողակտորները դառնան անօգտագործելի, ապա Ծրագիրը ձեռք կբերի ամբողջ հողամասը ԾԱԵԱ-ի պահանջով՝ համաձայն «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի:</p> <p>* Եթե սոցիալ-տնտեսական ելակետային հետազոտությունը բացահայտի, որ օտարվող հողամասը ԾԱԵԱ-ների համար ապրուստի հիմնական աղբյուրն է, Ծրագիրը ԾԱԵԱ-ների կտրամադրի հետագա տեխնիկական և/կամ կենսամիջոցների վերականգնման աջակցություն՝ համաձայն ՏՊ-ի կամ ԿԲՊ-ի:</p>
		Վարձակալներ	<p>*Վարձակալության վճարը¹⁷ 3 ամսվա համար և միջոցառումներ՝ կենսամիջոցների ամբողջական վերականգնումն ապահովելու համար՝ ըստ անհատական պլանի, ինչպես անհրաժեշտ է համարվել ՏՊ-ի պատրաստման ժամանակ:</p> <p>*Եթե վարձակալները նախապես վճարել են վարձավճարը, ապա ցանկացած չօգտագործված մասը պետք է վերադարձվի նրանց սեփականատիրոջ կողմից կամ որպես փոխհատուցում Ծրագրից:</p>
		Անօրինական բնակիչ/ԾԱԵԱ առանց գրանցման կամ օրինական փաստաթղթավորման/օրինականացման ոչ ենթակա	<p>* Հողօգտագործման կորստի համար վերականգնման միանվագ նպաստ, որը հավասար է մեկ բերքի շուկայական արժեքին (ի լրումն բերքի փոխհատուցման), անհրաժեշտության դեպքում լրացուցիչ վերականգնման օգնություն՝ առկա եկամտը/կենսամիջոցների վերականգնումն ապահովելու նպատակով (կորոշվի ՏՊ-ում)</p>

¹⁷ Վարձակալ ու թյ ան վճարը հավասար էլ ինի պք մանագրայ ին անսպան վարձավճարի չ ալին: Այ ն դեպքու մ, երբ վարձակալ ը պք մանագիր չ ու նի, վարձակալ ու թյ ան վճարի հսք վարկը հիմնված է սարածաքջանու մ հողի վարձակալ ու թյ ան շու կպ սկան գնի վրա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԱՄԵՂՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՎ ՔԱՆՈՒՑՎՈՐՆԵՐ ԾՐԱԲԻՐ

Կորստի տեսակը	Կիրառում Առանձնահատկություն	ԾԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
		սեփականատեր	<p>*Միանվագ ինքնավերաբնակեցման նպաստ դրամով, որը հավասար է 12 ամսվա՝ 5 հոգուց բաղկացած ընտանիքի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին¹⁸, ինչպես սահմանված է ազգային օրենսդրությամբ:</p> <p>*Անհատական պլանի համաձայն կենսամիջոցների լիարժեք վերականգնումն ապահովելու համար նախատեսված միջոցառումներ: Փոխհատուցման այս ծախսերը կփակվեն մասնավոր ներդրողի կողմից:</p>
Հողի ժամանակավոր կորուստ	ԾԱԵԱ-ներ, ովքեր ժամանակավորապես կորցնում են հողօգտագործման հնարավորությունը	Սեփականատերեր և գրանցված վարձակալներ	<p>* Ազդեցության ենթակա հողերը և համայնքային ենթակառուցվածքները կվերականգնվեն՝ մինչ ծրագրային վիճակին:</p> <p>* Վարձակալությունը պետք է համաձայնեցվի հողի սեփականատիրոջ/վարձակալի և Կապալառուի միջև, որը հավասար է շուկայական արժեքի հիման վրա կորցրած եկամուտին (օրինակ՝ կորցրած բերքի փոխհատուցում միջին բերքատվություն/հեկտար)</p> <p>*Կորած ակտիվների դրամական փոխհատուցում (օրինակ՝ բերք)*</p>
		Զգրանցված հողօգտագործողներ	<p>* Ազդեցության ենթակա հողերը և համայնքային ենթակառուցվածքները կվերականգնվեն՝ մինչ ծրագրային վիճակին:</p> <p>*Կորած ակտիվների դրամական փոխհատուցում (օրինակ՝ բերք)*</p>
Շենքեր և շինություններ			
Բնակելի և ոչ բնակելի շենքեր և շինություններ	ԾԱԵԱ-ներ, ովքեր կորցնում են բնակելի տունը, ունեցվածքը	Գրանցված շինությունների սեփականատերեր	<p>*Ազդեցության ենթակա շինության և այլ հիմնական միջոցների փոխարինման դրույքաչափերով դրամական փոխհատուցում՝ առանց հանվող շինանյութերի, մշակվածության և գործարքի ծախսերի, գումարած փոխարինման արժեքի 15%-ը:</p> <p>*Մասնակի ազդեցությունների դեպքում լիարժեք</p>

¹⁸ Հաշվարկի համար նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կվերցվի ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքի վեբջին հասցեի վրա՝ www.armstat.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԱՆԵՐՁՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐՆԵՐԻ ԾՐԱԲԻՐ

Կորստի տեսակը	Կիրառում Առանձնահատկություն	ԾԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
	և/կամ շենքին/կառույցի հետ կապված եկամուտները	Զգրանցված շինությունների օգտագործողներ	<p>դրամական օգնություն՝ մնացած շինությունը վերականգնելու համար:</p> <p>* Հատուցման մեջ ներառվելու է կորցրած ջրի և էլեկտրաէներգիայի միացման արժեքը:</p> <p>* Ազդեցության ենթակա շինության և այլ հիմնական միջոցների փոխարինման դրույքաչափերով դրամական փոխհատուցում՝ առանց հանվող շինանյութերի, մաշվածության և գործարքի ծախսերի, գումարած փոխարինման արժեքի 15%-ը:</p> <p>* Մասնակի ազդեցությունների դեպքում լիարժեք դրամական օգնություն՝ մնացած շինությունը վերականգնելու համար:</p> <p>* Հատուցման մեջ ներառվելու է կորցրած ջրի և էլեկտրաէներգիայի միացման արժեքը:</p>
Համայնքային ենթակառուցվածքի / ընդհանուր սեփականության ռեսուրսների կորուստ			
Ընդհանուր սեփականության ռեսուրսների կորուստ	Համայնքային/ հանրային ակտիվներ	Համայնքային/ պետական	Համայնքի հետ խորհրդակցելով կորցրած կառույցի վերակառուցում և դրա հիմնական գործառնությունների վերականգնում.
Եկամտի և կենսամիջոցների կորուստ			
Բերք	Ազդակիր փաստացի բերքի կամ ակնկալվող բերքի եկամուտներ ի կորուստ	Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից	<p>* Բերքի փոխհատուցումը դրամով՝ փաստացի կամ ակնկալվող բերքի համախառն շուկայական արժեքով մեկ տարվա համար, որը պետք է վճարվի ինչպես հողատերերին, այնպես էլ վարձակալներին՝ հիմնվելով նրանց բաժնեմասերի վերաբերյալ պայմանագրերի վրա:</p> <p>* Փոխհատուցումը կտրամադրվի անկախ սպասվող բերքահավաքի ժամանակից:</p> <p>* Լրացուցիչ վերականգնողական օգնություն՝ ըստ անհրաժեշտության՝ գոյություն ունեցող եկամտի/ կենսամիջոցների վերականգնումն ապահովելու համար (կորոշվի ՏՊ-ում):</p>
Ծառեր	Ազդակիր ծառեր	Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից	<p>* Դրամական փոխհատուցում համախառն շուկայական արժեքով՝ ելնելով ծառերի տեսակից, տարիքից և արտադրողական արժեքից:</p> <p>* Լրացուցիչ վերականգնողական օգնություն՝ ըստ</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱԵՐՁՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻ ՏՎՈՐԱԿԻ ԾՐԱԿԻ

Կորստի տեսակը	Կիրառում Առանձնահատկություն	ԾԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
			անհրաժեշտության՝ գոյություն ունեցող եկամտի/կենսամիջոցների վերականգնումն ապահովելու համար (կորոշվի ՏՊ-ում):
Բիզնես/զբաղվածություն	Բիզնեսի վարձակալած վայրի կորուստ, բիզնեսի կորուստ կամ աշխատանքի կորուստ	Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից	<p>*Վարձակալությամբ տրված բիզնես վայրի (կրպակ, կառույց և այլն) սեփականատեր.</p> <p>(i) մշտական ազդեցություն. 1 տարվա վարձավճարի դրամական փոխհատուցում.</p> <p>(ii) ժամանակավոր ազդեցություն. վարձակալության վճարի դրամական փոխհատուցում բիզնեսի ընդհատման ամիսների համար (մինչև 1 տարի):</p> <p>*Մշակցություն բիզնեսի տեղափոխման ժամանակ (կորոշվի ՏՊ-ում)</p> <p>Բիզնեսի սեփականատեր.</p> <p>(i) մշտական ազդեցություն. 1 տարվա զուտ եկամտի չափով դրամական փոխհատուցում.</p> <p>(ii) ժամանակավոր ազդեցություն. զուտ եկամտի դրամական փոխհատուցում բիզնեսի ընդհատման ամիսների համար (մինչև 1 տարի):</p> <p>*Գնահատումը պետք է հիմնված լինի հարկային հայտարարագրի վրա կամ դրա բացակայության դեպքում հինգ հոգանոց տնային տնտեսության նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի վրա (համապատասխան ճշգրտումներ կարվեն ավելի մեծ տնային տնտեսությունների դեպքում):</p> <p>*Մշակցություն բիզնեսի տեղափոխման ժամանակ (կորոշվի ՏՊ-ում)</p> <p>Զբաղվածություն.</p> <p>*Մշտական աշխատողներ</p> <p>փոխհատուցում կորցրած աշխատավարձի համար, որը հավասար է 3 ամսվա կանոնավոր աշխատավարձին կամ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին հինգ հոգանոց տնային տնտեսության համար (համապատասխան ճշգրտումներ կարվեն ավելի մեծ տնային տնտեսությունների համար):</p> <p>*Ե՛վ ձեռնարկատերերի, և՛ աշխատողների համար Միջոցառումներ են նախատեսվում</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐՆԵՐ ԾՐԱԲԻՐ

Կորստի տեսակը	Կիրառում Առանձնահատկություն	ԾԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
			ապահովելու կենսամիջոցների ամբողջական վերականգնումը:
Հանրային վայրեր մուտքի սահմանափակում	Պաշտոնապես սահմանազատված այգիների և պահպանվող տարածքների մուտքի հարկադիր սահմանափակումները բացասական ազդեցություն են ունենում ԾԱԵԱ-ների կենսամիջոցների վրա	Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից	*Միջոցներ՝ աջակցելու ԾԱԵԱ-ներին անհատական ծրագրերով համապատասխան կենսապահովման միջոցները վերականգնելու ջանքերում:
Աջակցություն			
Վերաբնակեցում/տեղափոխություն	Տրանսպորտային/փոխադրման ծախսեր	Բոլոր ԾԱԵԱ-ները, ովքեր պետք է պահանջում են բնակության կամ բիզնեսի/տնտեսական գործունեության վայրից տեղափոխվեն	* Տեղափոխման պատճառով տրանսպորտային և ապրուստի ծախսերը հոգավոր համար դրամական փոխհատուցման տրամադրում, ժամանակահատվածը կորոշվի ՏՀ-ում:
Խոցելի անձնանց նպաստներ	Բացահայտվում է ԾԱԵԱ-ների մարդահամարի ընթացքում	Աղքատության շեմից ցածր ԾԱԵԱ, միկոդմանի ծնողազուրկ տնային տնտեսություններ, հաշմանդամներ, միայնակ ապրող տարեցներ,	* Հինգ հոգանոց ընտանիքի համար նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին համարժեք 3 ամսվա նպաստ: Սա լրացուցիչ նպաստ է այս մատրիցով ներկայացված բոլոր մյուս իրավունքներին: *Օրագրի հետ կապված աշխատատեղերում զբաղվածության առաջնահերթություն, վերապատրաստման հնարավորություններ, ինքնազբաղվածություն և աշխատավարձով աշխատանքի առաջարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՒՄԵՐՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐՄԵՆՏԻ ՕՐԱԿԻՐ

Կորստի տեսակը	Կիրառում Առանձնահատկություն	ԾԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցման իրավունքները
		փախստականներ ¹⁹	*Վերականգնման օգնության փաթեթը պետք է որոշվի դեպք առ դեպք վերլուծության հիման վրա՝ կախված ազդեցության տեսակից, նշանակությունից և անհրաժեշտ աջակցությունից:
Տան վարձակալներ		Տուն վարձած վարձակալներ	* Միանվագ դրամական աջակցության տրամադրում երեք ամսվա վարձավճարի չափով՝ տարածքում գործող շուկայական դրույքաչափով և աջակցություն այլընտրանքային կացարանների հայտնաբերման հարցում:
Ժամանակավոր ազդեցություն շինարարության ընթացքում		Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից	* Պատշաճ փոխհատուցումը կգնահատվի և կվճարվի սույն ՏՇ համաձայն շինարարության ընթացքում կամ դրանից առաջ, եթե նախապես բացահայտվել է:
Տարաբնակեցման չկանխատեսված ազդեցություններ		Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից	* ՀՏԶՀ-ն և շինարարության կապալառուն հաշվի են առնելու և մեղմացնելու/փոխհատուցելու են ծրագրի ընթացքում չկանխատեսված տարաբնակեցման ազդեցությունները

74. Անձինք, ովքեր մուտք են գործում տարածք կասեցման օրից հետո, տարաբնակեցման կամ այլ ձևի օգնության իրավունք չունեն:
75. Լրացուցիչ պլանավորման միջոցառումները պետք է ներառվեն ՏՊ-ներում ֆիզիկական տարաբնակեցում կամ զգալի տնտեսական տարհանում առաջացնող նախագծերի համար, ինչպես նկարագրված է ստորև:
76. Ֆիզիկական տարաբնակեցում առաջացնող նախագծերի համար ՏՊ-ն պետք է ներառի պլանավորման միջոցառումներ՝ կապված հետևյալի հետ՝ հաշվի առնելով ծրագրի հանգամանքները.

¹⁹ Կին գլխավորով սնայ ին սնտեսու յոյ ու ններ, որսեղ չ կան սըխատու նակ տարիքի անդամներ (սաչ ի ներառու մ ՀՀ զինված ու ժերու մ պրստոյի ծապ ու յոյ ու ն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաբմանդամու յոյ ու ն ու նեցող կամ մինչ և 23 տարեկան սեկատու սու ցմամբ սովորող ու սանող); Տնայ ին սնտեսու յոյ ու ններ, որոնք գլխավորու մ են կենսաթոշակայ ին տարիքի անձինք (տարեցներ) (սաչ ի ներառու մ ՀՀ զինված ու ժերու մ պրստոյի ծապ ու յոյ ու ն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաբմանդամու յոյ ու ն ու նեցող կամ մինչ և 23 տարեկան սեկատու սու ցմամբ սովորող ու սանող); ՀՀ սըխատուքի և սոցիալ ակն հարցերի նախարարու յոյ սն Հնտանեկան նպաստների համակարգու մ հաբվածված և ՀՀ օրենսդրու յոյ ակբ սահմանված կարգով համապատախան նպատ ստոցող սնապեով սնայ ին սնտեսու յոյ ու ններ, տարհանված ընտանիքներ, որսեղ ընտանիքի բոլ որ չ ախեսա սնդամներն ու նեն փախստականի կարգավիճակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԱՄԵՆՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐՆԵՐԻ ՕՐԱԿԻ

ա) Տարհանման միջոցառումների նկարագրությունը, ներառյալ տարհանված անձանց հասանելի տարբերակները, և ներառյալ տեղափոխման կամ այլ ծախսերի անցումային աջակցությունը,

բ) Միջոցներ՝ բարելավելու կենսամակարդակը և այլ կերպ լուծելու աղքատ կամ խոցելի տնային տնտեսությունների վերաբնակեցման առանձնահատուկ կարիքները, ներառյալ միջոցներ՝ ապահովելու, որ փոխարինող բնակարանները առնվազն համապատասխանեն համայնքի նվազագույն չափանիշներին և անվտանգության տեսակետից անվտանգ վայրում լինեն,

գ) Ծրագրի նախագծի միջոցառումների նկարագրությունը, որոնք նպատակաուղղված են բարելավելու կենսամակարդակը, համայնքային ծառայությունների կամ հաստատությունների հասանելիությունը կամ դրանց գործունեությունը կամ Ծրագրին առնչվող այլ օգուտների տրամադրումը,

դ) Ցանկացած միջոց, որն անհրաժեշտ է հյուրընկալող համայնքների վրա տարաբնակեցման ազդեցությունները լուծելու համար:

77. Կենսամիջոցների կամ եկամուտների ստեղծման վրա ազդող ծրագրերի դեպքում, ՏՊ-ն կներառի միջոցներ, որոնք թույլ կտան ԾԱԵԱ-ներին բարելավել կամ գոնե վերականգնել իրենց եկամուտները կամ ապրուստի միջոցները:

78. Տնտեսապես տարհանված անձինք, ովքեր բախվում են ակտիվների կամ դրանց հասանելիության կորստի, կփոխհատուցվեն փոխարինման արժեքով՝ (ա) այն դեպքերում, երբ հողի ձեռքբերումը կամ հողօգտագործման սահմանափակումները ազդում են առևտրային ձեռնարկությունների վրա, ազդակիր ձեռնարկատերերը կփոխհատուցվեն կենսունակ այլընտրանքային տեղանքի հայտնաբերման ծախսերի համար. անցումային ժամանակահատվածում կորցրած զուտ եկամտի համար, կայանի/կրպակի, մեքենաների կամ այլ սարքավորումների տեղափոխման և վերատեղադրման ծախսերի համար. և առևտրային գործունեության վերականգնման համար: Ազդեցության ենթակա աշխատակիցները կստանան օգնություն աշխատավարձի ժամանակավոր կորստի համար և, անհրաժեշտության դեպքում, օգնություն՝ զբաղվածության այլընտրանքային հնարավորությունների բացահայտման հարցում. բ) այն դեպքերում, որոնք վերաբերում են օրինական իրավունքներով կամ հողի նկատմամբ պահանջներ ունեցող անձանց, որոնք ճանաչված կամ ճանաչելի են ազգային օրենսդրության համաձայն, կհատկացվի փոխարինող գույք (օրինակ՝ գյուղատնտեսական կամ առևտրային օբյեկտներ) հավասար կամ ավելի մեծ արժեքով, կամ, անհրաժեշտության դեպքում, դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով. և (գ) Տնտեսապես տարհանված անձինք, ովքեր չունեն օրինականորեն ճանաչելի պահանջներ հողի նկատմամբ, կփոխհատուցվեն հողից բացի այլ կորցրած ակտիվների համար (ինչպիսիք են բերքը, ոռոգման ենթակառուցվածքները և հողի վրա կատարված այլ բարելավումները) փոխարինման արժեքով:

79. Տնտեսական զգալի տեղափոխություն առաջացնող նախագծերի համար ՏՊ-ն պետք է նկարագրի հետևյալը (ըստ համապատասխանության).

ա) կենսամիջոցների հետ կապված հավանական ազդեցությունների մասշտաբը և շրջանակը, ներառյալ սպառման կամ շուկայի համար գյուղատնտեսական արտադրանքը, առևտրային գործունեության բոլոր ձևերը և բնական ռեսուրսների օգտագործումը կենսապահովման նպատակով,

բ) Կենսամիջոցների աջակցության տարբերակները (օրինակ՝ զբաղվածություն, ուսուցում, փոքր բիզնեսի սատարում, աջակցություն համարժեք արտադրական արժեքով փոխարինող

հողատարածք տրամադրելու հարցում և այլն), որոնք հասանելի են գյուղատնտեսական հողերը կորցնող անձանց կամ ռեսուրսների մատչելիությունը,

զ) Աջակցության միջոցներ, որոնք հասանելի են առևտրային ձեռնարկություններին (և աշխատողներին), որոնք տուժել են ակտիվների կամ բիզնես հնարավորությունների կորստից ուղղակիորեն կապված հողի ձեռքբերման կամ ծրագրի շինարարության հետ,

դ) Ծրագրի միջոցառումներ՝ նպաստելու տարհանված անձանց կամ համայնքների արտադրողականության կամ եկամուտների բարելավմանը:

4.4 Տարաբնակեցման պլանի իրականացումը

80. ՀՏԶ-ն կձևավորի խումբ, որը կգործի որպես ՏՊ իրականացման խումբ (ՏՊԻԽ) և կիրականացնի Ծրագրի հաստատված ՏՊ-ն(ները): ՏՊԻԽ-ն աշխատելու է ՀՏԶ-ի և ՀԲ-ի հսկողության ներքո: ՏՊ-ում նշված բոլոր գործողությունները պետք է իրականացվեն ՀՀ պետական բյուջեից, ՏԻՄ-երի բյուջեներից կամ վարկային միջոցներից և ավարտվեն մինչև շինարարական աշխատանքների սկսվելը: Կկատարվեն հետևյալ գործողությունները.

- Մանրակրկիտ խորհրդատվություն ԾԱԵԱ-ների և տեղական իշխանությունների հետ: Հասարակությանն անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում և թափանցիկ ու ժամանակին տեղեկացվածության բարձրացման հաղորդակցություն տարաբնակեցման խնդիրների շուրջ բոլոր ազդակիր համայնքների (ոչ միայն ԾԱԵԱ-ների) հետ,

- ՏՊ մարդահամարի և ակտիվների գույքագրման տվյալների ստուգում,

- Կադաստրային և տեղագրական հետազոտությունների կատարում և չափագրման ու գույքագրման տվյալների ճշգրտում, եթե պահանջվում է հնարավոր նախագծային փոփոխություններով.

- Պայմանագրերի և/կամ համաձայնագրերի պատրաստում, որոնք պետք է ստորագրվեն ԾԱԵԱ-ների կողմից, բանակցություններ և համաձայնեցումներ ԾԱԵԱ-ների հետ,

- Անհրաժեշտության դեպքում պատրաստել փաստաթղթեր նոր հողամասերի գրանցման կամ հողամասի համար սերվիտուտի կադաստրային գրանցման համար պահանջվող փաստաթղթերի պատրաստում,

- Փոխհատուցում. Դրամական փոխհատուցումները կվճարվեն բանկային փոխանցումով: Եթե ԾԱԵԱ-ն չունի բանկային հաշիվ, ապա Ծրագրի կողմից այն անվճար կբացվի նրա համար,

- Բողոքների ընթացակարգերի վերահսկում,

- Գործերի դատական քննություն, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում,

- Ենթակառուցվածքների կառուցում (տարաբնակեցման անհրաժեշտության դեպքում) և ԾԱԵԱ-ների տեղափոխման կազմակերպում.

- ՏՊ ավարտական հաշվետվության պատրաստում:

81. Հողատարածքի և հարակից ակտիվների ձեռքբերումը տեղի կունենա միայն այն բանից հետո, երբ սույն ԲՄՄ-ին համապատասխան փոխհատուցումը հասանելի կլինի, և, անհրաժեշտության դեպքում,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԱՄԱՆՉՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱԲԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐԱԿԱՆ ԾՐԱԲԻՐ

տարհանված մարդկանց տարաբնակեցումը կիրականացվի և տարհանվածներին փոխադրման աջակցություն կտրամադրվի ի լրումն փոխհատուցմանը: Նաև կենսամիջոցների վերականգնման և բարելավման ծրագրերը կսկսվեն ժամանակին, որպեսզի ապահովվի, որ ազդակիր անձինք բավականաչափ պատրաստված լինեն օգտվելու այլընտրանքային կենսապահովման հնարավորություններից, եթե նման անհրաժեշտություն առաջանա²⁰:

82. Ստորև աղյուսակը ներկայացնում է քայլերի և պարտականությունների ցանկը ՏՊ պատրաստման և իրականացման նպատակով առաջարկվող յուրաքանչյուր առաջադրանքի/քայլի համար:

Աղյուսակ 4 – ՏՊ-ի պատրաստման և իրականացման առաջադրանքների ամփոփում

N	Գործողություն	Պատասխանատվություն*
Ա	Տարաբնակեցման պլանի պատրաստում	
3	Մարդահամարի և կորուստների մանրամասն գույքագրման հետազոտության գործիքների պատրաստում, ՏՊ պատրաստման ժամանակացույց	Նախագծման խորհրդատու/ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ
4	Կադաստրային տեղեկատվության և քարտեզների ձեռքբերում	ՀՏԶՀ (ՏՊ խորհրդատու, ըստ անհրաժեշտության)
6	Համայնքի ղեկավարների և ազդեցության ենթակա անձանց ներկայացուցիչների հետ անցնել առաջարկվող օտարման գոտով	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ
7	Անհրաժեշտության դեպքում ունենալ կառավարության որոշում նախնական ուսումնասիրություններ սկսելու համար	ՀՀ կառավարություն, ԶԿ
8	Կասեցման օրվա հայտարարում	Համայնք, ՀՏԶՀ, Կառավարություն
9	Հանրային լսումներ ԾԱԵԱ-ների հետ	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ
10	Մարդահամարի/ցուցակագրման անցկացում	ՏՊ խորհրդատու
11	Հողի սեփականության ստուգում, չգրանցված հողօգտագործողների պարզում, հողօգտագործման օրինականացում ըստ կիրառելիության	ՏՊ խորհրդատու
12	Մանրամասն չափագրման իրականացում	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ լիցենզավորված ընկերության միջոցով
13	Գույքագրման իրականացում	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ լիցենզավորված ընկերության միջոցով
14	Որոշում հանրային գերակա շահի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության	ՀՀ կառավարություն, ԶԿ կողմից պատրաստված
15	Ազդեցության ենթակա գույքի գնահատում	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ լիցենզավորված ընկերության միջոցով
16	Ակտիվների նկարագրության արձանագրությունների ստորագրում	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ

²⁰ ԲԱԵ, պրոբերո թյ ու ն 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՍՏՐՉՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿՈՒՄԻՏՎՈՐՆԵՐԻ ԾՐԱԻՐ

17	ՏՊ հաշվետվության պատրաստում	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ
18	ՏՊ հաստատումը ՀԲ կողմից	ՀԲ
19	ՏՊ հանրայնացում	ՀՏԶՀ/ԶԿ
20	ՏՊ լրամշակում շահակիրների դիտողությունների համաձայն	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ
21	ՀԲ վերջնական վերանայում և հաստատում	ՀԲ
22	ՏՊ ներկայացում ՀՀ կառավարությանն ըստ անհրաժեշտության կամ ՏԻՄ-երին	ԶԿ/ԷՆ
Բ	ՏՊ իրականացման նախապատրաստական գործողություններ	
1	ՏՊ իրականացման խմբի ստեղծում	ՀՏԶՀ
2	Բողոքների մեխանիզմի ստեղծում, ներառյալ բողոքների լուծման հանձնաժողովը	ՀՏԶՀ
3	Վճարման մեթոդի և կոմերցիոն բանկի նույնականացում փոխհատուցման գումարները փոխանցելու համար	ՀՏԶՀ
Գ	ՏՊ իրականացում	
1	Իրավական կարգավորումներ/ հողի օտարման պայմանագրերի ստորագրում	ՏՊ խորհրդատու/ՀՏԶՀ
2	Փոխհատուցման վճարումներ	ՀՏԶՀ/ՏՊԻԽ
3	Ավարտական հաշվետվության պատրաստում	ՀՏԶՀ
4	Ավարտական հաշվետվության պատրաստում	ՀԲ
5	Շինարարական աշխատանքների մեկնարկ	Կապալառու
6	Հետծրագրային սոցիալական ազդեցության գնահատում (կարիքի դեպքում)	ՀՏԶՀ
Դ	Շարունակական առաջադրանքներ	
1	ՏՊ իրականացման ներքին մշտադիտարկում	ՀՏԶՀ
2	Արտաքին մշտադիտարկում և Համապատասխանության հաշվետվության պատրաստում Արտաքին մշտադիտարկման գործակալության կողմից (ԱՄԳ)	ԱՄԳ
3	Բողոքների լուծում	ՀՏԶՀ
* Պատասխանատվությունները կարող են վերանայվել համապատասխան խորհրդատուների առաջադրանքի պայմանների կամ պայմանագրերի համաձայն		

5. Խորհրդատվության եւ հանրային քննարկման կարգավորումներ

83. Բանկը գիտակցում է վաղ և շարունակական ներգրավման և բովանդակալից խորհրդատվությունների կարևորությունը շահակիրների, այդ թվում՝ առաջարկվող նախագծերի ազդակիր համայնքների, խմբերի կամ անհատների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի շրջանում՝ տեղեկատվության հանրայնացման, խորհրդատվության և տեղեկացված մասնակցության միջոցով, որը համաչափ կլինի ազդակիր համայնքների ռիսկերին և ազդեցություններին:
84. ՀՏԶՀ-ն կիրականացնի հանրային տեղեկատվության և խորհրդատվական քարտզարշավ ՏՊ իրականացման գործընթացի բոլոր փուլերում: Յուրաքանչյուր ազդակիր տնային տնտեսություն կստանա տեղեկատվական թերթիկ, որը կներառի կասեցման օրը, իրավասության չափանիշներն ու իրավունքները, փոխհատուցման եղանակները և բողոքների ներկայացման ու բողոքների լուծման ընթացակարգերը:
85. Տարաբնակեցման ծրագրերը կմշակվեն և կիրականացվեն ԾԱԵԱ-ների հետ խորհրդատվության միջոցով: Բոլոր խորհրդատվությունները կանցկացվեն գենդերային նկատառումներով և խոցելի խմբերի ներգրավմամբ: Խոցելի և մարզինալացված ԾԱԵԱ-ներին հնարավորություն կտրվի արտահայտելու իրենց տեսակետները Ծրագրի ռիսկերի, ազդեցությունների և տարաբնակեցման առաջարկվող մեղմացման միջոցառումների վերաբերյալ, որոնք հնարավորինս հաշվի կառնվեն ՀՏԶՀ-ի կողմից: Ազդեցության ենթակա կողմերը հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց գաղափարներն ու առաջարկությունները՝ որպես ներդրում տարաբնակեցման գործողությունների պլանավորման և իրականացման մեջ:
86. ՀՏԶՀ-ն Բանկի վերանայումից հետո կհանրայնացնի ՏՊ նախագիծը ԾԱԵԱ-ների (և հանրությանը) համար՝ ծրագրի վերաբերյալ նրանց նկատառումները լսելու նպատակով: ՀՏԶՀ-ն կիրավիրի և կներգրավի տարբեր շահագրգիռ ՀԿ-ների հանրային քննարկումների գործընթացում: ՀՏԶՀ-ն կխորհրդակցի ԾԱԵԱ-ների հետ և կիրավիրի նրանց, տեղական իշխանություններին և քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպություններին՝ մասնակցելու հանրային քննարկումների սկզբնական փուլում, ինչպես նաև հանրային խորհրդատվությունների, ՏՊ պատրաստման և իրականացման ընթացքում, ինչպես նկարագրված է նախորդ բաժիններում: ՏՊ-ները հասանելի կլինեն համայնքապետարաններում՝ ծրագրի, դրա ազդեցությունների և առաջարկվող մեղմացման ռազմավարությունների, կենսամիջոցների վերականգնման և տնտեսական վերականգնման վերաբերյալ հավաստի տեղեկություններով:
87. Ազդակիր անձանց հետ անցկացված հանդիպումները փաստաթղթավորելու համար (ամսաթվերը, վայրերը, մասնակիցների թիվը) կպատրաստվեն հանրային քննարկումների արձանագրություններ, ներառյալ մեկնաբանությունները, հարցերը և մտահոգությունները, որոնք արտահայտվել են տարհանվող անձանց կողմից այդ հանդիպումների ընթացքում, ինչպես նաև նրանց տրված պատասխանները: Տեղեկատվությունը կհրապարակվի հայերեն լեզվով և մշակութային առումով համապատասխան ձևով՝ հաշվի առնելով խմբերի հատուկ կարիքները, որոնց վրա Ծրագիրը կարող է տարբեր կամ անհամաչափ ազդեցություն գործել կամ բնակչության խմբերը, որոնք ունեն հատուկ տեղեկատվական կարիքներ (օրինակ՝ հաշմանդամություն, գրագիտություն, սեռ, շարժունակություն, լեզվի կամ մատչելիության տարբերություններ): ԾԱԵԱ-ների և խորհրդատվական հանդիպումների մասնակիցների անձնական տվյալները չեն ներկայացվի հանրայնացված հաշվետվությունների մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՍՏՆԱԿԱՆ ԵՄՊՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱԿԱՆ ԿՈՐԹԵԿՏԱՆԻ ԾՐԱԻՐ

ԾԱԵԱ-ների (պոտենցիալ ազդեցության ենթարկված անձանց) և խորհրդատվական հանդիպումների մասնակիցների գաղտնիությունը պաշտպանելու համար նրանց պատկանող ցանկացած անձնական տվյալ կվերագրվի կամ կթաքցվի հանրությանը հասանելի հաշվետվություններից: Վերջնական ՏՊ-ի հանրայնացումը տեղի կունենա ստացված մեկնաբանությունները դիտարկելուց և Բանկի կողմից ընդունվելուց հետո:

6. Մշտադիտարկում եւ գնահատում

88. ՀՏՁՀ-ն կսահմանի ընթացակարգեր՝ վերահսկելու և գնահատելու պլան(ներ)ի կատարումը և անհրաժեշտության դեպքում կձեռնարկի ուղղիչ գործողություններ, որոնք անհրաժեշտ են իրականացման ընթացքում՝ ԲՄՍ5-ի նպատակներին հասնելու համար: ՀՏՁՀ-ն կկազմակերպի ՏՊ-ի իրականացման ներքին մշտադիտարկում և Բանկ կներկայացնի կիսամյակային մշտադիտարկման հաշվետվություններ հողերի օտարման և ՏՊ-ի(ների) իրականացման կարգավիճակի վերաբերյալ:
89. Եթե անհրաժեշտ համարվի, ԱՄԳ-ն կներգրավվի ՏՊ նախապատրաստման և իրականացման գործողությունների անկախ մշտադիտարկումն ապահովելու համար, մասնավորապես համապատասխանության վերանայման և հաշվետվությունների ներկայացման համար: Մշտադիտարկման գործողությունների ծավալը համաչափ կլինի Ծրագրի տարաբնակեցման ռիսկերին և ազդեցություններին: Հարկադիր տարաբնակեցման զգալի ազդեցություն ունեցող բոլոր ենթածրագրերի համար, ինչպես օրինակ Գյումրի քաղաքի հին շուկայի վերականգնման ենթածրագրի դեպքում, ՀՏՁՀ-ն կվարձի տարաբնակեցման իրավասու մասնագետներ՝ վերահսկելու տարաբնակեցման ծրագրերի իրականացումը, անհրաժեշտության դեպքում նախագծելու ուղղիչ գործողություններ, խորհրդատվություն կտրամադրի սույն ԲՄՍ-ի համապատասխանության վերաբերյալ և կպատրաստի մշտադիտարկման հաշվետվություններ:
90. Բոլոր ենթածրագրերում տարաբնակեցման աշխատանքները կանոնավոր կերպով կվերահսկվեն և կմշտադիտարկվեն ՀՏՁՀ անձնակազմի կողմից: Ներքին մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվությունը կպատրաստվի ՀՏՁՀ-ի կողմից և կներառվի Ծրագրի առաջընթացի բոլոր կանոնավոր հաշվետվություններում: Յուրաքանչյուր ՏՊ ավարտին ՏՊ ավարտման հաշվետվություն կներկայացվի ՀԲ: Ներքին մշտադիտարկման և վերահսկողության շրջանակում կկատարվեն հետևյալ գործողությունները՝ ստուգելու, որ.
- մարդահամարի հետազոտությունը կատարվել է բոլոր ԾԱԵԱ-ների շրջանում,
 - ՏՊ պատրաստվել է և ելակետային հետազոտություն իրականացվել (համապատասխանության դեպքում) այն ենթածրագրերի համար, որտեղ դրանք պահանջվել են,
 - գույքի գնահատումը և տարաբնակեցումն իրականացվել է սույն ՏՇ-ի և համապատասխան ՏՊ-ի դրույթներին համապատասխան.
 - տարաբնակեցման բոլոր միջոցառումներն իրականացվել են հաստատված կարգով.
 - տարաբնակեցման միջոցառումների իրականացման համար միջոցները տրամադրվեն անհապաղ, բավարար իրենց նպատակների համար և ծախսվեն սույն ՏՇ-ի և համապատասխան ՏՊ-ի դրույթներով:
91. Անհրաժեշտության դեպքում ՏՊ-ն կնախանջի արտաքին մշտադիտարկում իրականացնող մարմնի ներգրավման պահանջը՝ տարաբնակեցման գործողությունների անկախ մշտադիտարկում իրականացնելու համար: Ի հավելումն ներքին մշտադիտարկման հաշվետվությունների ստուգմանը, արտաքին մշտադիտարկումը պետք է.
- ա) գնահատի տարաբնակեցման սոցիալական և տնտեսական ազդեցությունը ԾԱԵԱ-ների վրա.
 - բ) ստուգի, թե արդյոք ԾԱԵԱ-ների եկամուտների մակարդակի և կենսամակարդակի բարձրացման կամ գոնե վերականգնման նպատակը կատարվել է. և

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՍՏՐԱՌՅԱԿԱՆ ԱՄՁԱՅԻՆ ԵՆԹԱԿՈՒՑՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԻ

գ) ըստ անհրաժեշտության, տրամադրի առաջարկներ տարաբնակեցման իրականացման բարելավման համար՝ ապահովելու սույն ՏՇ-ում և համապատասխան ՏՊ(ներ)ով սահմանված սկզբունքների և նպատակների իրականացումը:

7. Բողոքների մեխանիզմ

92. Ծրագրի կատարման հետ կապված ԾԱԵԱ-ների և շահակիր համայնքի անդամների մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումը հեշտացնելու համար կստեղծվի բողոքների մեխանիզմ (ԲՄ), որը կօգտագործվի նախագծման, ՏՊ-ի պատրաստման և շինարարության ընթացքում ծագած բողոքների լուծման համար:
93. Բողոքների մեխանիզմը պրոակտիվ և անհապաղ կանդիդատնա ազդակիր մարդկանց մտահոգություններին և բողոքներին՝ օգտագործելով հասկանալի, հաղորդակցվող և թափանցիկ գործընթաց, որը համապատասխան է գենդերային, մշակութային առումով և հասանելի է ԾԱԵԱ-ների և շահառու համայնքի բոլոր հատվածներին անվճար: Այն նաև վստահություն և համագործակցություն է ձևավորում՝ որպես համայնքի ավելի լայն խորհրդատվության անբաժանելի բաղադրիչ, որը հեշտացնում է ուղղիչ գործողությունները:
94. ՏՊ-ն նախատեսում է բողոքների մատչելի և արձագանքող մեխանիզմ՝ ապահովելով պայմաններ, որպեսզի տարհանված անձինք կարողանան բողոքներ ներկայացնել հողի օտարման գործընթացի, փոխհատուցման հաշվարկի կամ վճարման, օգնության տրամադրման կամ այլ համապատասխան հարցերի վերաբերյալ: Մքրիկինգի գործընթացի ընթացքում կբացահայտվեն ազդակիր համայնքների խոցելի խմբերը, օրինակ՝ կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները, էթնիկ փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները և այլն: Այս խմբերը բովանդակալից խորհրդատվության կարիք ունեն: Շահակիրների ներգրավումը կկենտրոնանա բովանդակալից խորհրդատվությունների, համագործակցության և շահակիրների լիազորությունների, ինչպես նաև երկկողմանի հաղորդակցության վրա: Կպատրաստվեն և այդ խմբերի մեջ կտարածվեն հայերեն լեզվով հասուն կ տեղեկատվական և հաղորդակցման նյութեր թիրախային խմբերին, ներառյալ ԲՄ ակիքները, հասանելի ձևաչափով: Շահակիրներից ստացված հետադարձ արձագանքը, կարծիքները, և առաջարկությունները հաշվի կառնվեն և կարտացոլվեն Ծրագրի գործողություններում:
95. ՏՊ-ն նկարագրում է բողոքների ներկայացման ընթացակարգերը, կազմակերպչական միջոցառումները և բողոքների քննարկման համար պատասխանատու կատարողականի չափանիշները և միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն՝ տեղեկացնելու տարհանված անձանց կամ համայնքներին գանգատներ ներկայացնելու և դրանց արձագանքելու չափանիշների մասին:
96. Մեխանիզմը չի խոչընդոտի երկրի դատական կամ վարչական մարմինների դիմելու հնարավորությանը: ՋՄԵԾ-ի Կառավարման ձեռնարկը մանրամասն կներկայացնի բողոքների մեխանիզմը:
97. ԲՄ-ը գործիք է, որով.
- Ազդեցության ենթակա մարդիկ կարող են բողոք ներկայացնել կամ լուծել ցանկացած վեճ, որը կարող է ծագել Ծրագրի իրականացման ընթացքում,
 - ՀՏՁ-ն ապահովում է, որ համապատասխան և փոխադարձաբար ընդունելի փոխհատուցման գործողությունները որոշվեն և իրականացվեն՝ ի բավարարումն բողոքատուների,
 - ՀՏՁ-ն աջակցում է, որպեսզի բողոքների քննարկման ընթացակարգը լինի հասանելի և թափանցիկ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՐԶԻՆ ԵՆ ԱՐԿԱՆՈՒՑՎՈՐ ԵՐԵՎԱՆԻ ՇՐՊԻՆ

▪ ՀՏՁՀ-ի կողմից կատարվում է ժամանակի կառավարում (խուսափում է դատական վարույթների դիմելու անհրաժեշտությունից):

98. Բաղադրիչ 2-ի ներքո տարաբնակեցմանն առնչվող բողոքները կարող են վերաբերել.

- Հողի ձեռքբերում և ֆիզիկական տարհանում.
- Տնտեսական տարհանում և ապրուստի միջոցներ.
- Ուղղակի և/կամ անուղղակի սոցիալ-տնտեսական ազդեցություններ.

99. ԲՄ-ն կներառի հետևյալ քայլերը՝

Քայլ 1. Բողոքների ներկայացում գրավոր՝ հեռախոսային թեժ գծի/բջջային հեռախոսի, փոստի, սոցիալական մեդիայի (FB և այլն), վեբ կայքի և բողոքների գրանցամատյանի միջոցով՝ կապալառու կազմակերպության միջոցով և/կամ անմիջապես ՀՏՁՀ-ին: ԲՄ-ն նաև թույլ կտա անանուն բողոքները բարձրաձայնել և լուծել: Համայնքի բողոքների առանցքային անձը (ԲԱԱ) կամ Կապալառուի ԲԱԱ-ի կողմից ստացված բողոքները կգրանցվեն ԲՄ մատյանում և կներկայացվեն ՀՏՁՀ-ի ԲՄ համակարգողին: ԲԱԱ-ները հատուկ վերապատշաաստում կանցնեն բողոքների ընթացակարգերի վերաբերյալ:

Քայլ 2. Բողոքի գրանցում, բողոքների տիպաբանության հիման վրա բողոքների դասակարգում և բողոքողներին՝ ավելի արդյունավետ պատասխան տալու համար և հնարավորինս անհապաղ նախնական պատասխանի տրամադրում: Տիպաբանությունը հիմնված կլինի բողոք ներկայացնողի բնութագրերի (օրինակ՝ խոցելի խմբեր, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն) և բողոքի բնույթի վրա:

100. ՀՏՁՀ-ն կլուծի տարաբնակեցման իրականացման հետ կապված բողոքները՝ Բողոքների լուծման հանձնաժողովի (ԲԼՀ) միջոցով, որը կնախագահի ԶԿ-ն: ԲԼՀ-ն կարող է ունենալ, բայց չսահմանափակվել հետևյալ կազմով՝

ԶԿ/ԷՆ ներկայացուցիչ	ԲԼՄ նախագահ
ՀՏՁՀ ներկայացուցիչ	Անդամ, հանձնաժողովի քարտուղար
ՏԻՄ-ի ներկայացուցիչ	Անդամ
Համայնքի ներկայացուցիչ	Անդամ
Խորհրդատուի/Կապալառուի ներկայացուցիչ	Անդամ
Տեղական ՀԿ/ՔՀԿ-ի ներկայացուցիչ (ոչ պարտադիր)	Անդամ

Բողոքների առանցքային անձ (Փուլ 1)

101. ԲՄ-ի 1-ին փուլը ներառում է բողոքի գրանցումը (գրավոր կամ բանավոր) ԲՄ-ի մատյանում, որը կպատրաստվի և կտրամադրվի ԲԱԱ-ին: Կլաստերների համայնքային կապի համակարգողները կգործեն որպես համապատասխան կլաստերի ԲԱԱ: Բողոքները կարձանագրվեն համայնքի մակարդակով ԲԱԱ-ի կողմից: Գրանցվելուց հետո բողոքը կուսումնասիրվի համայնքի

մակարդակում, և եթե հնարավոր է բողոքն արագ լուծել կապալառուի մակարդակով, ապա բողոքը կուղարկվի Կապալառուին և ՀՏՁ: Եթե բողոքը մանրամասն ուսումնասիրության կարիք ունի, և այն չի կարող անմիջապես լուծվել, ԾԱԵԱ-ն տեղեկացվում է 2-րդ փուլի բողոքների լուծման ընթացակարգերի մասին: ԾԱԵԱ-ն իրավունք ունի օգտագործել 2-րդ փուլի ընթացակարգերը՝ առանց դիմելու 1-ին փուլի ընթացակարգերին: 1-ին փուլի բողոքը լուծելու ժամկետը 7 օր է:

102. Հնարավորության դեպքում դժգոհությունները կլուծվեն տեղական մակարդակով: Այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, դրանք կուղարկվեն Ծրագրի մակարդակով ստեղծված ԲԼՀ-ին և տեղական մակարդակի գործողությունները կդադարեցվեն:

Բողոքների լուծում ծրագրի մակարդակով (Փուլ 2)

103. Այս փուլում բողոքը կվերանայվի ՀՏՁ մակարդակով: 1-ին փուլում չլուծված բողոքները, բողոքը ներկայացնողի համաձայնությամբ, գրավոր կուղարկվեն ՀՏՁ: Նմանապես, բողոք ներկայացնողները/ԾԱԵԱ-ները, ովքեր դժգոհ են բողոքի լուծման 1-ին փուլից, կարող են իրենց բողոքները ներկայացնել ՀՏՁ: ԲԱԱ-ն կօգնի նրանց պաշտոնական բողոք ներկայացնելու հարցում: ՀՏՁ-ի ԲՄ համակարգողը կուսումնասիրի ԾԱԵԱ-ների գրավոր բողոքները, որոնք չեն բավարարվել 1-ին փուլում և դրանք կուղարկի Ծրագրի համակարգողին: Բարդ/խճճված բողոքների դեպքում, երբ կպահանջվի տարբեր շահակիրների ներգրավում, ԷՆ-ն/ԶԿ-ն ԲԼՀ նիստ կիրավիրի՝ բողոքը քննելու և լուծելու նպատակով:

104. Բողոքի հասցեագրումը կտևի 10 օր: Որոշման մասին բողոք ներկայացնողը կտեղեկացվի առավելագույնը 30 օրվա ընթացքում:

Բողոքների փակումը

105. Բողոքը կհամարվի «լուծված» կամ «փակված», երբ ձեռք է բերվել երկու կողմերի համար բավարար լուծում և ուղղիչ միջոցառումների հաջող իրականացումից հետո: Երբ առաջարկվող լուծումը համաձայնեցվում է Ծրագրի և բողոք ներկայացնողի միջև, դրա իրականացման համար անհրաժեշտ ժամանակը կախված կլինի լուծման բնույթից: Այնուամենայնիվ, այս գործողությունները կիրականացվեն բողոքի գրանցումից հետո մեկ ամսվա ընթացքում և կվերահսկվեն մինչև ավարտը: Բողոքի լուծումից հետո և բողոքը ներկայացնողի հետ համաձայնեցնելուց հետո, բողոքի կարգավիճակը ԲՄ մատյանում կնշվի որպես «Փակ»: ԲՄ մատյանը կներկայացվի Համաշխարհային բանկի թիմին:

106. Այնուամենայնիվ, որոշակի իրավիճակներում Ծրագիրը կարող է «փակել» բողոքը, նույնիսկ եթե բողոք ներկայացնողը գոհ չէ արդյունքից: Օրինակ, եթե բողոքը վերաբերում է նախագծի տեխնիկական լուծումներին, և այն չի կարող փոփոխվել, կամ բողոքը հիմնավորում չունի և պարունակում է սխալ տեղեկատվություն կամ տվյալներ: Բողոքի կարգավիճակն այս դեպքում կլինի «Մերժված»: Որոշման մասին բողոքատուն կտեղեկացվի բողոքի գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Բողոքների արձանագրում եւ փաստաթղթավորում

107. ՀՏՁ-ն կառաջադրի ԲԱԱ-ին վարելու բողոքների մատյան և գրանցելու ստացված բողոքները: Գրանցամատյանը կպարունակի այն անհատի կամ կազմակերպության անունը, որը բողոք է ներկայացնում, բողոքի ամսաթիվը և բնույթը, ձեռնարկված ցանկացած հետագա գործողություն, Կապալառուի կամ այլ համապատասխան կողմից իրականացված լուծումներն ու ուղղիչ գործողությունները, բողոքի վերջնական արդյունքը կամ կարգավիճակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԳՈՒՆՆԵՐՈՒԹՅԱՆ և ԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿՈՒՄՑՎՈՐՆԵՐԻ ՇՐԱԽԻՐ

108. Բողոքների մշտադիտարկման արդյունքները և հաշվետվությունները կներկայացվեն ՀՏԶՀ-ի առաջընթացի կիսամյակային և տարեկան հաշվետվություններում, որոնք պատրաստվելու են ՀԲ-ի համար: ԲԼՄ մատյանը կուղարկվի ՀԲ ըստ պահանջի:
109. Վերջնական ՏՊ-ն հայերեն լեզվով, ինչպես նաև ԲՄ կոնտակտային տվյալները հասանելի կլինեն հասանելի կլինի ՀՏԶՀ-ի վեբկայքում և ազդակիր համայնքների/բնակավայրերի վարչական գրասենյակներում: Տեղեկատվություն կարելի է ստանալ նաև ԲԱԱ-ից:
110. ՀՏԶՀ-ն կարձանագրի ԲՄ-ով ստացված բոլոր բողոքները՝ ներառյալ բարձրացված հարցերի նկարագրությունն, ուսումնասիրությունից հետո բողոքի կարգավիճակը կամ արդյունքը:
111. ԲՄ-ն չի խոչընդոտի դատական ատյաններ դիմելու հնարավորությանը:

8. Արժեք եւ բյուջե

112. Ստորև բերված Աղյուսակ 4-ը ներկայացնում է ՋՄԵԾ-ի շրջանակներում տարաբնակեցման միջոցառումների իրականացման համար հաշվարկված բյուջեն: Այն հիմնականում ներառում է Գյումրու շուկայի տարաբնակեցման պլանի (ՏՊ) պատրաստման և իրականացման, ինչպես նաև արտաքին մշտադիտարկման ծախսերը: Բյուջեն գոյանալու է վարկային միջոցներից:
113. Փոքրածավալ տարաբնակեցման ծախսերը կկատարվեն ՏԻՄ-երի բյուջեների միջոցով, որը պետք է քննարկվի և համաձայնեցվի ՏԻՄ-երի հետ: Գյումրու շուկայի տարաբնակեցման իրականացումը, որն ավելի մեծ բյուջե է պահանջում, ֆինանսավորվելու է պետական բյուջեից: ԶԿ-ն կբանակցի ֆինանսների նախարարության հետ միջոցների հատկացման վերաբերյալ:

Աղյուսակ 4. Տարաբնակեցման նախապատրաստման եւ իրականացման ծախսերը եւ բյուջեն (ԱՄՆ դոլար)

Գործունեություն	Միավորի արժեք, ԱՄՆ դոլար	Քանակ	Ընդհանուր
Գյումրու շուկայի համար տարաբնակեցման պլանի նախապատրաստում և իրականացում	460 (մեկ կրպակի համար)	100	46,000
Արտաքին մշտադիտարկման խորհրդատվական ծառայություն	5,000 (մեկ ՏՊ-ի համար)	3	15,000
Տարաբնակեցման պլանի նախապատրաստում և իրականացում	10,000 (մեկ ՏՊ-ի համար)	2	20,000
Ընդամենը			81,000

Հավելված Ա. Բողոքների լուծման հանձնաժողով. առաջադրանքներ եւ կազմ

Ծրագրի մակարդակով Բողոքների լուծման հանձնաժողով (ԲԼՀ) կստեղծվի տարաբնակեցման հետ կապված գանգատներն ու բողոքները լուծելու և դատարան ուղարկվող բոլոր տարաձայնությունները կանխելու համար: ԲԼՀ-ն կներառի.

- Էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) ներկայացուցիչ,
- ՀՏԶՀ-ի ՏՊԻԽ անդամ.
- Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչ,
- Կապալառուի/Խորհրդատուի ներկայացուցիչ,
- Տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ/ առկայության դեպքում (ոչ պարտադիր):

Տարաբնակեցման զգալի ազդեցություն ունեցող ենթածրագրերի համար ԲԼՀ-ի ստեղծումը պատահիր է: ԲԼՀ կազմը կներկայացվի ՀԲ թիմին մինչև ՏՊ նախապատրաստումը: ԷՆ-ի կողմից կգլխավորվի և կիրավիրվի ԲԼՀ նիստ լուծելու առանձնապես բարդ դեպքերը, որոնք վերաբերում են տարաբնակեցման հետ կապված բողոքներին և գանգատներին:

ԲԼՀ-ի հիմնական պարտականություններն ու գործառույթները հետևյալն են.

- Հանդիպումներ անցկացնել ամսական կտրվածքով,
- Ապահովել, որ բողոքների լուծումը համապատասխանում է ԲՄ ընթացակարգին,
- Ապահովել, որ բողոքներին ի պատասխան հետագա գործողություններն իրականացվեն համաձայնեցված ժամկետներում,
- Պահպանել բոլոր գրանցված բողոքների տվյալների բազան՝ բարձրացված խնդիրների բնույթի, գործի պատմության և ձեռնարկված գործողությունների վերաբերյալ մանրամասների հետ միասին,
- Հանձնաժողովի անդամներին զեկուցել չլուծված/լուծված բողոքների մասին,
- Համագործակցել պատասխանատու պետական/տեղական կամ այլ մարմինների հետ՝ բողոքները լուծելու համար,
- Ապահովել ԲՄ տեղեկատվության հասանելիությունը ծրագրի տարածքում,
- Համագործակցել համայնքի ներկայացուցիչների հետ ԲՄ-ի արդյունավետության և օգտակարության վերաբերյալ, և անհրաժեշտության դեպքում, առաջարկել փոփոխություններ,
- Կատարել այցելություններ՝ անհրաժեշտության դեպքում, գնահատելու բողոքներ ներկայացրած անձանց կողմից բարձրացված խնդիրները:

Հավելված Բ. Մարդահամարի տեղեկատվության ստուգաթերթ

Անձինք՝

- * Մարդկանց և տնային տնտեսությունների հանրագումարը ազդեցության ենթակա յուրաքանչյուր կատեգորիայում՝
- * Յուրաքանչյուր անձի տարիքը, սեռը, զբաղմունքը
- * Խոցելիության տեսակներ (օրինակ՝ հաշմանդամ, սոցիական աջակցություն ստացող և այլն)

Մեփականություն

Անձնական գույք, այդ թվում՝ մանրամասներ ստորև նշված սեփականությունների մասին՝

- * Շինություններ՝ տներ, ֆերմերային շինություններ, խանութներ, արտադրական շինություններ, հացահատկի չորացման տարածք, արտաքնոցներ և այլն
- * Հող և տեսակը՝ ոռոգվող և չոռոգվող, անտառային տարածքներ, արոտավայրեր, անմշակ հող և այլն
- * Հողի վրա չհավաքված բերքի մոտավոր արժեքը և նկարագիրը
- * Այլ՝ ընտանի անասուններ, ջրհորներ, ծառեր, բնական ռեսուրսներ և այլն

Պետական և ընդհանուր սեփականություն՝

- * Հող՝ գյուղի ընդհանուր հողեր, հավաքման վայրեր և արոտավայրեր, ձկնորսության տարածքներ/վայրեր և այլն
- * Շինություններ և հաստատություններ՝ դպրոցներ, բուժհաստատություններ, գերեզմանոցներ,
- * Տաճարներ, համայնքային կենտրոններ, հասարակական տրանսպորտ, բանկեր, կոոպերատիվներ և այլն
- * Ենթակառուցվածք՝ խմելու ջրի և ջրամատակարարման այլ համակարգեր, մուտքի և ներքին ճանապարհներ, էլեկտրաէներգիայի և սնուցման այլ աղբյուրներ

ԾԱԵԱ-ների եկամուտներն այլ աղբյուրներից, այդ թվում՝

- * Ֆերմայից ստացվող եկամուտ
- * Ֆերմայից դուրս աշխատանք
- * Ոչ պաշտոնական աշխատանքներ

Հավելված Գ. Մարդահամարի տվյալների ցանկը

1. Ընդհանուր տեղեկություններ

ա/ Հարցաշարի ծածկագիր և հարցման ամսաթիվ բ/ Հարցագրուցավարի անուն

գ/ Մարզի, շրջանի և գյուղի/ անվանում

2. Տնային տնտեսությունների հաշվառում

ա/ Տնային տնտեսության գլխավորի և բոլոր անդամների անունները

բ/ Տնային տնտեսության անդամների կապը տնտեսության գլխավորի հետ

գ/ Տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի տարիքը և սեռը

դ/ Տեղեկատվություն էթնիկ պատկանելության մասին ե/ Յուրաքանչյուր անդամի կրթական մակարդակը

զ/ Յուրաքանչյուր անդամի հիմնական զբաղվածությունը և ամսական եկամուտը է/ Յուրաքանչյուր անդամի եկամուտներն այլ աղբյուրներից

ը/ Աշխատանքի կամ բիզնեսների տեղակայման վայրը, եթե կան այդպիսիք

թ/ Տվյալ վայրում մնալու տևողությունը

3. Հողի սեփականության կարգավիճակը

ա/ Հողի կատեգորիան

բ/ Հողի սեփականության տեսակը և տիրոջ/տնային տնտեսության անդամի անունը գ/ Սեփականության տեսակը հաստատող առկա փաստաթղթի տեսակը

դ/Եթե հողի տերը չէք հանդիսանում, ապա տիրոջ անունն ու հասցեն

ե/ Եթե առկա է ոչ պաշտոնական օգտագործման իրավունք, համաձայնության տեսակը գ/ Օգտագործման տարիների քանակը

է/ Վարձակալման ամսավճարը վճարվում է վարձակալի կողմից ը/ Վարձակալի կողմից կատարված կանխավճարները

Նշում՝ Եթե հաշվառումն ու ցուցակագրումը կատարվում են առանձին-առանձին, անհրաժեշտ է նաև հավաքել որոշ տեղեկատվություն հողի օգտագործման, ազդեցությանը ենթակա շինությունների և այլ հիմնական միջոցների և ազդեցությանը ենթակա բիզնեսների վերաբերյալ:

Հավելված Դ. Կորուստների գույքագրման տվյալների ցանկը

1. Հողօգտագործում

ա/ Հողի առկա օգտագործում

բ/ Վայրեր, որտեղ հողն օգտագործվում է տարբեր նպատակներով, եթե կիրառելի է

գ/ Հողի ընդհանուր և ազդեցության ենթարկված մակերեսը՝ բաժանված ըստ օգտագործման նպատակների, եթե կիրառելի է

դ/ Գնահատել, թե արդյոք մնացած մակերեսը կենսունակ է շարունակական օգտագործման համար
ե/ Հողի ընդհանուր մակերեսն ըստ տեսակների փոխհատուցման նպատակով

2. Շինություններ

ա/ Շինության տեսակը

բ/ Հարկերի քանակը

գ/ Մակերեսն ըստ հարկերի

դ/ Շինության սեփականատիրոջ անունը ե/ Շինարարության տարին

զ/ Շինության համար թույլտվության առկայությունը

է/ Շինության օգտագործումը և մակերեսներն ըստ օգտագործման, եթե կիրառելի է

ը/Առաստաղի, պատերի և հատակի համար օգտագործված շինանյութի նկարագիրն ըստ մակերեսների թ/Հիմքի տեսակը

ժ/Շինության ասանձնահատկությունների նկարագիր

ի/ Կոմունալ միացումներ (էլեկտրաէներգիայի հաշվիչ, ջրամատակարարում և այլն)

լ/Կոմունալ միացումների համար վճարված գումարներ իս/ Շինության ազդեցության ենթարկված մասը

ծ/ Գնահատել, թե արդյոք մնացած շինությունը կենսունակ է շարունակական օգտագործման համար

կ/Շենքի ընդհանուր մակերեսը փոխհատուցման նպատակով

3. Այլ շինություններ

ա/ Շինությունների տեսակը (պատեր, պատնեշ պատեր, ցանկապատ, պահեստ և այլն)

բ/ Ազդեցության ենթարկված ձկնաբուծական լճի մակերես

գ/ Տնային տնտեսության միջին եկամուտը ձկնաբուծական լճից

դ/ Ազդեցության ենթարկված շինությունների մակերեսների և շինանյութերի նկարագիր ե/ Այլ շինությունների օգտագործում

4. Գյուղատնտեսական ապրանքներ

ա/ Ազդեցության ենթարկված բերքի տեսակը

բ/ Ազդեցության ենթարկված բերքի սեփականատերը

գ/ Ազդեցության ենթարկված հողի տարեկան ընդամենը արտադրողականությունը

դ/ Բերքի միջին եկամտաբերությունը

ե/ Շուկայում վաճառվող ցանկացած ապրանք

զ/ Բերքի աճեցման համար ներգրավվող աշխատողներ/աշխատուժ է/ Բերքի միջին արժեքը

ը/ Տնային տնտեսության միջին եկամուտը գյուղատնտեսական գործունեությունից

5. Ծառեր

ա/ Ազդեցության ենթարկված ծառերի քանակը և տեսակը բ/ Ծառերի տարիքը

զ/ Ծառերի սեփականատիրոջ անունը

դ/ Սրգատու ծառերի միջին բերքատվությունը

ե/ Սրգատու ծառերից ստացվող միջին տարեկան եկամուտ

6. Բիզնես

ա/ Ազդեցության ենթարկված բիզնեսի տեսակը բ/ Բիզնեսի սեփականատիրոջ անունը

զ/ Բիզնեսի գրանցումը/թույլտվության համարը (ստուգել փաստաթուղթը)

դ/ Տնային տնտեսության տարեկան ընդամենը եկամուտը բիզնեսից է/ Բիզնեսի գործարկման միջին ծախսերը

զ/ Բիզնեսում ներգրավված աշխատակիցների քանակը

ե/ Մշտական և ժամանակավոր աշխատակիցների քանակը

ը/ Միջին եկամուտը և շահույթը ըստ եկամտահարկի համար ներկայացված հաշվետվության (ստուգել փաստաթուղթը)

թ/ Արդյոք կա բիզնեսի տեղափոխման անհրաժեշտություն

7. Ազդեցության ենթարկված կոմունալ ծառայություններ և հարմարություններ

ա/ Ազդեցության ենթարկված համայնքային ենթակառուցվածքի նկարագիր

բ/ Ազդեցության ենթարկված հարմարությունների նկարագիր ըստ մակերեսի և օգտագործված շինանյութերի

զ/ Հարմարությունների/ենթակառուցվածքի բացասական ազդեցությունը կրած բնակիչների մոտավոր քանակը

8. Տեղափոխման մասով նախապատվություններ

ա/ Արդյոք առկա է տեղափոխման կամ վերակազմակերպման անհրաժեշտություն

բ/ Հողի համար փոխհատուցման նախընտրելի եղանակը (դրամական կամ բնամթերքով)

զ/ Շինության համար փոխհատուցման նախընտրելի եղանակը

դ/ Եկամտի վերականգման համար աջակցության նախընտրելի տեսակը

Հավելված Ե. Տվյալներ ելակետային հետազոտության համար

Նշում՝ ընդհանուր տեղեկությունները, տնային տնտեսության կարգավիճակը և հողի օգտագործման վերաբերյալ տեղեկատվությունը կլինի նույնը, ինչ նշված է Հավելված 4-ում՝ Հաշվառման տվյալների ցանկ

Հավելյալ տեղեկատվությունը կընդգրկի հետևյալը՝

1. Հարմարությունների հասանելիությունը

ա/ Էլեկտրաէներգիայի հասանելիությունը

բ/ Առկա ջրամատակարարման տեսակը

գ/ Շենքի ներսում առկա կոյուղու/ջրահեռացման հարմարությունների տեսակը

դ/ Հեռավորությունը դպրոցից

ե/ Հեռավորությունը բուժհաստատություններից գ/ Հեռավորությունը շուկայից

2. Տնային տնտեսության ակտիվներ

ա/ Տնային տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական սարքավորումների և միջոցների/գործիքների տեսակը և քանակը

բ/ Տնային տնտեսության սեփականություն հանդիսացող այլ բիզնես սարքավորումների տեսակը

գ/ Ազդեցության ենթարկված սարքավորումների մոտավոր արժեքը

դ/ Սեփականություն հանդիսացող փոխադրամիջոցի տեսակը (հեծանիվ, մոտոցիկլ, բեռնատար, սայլ, մեքենա, այլ)

ե/ Սեփականություն հանդիսացող խոհանոցային հիմնական սարքավորումներ (գազօջախ, վառարան և այլն)

զ/ Սեփական սառնարան, ռադիո, հեռուստացույց և այլն

է/ Շենքի ընդհանուր վիճակը (հրաշալի, լավ, միջին, վատ)

ը/ Տնային տնտեսության կահավորման ընդհանուր վիճակը (կահույք, պահարաններ և այլն)

3. Տնային տնտեսության եկամուտները և ծախսերը

ա/ Տնային տնտեսության միջին եկամուտը բոլոր աղբյուրներից

բ/ Հիմնական կարիքների մասով միջին ծախսերը՝ սնունդ, փոխադրամիջոց, առողջություն, կրթություն գ/ Բանկերից, ընկերներից կամ բարեկամներից վերցված փոխառություններ

դ/ Խնայողությունների մոտավոր ծավալը, եթե կան

4. Հմտություններ, որոնց տիրապետում են

ա/ Տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի հմտությունները

բ/ Հետագա զարգացման համար նախընտրելի ուսուցման կամ հմտությունների տեսակները

Հավելված 2. Ազդակիր ակտիվների գնահատման մեթոդաբանություն²¹

Ներածություն

1. Ինչպես արդեն իսկ նշվել է Ծրագրի ազդեցության ենթակա անձանց (ԾԱԵԱ-ների) սեփականության գնահատումը բաղկացած է երկու Բաղադրիչից: Առաջին Բաղադրիչը ԾԱԵԱ-ի սեփականությունը հանդիսացող կամ նրա կողմից արտադրության նպատակներով օգտագործվող գույքի Փոխարինման արժեքն է: Երկրորդը ԾԱԵԱ-ին փոխհատուցման միանվագ վճարումն է, նպաստը, որը սահմանվում է որպես փոխարինման ընթացիկ արժեքը գերազանցող գումար (ֆինանսական առումով) և օգտագործվում է փոխհատուցելու համար ազդեցությանը ենթարկված անձի կրած անհարմարությունները, բնակության կամ գտնվելու վայրի փոփոխությամբ պայմանավորված ժամանակի կորուստը, նոր վայրը փոխարինված սեփականության արտադրողականությանը համարժեք մակարդակին հասցնելու համար անհրաժեշտ հավելյալ ջանքերը, տեղափոխման գործընթացում եկամտի կորուստը և այլ նմանօրինակ կորուստներ:

2. Անհրաժեշտ են գործնական ուղեցույցներ ՀԳՌԿՄ2-ի շրջանակներում տարաբնակեցման ծախսերի հաշվարկման համար: Անհրաժեշտ է նշել, որ ստորև ներկայացված մոտեցումը չի հանդիսանում անփոփոխ շրջանակ: Այն բանակցման ենթակա ուղեցույցների և առաջարկների փաթեթ է: Հարցը նրանում է, որ յուրաքանչյուր դեպք տարբեր է լինելու: Ամեն դեպքի համար կպահանջվի խորհրդակցություն տեղում ազդեցությանը ենթարկված շահագրգիռ կողմերի հետ: Գոհացուցիչ արդյունքներ ստանալու համար, սովորաբար, պահանջվում են նշանակալի ջանքեր և ժամանակ:

Գործընթացը կարգավորող փաստաթղթերը

3. Փոխհատուցումների հաշվարկի և միավորի գնի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվել է՝ ըստ հետևյալ փաստաթղթերի.
 - (i) ՀԲ ՕՔ 4.12
 - (ii) ՀՀ 04.10.2005թ. ընդունված թիվ ՀՕ-189-Ն Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին օրենք
 - (iii) « Հայաստանի Հանրապետությունում Գնահատման Ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2022 թվականի N 1355-Ն որոշում
 - (iv) ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից 14.01.2008թ. թիվ N 09-Ն՝ ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին հրաման)

Առանձնահատկություններ

- Ազդեցության ենթարկված պետական հողերը չեն գնահատվում:

²¹ Valuation methodologies presented here are subject to further review by valuation experts and updates

- Ազդեցության ենթարկված համայնքային հողերի դեպքում նկարագրվում և գնահատվում են միայն այդ հողերի ազդեցության ենթակա հատվածները:
- Ֆիզիկական անձանց չպատկանող գազատարերը, ջրատարերը, էլեկտրահաղորդալարերը և այլ կոմունիկացիաները չեն գնահատվում:
- Իրավունքի գրանցման վկայականի առկայության դեպքում ազդեցության ենթարկված հողամասի ընդհանուր մակերեսն ընդունվում է վկայականում նշված մակերեսը:
- Իրավունքի գրանցման վկայականի բացակայության դեպքում, որպես ազդեցության ենթարկված հողամասի ընդհանուր մակերես, ընդունվում է կադաստրային քարտեզում առկա մակերեսը,
- Այգիների գնահատման ժամանակ հողամասը գնահատվում է որպես վարելահող և գումարվում է հողամասի վրա առկա ծառերի արժեքը:

Հողի գնահատումը

4. Անշարժ գույքի և հողամասերի գնահատումը իրականացվում է հիմք ընդունելով Գնահատման ընդհանուր և անշարժ գույքի գնահատման ստանդարտները, որոնք համապատասխանում են միջազգային գնահատման ստանդարտներին, ինչպես նաև ՀՀ օրենսդրության այլ պահանջները և ԱԶԲ անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի (2009) պահանջները:

Անշարժ գույքի գնահատման դասական մոտեցումներ են.

- a) Համեմատական մոտեցում, որը իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է այն համեմատելով համանման և համադրելի անշարժ գույքի օբյեկտների հետ:
- b) Ծախսային մոտեցում, որը իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է որպես առանց բարելավումների հողամասի արժեքի և տվյալ հողամասի վրա առկա կառույցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերի հանրագումար՝ նվազեցված կուտակված մաշվածության չափով:
- c) Եկամտային մոտեցում, իրենից ներկայացնում է գնահատման եղանակ, համաձայն որի անշարժ գույքի արժեքը որոշվում է՝ հիմնվելով նրա եկամուտ բերելու կարողության վրա:

5. Ծախսային մոտեցման կիրառելիությունն անհնար է, քանի որ հողամասը հանդիսանում է բնական ռեսուրս, որը չի կարելի ստեղծել կամ կառուցել:

Եկամտային մոտեցումը կիրառելի չէ, ինչը պայմանավորված է մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ վարձակալության գործարքների ոչ արժանահավատությամբ: Բացի այդ ՀՀ տարածքում նման հողամասերի ըստ իրենց նպատակային նշանակության օգտագործման ցածր արդյունավետությունը պատճառ է հանդիսանում բերքատվության վատ ցուցանիշների, որը պայմանավորված է հողամասերի մակերեսների փոքրությամբ, և այն մշակելու համար օգտագործվող գյուղատնտեսական տեխնիկայի անարդյունավետությամբ: Արդյունքում ավելանում է տարեկան գործառնական ծախսերը:

Շուկայական արժեքի գնահատումը կկատարվի համեմատական մեթոդով: Գնահատման համեմատական մոտեցման հիմնական մեթոդը համադրելի գործարքների մեթոդն է, որը նաև հայտնի է որպես կողմնորոշիչ գործարքների մեթոդ, որի կիրառման դեպքում անշարժ գույքի արժեքը որոշվում է գնահատվող անշարժ գույքին համադրելի անշարժ գույքի շուկայական գների վերլուծության և համապատասխան ճշգրտումների իրականացման միջոցով: Մոտեցման իրականացման համար որպես համադրելի անշարժ գույքի օբյեկտներ կարող են ընտրվել ինչպես բաց և մրցակցային շուկայում վաճառված, այնպես էլ ազատ շուկայում հրապարակայնորեն վաճառահանված անշարժ գույքը: Համեմատական մոտեցման կիրառման համար անհրաժեշտ է առնվազն երեք համադրելի անշարժ գույքի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության առկայություն (արժանահավատության տեսակետից գերադասելի է փաստացի գործարքը): Համեմատական մոտեցմամբ գնահատման համար օգտագործված համադրելի անշարժ գույքերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներառվի գնահատման հաշվետվությունում տեղադրությունը նույնականացնող տվյալներով (քարտեզից հատված համադրվող անշարժ գույքի գտնվելու վայրի նշումով):

Գնահատման ընթացակարգը

6. Համեմատական մոտեցման կիրառմամբ անշարժ գույքի գնահատումն իրականացվում է հետևյալ փուլերով.

- 1) համանման և համադրելի օբյեկտների շուկայի ուսումնասիրություն,
- 2) համանման և համադրելի անշարժ գույքի համար շուկայական տվյալների հավաքագրում, մշակում և արժանահավատ տեղեկատվության ընտրություն,
- 3) համեմատության համապատասխան միավորի որոշում,
- 4) համեմատության անհրաժեշտ տարրերի առանձնացում,
- 5) համեմատության միավորների արժեքի ճշգրտում՝ ըստ համեմատության տարրերի,
- 6) համեմատվող անշարժ գույքի միավորների ճշգրտված արժեքների համադրում և համապատասխանեցում մեկ ցուցանիշի կամ միջակայքի (կշռում):

Քայլ 1

Համանման (համադրելի) անշարժ գույքի համար շուկայական իրավիճակը վերլուծելու և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվություն ընտրելու նպատակով՝ Գնահատողը օգտվում է հրապարակային աղբյուրներից (մասնագիտական ամսագրեր, կայքեր, արտաքին գովազդներ), անհատական տվյալների բազայից, ինչպես նաև ՀՀ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակից ձեռքբերված տեղեկատվությունից:

Քայլ 2

Ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում Գնահատողը օգտագործում է առավել համադրելի և արժանահավատ երեք համադրելի անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվությունը (իր համեմատության տարրերով): Գնահատման ընթացքում ցանկացած համեմատելի տվյալի արժանահավատության աստիճանը որոշվում է գնահատվող և համադրելի անշարժ գույքերի տարբերվող բնութագրերի քանակով:

Քայլ 3

Հողամասերի գնահատման համար համեմատական մոտեցման իրականացման ժամանակ որպես համեմատության միավոր հիմնականում ընտրվում է հողամասի մակերեսի միավորի գինը: Կառուցապատված հողամասերի գնահատման համար համեմատական մոտեցման իրականացման ժամանակ որպես համեմատության միավորներ հիմնականում կիրառվում են 1) հողամասի մակերեսի միավորի գինը, 2) շինությունների մակերեսի կամ ծավալի միավորի գինը, 3) վարձակալության հանձնման ենթակա շինությունների մակերեսի կամ ծավալի միավորի գինը, 4) անշարժ գույքի միավորի կամ վերջինիս բաղկացուցիչ որոշակի հատվածի գինը:

Քայլ 4

Համեմատության միավորների ընտրությունից հետո համեմատության համար կատարվում է գույքի շուկայական արժեքի վրա ազդող տարրերի/գործոնների առանձնացում/որոշում, որոնց հիման վրա կատարվելու է համեմատության միավորների արժեքի ճշգրտում՝ ըստ համեմատության տարրերի: Շուկայական արժեքի վրա ազդող գործոնները բաժանվում են 2 խմբի՝

- Շուկայի հետ կապված տարրեր (առաջարկի և վաճառքի ամսաթիվ, շուկայի վիճակ և պայմաններ)
- Անմիջականորեն անշարժ գույքին վերաբերող տարրեր

Անմիջականորեն անշարժ գույքին վերաբերող գործոնները կարող են տարբերվել կախված գույքի տեսակից.

1) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) համար.

ա) գույքային իրավունքները (այդ թվում՝ կառուցապատման) ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ),

բ) նպատակային և գործառնական նշանակությունը,

գ) կոմունիկացիաների առկայությունը և հնարավորությունը,

դ) կառուցապատման չափորոշիչները և սահմանափակումները,

ե) հողամասի չափերը (մակերես, լայնություն, երկարություն, երկրաչափական կառուցվածք, ճակատային մաս),

զ) տեղադրությունը (գտնվելու վայրը), տեղակայման գրավչությունը,

է) թեքությունը,

ը) տրանսպորտային հանգույցների առկայությունը, մատչելիությունը,

թ) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված հողամասերի հողերի արժեքի վրա ազդող այլ գործոններ:

2) Գյուղատնտեսական նշանակության հողերի համար.

ա) գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ),

բ) հողատեսքը, գնահատման խումբը, ոռոգման ջրի առկայությունը,

գ) հողամասի չափերը (մակերես, լայնություն, երկարություն, երկրաչափական կառուցվածք),

- դ) տեղադրությունը, հողագնահատման շրջանը,
- ե) թեքությունը, քարքարոտությունը,
- զ) տրանսպորտային հանգույցների առկայությունը և մատչելիությունը,
- է) բերքատվությունը,
- ը) գյուղատնտեսական նշանակության հողերի արժեքի վրա ազդող այլ գործոններ:

Քայլ 5

Համեմատվող անշարժ գույքի գների ճշգրտումն իրականացվում է հետևյալ կարգով.

- 1) առաջին հերթին իրականացվում են առաջարկի և վաճառքի ամսաթվի, պայմանների և շուկայի վիճակի գործոններին վերաբերող ճշգրտումները, որոնք կատարվում են նախորդ արդյունքի նկատմամբ՝ յուրաքանչյուր հաջորդ ճշգրտման կիրառմամբ:
- 2) երկրորդ հերթին իրականացվում են անմիջականորեն անշարժ գույքին վերաբերող ճշգրտումները, որոնց իրականացման հերթականությունը որոշվում է անշարժ գույքի արժեքի մեծության վրա գործոնի ազդեցության չափով (բարձրից ցածր):

Ճշգրտման (ուղղման, նույնականացման) գործակիցները ձևավորվում են՝ հիմք ընդունելով.

- ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հրապարակվող «Անշարժ գույքի վերլուծություն» տեղեկատու,
- Գնահատողի կողմից անշարժ գույքի շուկային ուսումնասիրության և վերլուծության արդյունքներ:

Քայլ 6

Համեմատական մոտեցման կիրառմամբ վերջնական արժեքի որոշման նպատակով համադրելի անշարժ գույքի միավորների ճշգրտված արժեքները կշռվում և համապատասխանեցվում են մեկ ցուցանիշի (եթե այլ բան նախատեսված չէ առաջադրանքով):

Հողի գնահատման նմուշային հաշվարկը ներկայացված է ստորև Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հողամասի 1 քմ արժեքի հաշվարկը

Համեմատության էլեմենտը	Չափման միավորը	Համեմատական հողակտոր N1	Համեմատական հողակտոր N2	Համեմատական հողակտոր N3
Տվյալների ծագման աղբյուրը		ԿԿ Տեղեկատվական Կենտրոն	ԿԿ Տեղեկատվական Կենտրոն	ԿԿ Տեղեկատվական Կենտրոն
Ժամկետները		02.2023թ.	01.2024թ.	06.2023թ.
Վաճառքի գինը	ՀՀ դրամ	2,500,000	400,000	100,000
Ընդհանուր մակերեսը	քառ.մ	10000	4690	1100
1 քմ արժեքը	ՀՀ դրամ	250	85	91
Ուղղումը ըստ շուկայի վիճակի, վաճառքի պայմանների և	%	6.8%	18.1%	12.5%

Ժամանակի				
<p>Գործակիցը որոշվել է տվյալ ժամանակահատվածի համար շուկայի վերլուծության արդյունքում, հիմքը Կադաստրի Կոմիտեի կողմից հրապարակվող "Անշարժ գույքի շուկայի վերլուծություն"</p> <p>www.cadastre.am ինտերնետային կայք,տոկոսաչափը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $\left(\frac{U_{hlyq}}{U_{hly}}\right) \times U_{hly}$ (որտեղ U_{hlyq} - Կադաստրի Կոմիտեի կողմից կատարված վերլուծությունների՝ հողամասի շուկայական միջին արժեքն է գնահատման ամսաթվի դրությամբ, U_{hly}- Կադաստրի Կոմիտեի -ի կողմից կատարված վերլուծությունների՝ հողամասի շուկայական միջին արժեքն է վաճառված համեմատական տվյալի ամսաթվի դրությամբ,</p> <p>U_{hly} - հողամասի վաճառքի գինն է</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	267	101	102
Տեղակայումը		Հասցե	Հասցե	Հասցե
Շուկայական ուղղումը ըստ տեղակայման	%	-10%	25%	25%
<p>(շուկայական տեղակայումը) շուկայական տեղեկատվության, շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների,վաճառահանված տվյալների ուսումնասիրության, Կադաստրի Կոմիտեի կողմից կատարված վերլուծությունների) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա,որը մեր կողմից կատարված Տրանշ -3 տարածաշրջաններում կարող է կազմել մինչև 35%: Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 10-25 %:</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	240	126	128
Ուղղումը ըստ այլ գնագոյացման հանգամանքների (տրասպորտային հանգույցների և ենթակառուցվածքների առկայությունը)	%	0%	0%	0%
<p>շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա, որը մեր կողմից կատարված Տրանշ -3 տարածաշրջաններում կարող է կազմել մինչև 20%: Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 0 %:</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	240	126	128
Նպատակային, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը		գյուղատնտեսական, վարելահող	գյուղատնտեսական, վարելահող	գյուղատնտեսական, վարելահող
Ուղղումը ըստ Նպատակային, գործառնական նշանակության կամ	%	-30%	-30%	-30%

հողատեսքի				
<p>ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային արժեքները 1997թ.տվյալներով և 1997թ. Կառավարության N237 որոշման վերլուծության հիման վրա միջինը կազմում է 29.8-30.2% (Տոկոսաչափը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $\left(\frac{U_{վկա}}{U_{կա}}\right)$, որտեղ $U_{վկա}$ – անջրղի վարելահողի կադաստրային արժեքն է, $U_{կա}$ – արոտավայրի կադաստրային արժեքն է:), իսկ գնահատողի վերլուծական փորձի հիման վրա, կազմում է 30%:</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	168	88	89
Թեքության աստիճանը		հարթ	հարթ	հարթ
Ուղղումը ըստ թեքության աստիճանի	%	-10%	-10%	-10%
<p>շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա (առկա են հարթ,թույլ ,միջին և ուժեղ թեքություններ),որը կազմել է մինչև 30%,քայլը 10%:Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 10%:</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	151	79	81
Քարքարոտությունը		քարագուրկ	քարագուրկ	քարագուրկ
Ուղղումը ըստ քարքարոտության	%	-20%	-20%	-20%
<p>շուկայական տեղեկատվության,շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա (առկա են քարագուրկ,թույլ ,միջին և ուժեղ քարքարոտություններ), որը կազմել է մինչև 50%, քայլը 20,20,10%:Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 20%:</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	121	63	64
Ռոտզման ջրի առկայությունը		ջրովի	անջրղի	անջրղի
Ուղղումը ըստ ռոտզման ջրի	%	-30%	0%	0%
<p>ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային արժեքները 1997թ.տվյալներով և 1997թ. Կառավարության N237 որոշման վերլուծության հիման վրա միջինը կազմում է 30-60%, (Տոկոսաչափը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $\left(\frac{U_{վկջ}}{U_{վկա}}\right)$, որտեղ $U_{վկջ}$ – ջրովի վարելահողի կադաստրային արժեքն է, $U_{վկա}$ – անջրղի վարելահողի կադաստրային արժեքն է:) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա, որը մեր կողմից կատարված Տրանշ -3 տարածաշրջաններում կազմում է 30-40% ,տվյալ գնահատման մեջ ընդունվել է 30%:</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	85	63	64
Դիրքը գլխավոր ճանապարհի		3-րդ գիծ	2-րդ գիծ	2-րդ գիծ

նկատմամբ				
Ուղղում ըստ գլխավոր ճանապարհի նկատմամբ դիրքի	%	10%	5%	5%
<p>շուկայական տեղեկատվության, շուկայի ուսումնասիրության (տվյալ համայնքներում դիտարկումների և վաճառահանված տվյալների ուսումնասիրության) և գնահատողի վերլուծական փորձի հիման վրա (առկա են 1-ին, 2-րդ, 3-րդ և ավելի դիրքեր), որը կազմել է մինչև 10%, քայլը 5%: Տվյալ գնահատման մեջ ընդունվել է 5-10%:</p>				
Ուղղված 1 քմ արժեքը	ՀՀ դրամ	93	67	68
1 քմ հաշվարկային արժեքը	ՀՀ դրամ	76		

ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

Շենքերի/շինությունների գնահատումն իրականացվել է փոխարինման արժեքով +15% ՀՀ Քաղաքաշինության նախարարության գնագոյացման տեղեկատվության և հաշվարկման կենտրոնի (ՓԲԸ) կողմից առաջարկված մեթոդաբանության/չափանիշների հիման վրա: Այստեղ փոխարինման արժեքը հասկացվում է որպես ընդհանուր ծախս՝ վերակառուցելու համար այնպիսի շենք/շինություն, որն իր մակերեսով, նյութերով և առանձնահատկություններով համարժեք կլինի փոխարինվող շենքին/շինությանը առանց ամրոտիզացիոն մասհանումների և գործառնական ծախսերի: Փոխարինման արժեքի հաշվարկումը հիմնված է հետևյալ գործոնների վրա.

- (i) նյութերի տվյալ պահի շուկայական արժեքը,
- (ii) նյութերի տեղափոխման տվյալ պահի արժեքը,
- (iii) աշխատուժի ներկայիս արժեքները և
- (iv) ազդեցությանը ենթակա շենքերի, կառուցվածքային/գեղագիտական առանձնահատկությունների արժեքը:

Հաշվարկները կատարվել են ամբողջ ՀՀ տարածքի համար հաստատված պաշտոնական չափագրման ցուցիչների և ճշգրտման գործակիցների, ինչպես նաև Շինարարական Աշխատանքների համար նախատեսված պաշտոնական ամբողջական ցուցիչներով (ՇԱԳՊ) սահմանված շինարարական աշխատանքների գնահատման ցուցանիշների համապատասխան:

Շենքերի և շինությունների փոխարինման արժեքները որոշվել են՝

- (i) համապատասխան մասնագիտացված նորմատիվային տեղեկագրերում (ՇԱԽՑ) ներկայացված կամ հավաստի այլ աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա,
- (ii) շուկայական պայմաններում նմանատիպ շենքերի և շինությունների կառուցման համար շինարարության պայմանագրերում նշված արժեքի տվյալների հիման վրա:

Անշարժ գույքի գնահատման նպատակով շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերը հաշվարկվում են՝ որպես ուղղակի, անուղղակի ծախսերի և ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթի հանրագումար: Նմանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով.

$$\text{ՆԾ} = \text{ՈԻԾ} + \text{ԱԾ} + \text{ՁԾ}, \text{ որտեղ՝}$$

ՆԾ -ն նամանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերն են

ՈԻԾ - ն ուղղակի ծախսերի հանրագումարն է,

ԱԾ -ն անուղղակի ծախսերի հանրագումարն է,

ՁԾ -ն ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթն է:

Ուղղակի ծախսերը ներառում են շինարարության հետ անմիջականորեն կապված հետևյալ ծախսերը.

- (i) նյութերի, արտադրանքների և ինժեներական ցանցերի ու համակարգերի ձեռք բերման ծախսերը,
- (ii) շինարարական մեքենաների և մեխանիզմների շահագործման ծախսերը,
- (iii) ժամանակավոր կառուցված շենքերի և շինությունների հետ կապված ծախսերը, անվտանգության գծով միջոցառումների, պահեստատրանսպորտային և տեղական շուկայում որպես նորմատիվ ընդունված այլ ծախսերը,
- (iv) շինարարության ֆինանսավորման հետ կապված ծախսերը և
- (v) կապալառուի վերադիր ծախսերն ու շահույթը:

Անուղղակի ծախսերի չափը որոշվում է տվյալ իրավիճակում շուկայում ձևավորված աշխատանքների և ծառայությունների սակագների հիման վրա: Անուղղակի ծախսերը ներառում են շենքերի, շինությունների կառուցմանն ուղեկցող, սակայն շին-մոնտաժային աշխատանքների արժեքի մեջ չներառվող հետևյալ ծախսերը՝

- (i) նախագծման, նախահաշվի կազմման, տեխնիկական և այլ վերահսկողության ծախսերը,
- (ii) խորհրդատվությունների, իրավաբանական, հաշվապահական և աուդիտորական, ծառայությունների վճարները,
- (i) գովազդի, շուկայի մարքեթինգի և օբյեկտի վաճառքի հետ կապված ծախսերը,
- (iv) ձեռնարկատիրոջ վարչական և այլ ծախսերը:

Ձեռնարկատիրական շահույթի մեծությունը որոշվում է շուկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա: 273-Ն որոշման (ՀՕՏԵ-ի) համաձայն՝ մաշվածության չափով նվազեցումներ չեն իրականացվում: Այն պարագայում, երբ համեմատական մեթոդով

շինությունների քառակուսի մետրի շուկայական գինն ավելի բարձր է եղել, քան դրա փոխարինման արժեքը, կիրառվել է շինությունների գնահատման համեմատական մեթոդը:

Շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով.

$$ՎԾ = ՇՄ \times ՆԾ$$

որտեղ՝

ՎԾ -ն շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերն են,

ՇՄ -ն գնահատվող շենքերի և շինությունների մակերեսն է,

ՆԾ -ն նմանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերն են:

Աղյուսակ 2-ում ներկայացված է շինության վերարտադրման/փոխարինման ծախսերի հաշվարկի օրինակը.

Աղյուսակ 2. Բնակելի շենքի փոխարինման ծախսի հաշվարկի օրինակը

Շինության ծածկագիրը/հերթական համարը	001
Անվանումը	բնակելի տուն
Ներքին մակերեսը (քառ.մ)	140.42
<i>Մեփականության վկայական կամ չափագրման արդյունք</i>	
Արտաքին մակերեսը (քառ.մ)	154.40
<i>Մեփականության վկայական կամ չափագրման արդյունք</i>	
Բարձրությունը (մետր)	3.00
<i>Մեփականության վկայական կամ չափագրման արդյունք</i>	
Ծավալը (խոր.մ)	463.20
<i>բացարձակ մեծություն (արտաքին մակերես x բարձրություն)</i>	
Ըստ ՇԱԽՑ-ի 1 քառ. մ վերարտադրման կամ փոխարինման ծախսերը, (ՇԱԽՑ 2009, I հատոր, I Բաժին, տող 27)	205,120
Տարադրամի փոխարժեքի գործակիցը	1.494
<i>ՇԱԽՑ 2009, ընդհանուր դրույթներ 5-րդ կետ (Ը/305)</i>	
Գույքի ավարտվածության աստիճանի ուղղիչ գործակիցը	1.00
<i>ՇԱԽՑ 2009, ընդհանուր դրույթներ 7-րդ կետ</i>	
Գործակիցն ըստ հարդարման նյութերի որակի	1.00
<i>գնահատողի վերլուծական փորձի հիման վրա</i>	
Ուղղակի վերարտադրման կամ փոխարինման ծախսերը	43,031,608
<i>բացարձակ մեծություն (ներքին մակերես x ՇԱԽՑ x տարադրամի գործակից x գույքի</i>	

<i>ավարտվածության գործակից x հարդարման նյութերի գործակից)</i>	
Վերադիր ծախսերը	13.3%
<i>Քաղաքաշինության Նախարարության 16.06.2008թ. N41-Ն հրաման</i>	
Ձեռնարկատիրական շահույթը	10%
<i>Շուկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա</i>	
ԱԱՀ	20%
<i>ՇԱԽՅ 2009, ընդհանուր դրույթներ 3-րդ կետ, 16,06,2008թ. թիվ 41-Ն հրամանի 12-րդ բաժին, ՀՀ օրենքը ավելացված արժեքի հարկի մասին</i>	
Վերարտադրման կամ փոխարինման ծախսերը	64,356,352
<i>բացարձակ մեծություն (ուղղակի վերարտադրման կամ փոխարինման ծախսեր x վերադիր ծախսեր x ձեռնարկատիրական շահույթ x ԱԱՀ)</i>	
Վերարտադրման կամ փոխարինման ծախսերը 15% հավելումով	74,009,804

ՄՇԱԿԱՐՈՒՑՄԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Մշակաբույսերի փոխհատուցման արժեքի որոշման համար հիմք են հանդիսանում յուրաքանչյուր համայնքի համար միջին բերքատվության մասին գյուղատնտեսության նախարարությունից, մարզպետարանից ստացված տվյալները և այդ մշակաբույսերի միջին շուկայական արժեքի վերաբերյալ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (www.armstat.am) տվյալները: Մշակաբույսերից ստացված եկամուտի գնահատման համար կիրառվել է հետևյալ բանաձևը

$$V_{crop} = \sum_{i=1}^m S_i * A_i * V_{1kg}$$

Որտեղ:

V_{crop} - մշակաբույսերից ստացված եկամուտն է

S_i - i-րդ ցանքատարածության մակերեսն է

A_i - i-րդ մշակաբույսի բերքատվությունն է (կգ/մ²)

V_{1kg} - i-րդ մշակաբույսի 1կգ արժեքն է

Մշակաբույսերի արժեքի հաշվարկի նմուշը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3 Մշակաբույսերի արժեքի հաշվարկի նմուշ

Անվանում	Հողի ազդեցության ենթակա հատվածի վրա աճող մշակաբույսի մակերեսը /քմ/	Հողի ընդհանուր մակերեսի վրա աճող մշակաբույսի մակերեսը /քմ/	Բերքատվությունը (կգ/մ ²)	Բերքի շուկայական գինը (դրամ/կգ)	Եկամտի կորուստ ազդեցության ենթարկված հողամասից (ՀՀ դրամ)	Եկամտի կորուստ ընդհանուր հողամասից (ՀՀ դրամ)
ցորեն	1273.06	1,273.06	0.28	159.5	56,855	56,855

ԲԵՐՔԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ՓՆԱՀԱՏՈՒՄ

Բերքատու ծառերը գնահատվում են ըստ Ծառատեսակի և 3 տարիքային խմբի՝

1. Նորատունկ
2. Դեռ ոչ բերքատու (միջին)
3. Բերքատու

Նորատունկ ծառերի արժեքը հաշվարկվում է շուկայում վաճառահանված նմանատիպ տնկիների գների վերլուծության հիման վրա:

Դեռ ոչ բերքատու ծառերի արժեքը հաշվարկվում է՝ հիմնվելով վերականգնողական արժեքի վրա, որը հանդիսանում է տնկիի արժեքը՝ գումարած ներդրումները (ջուր և պարարտանյութեր) այն տարիների համար, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ծառը հասնի բերքատվության տարիքին:

Բերքատու ծառերի գնահատումը կատարվում է հետևյալ բանաձևով.

Գնահատվել են հիմնվելով ծառից կորցված եկամուտից՝ հետևյալ բանաձևի համաձայն՝

$$V_{fruit} = \sum_{i=1}^m Q_i * A_i * T_i * V_{1kg}$$

Որտեղ՝

V_{fruit} – պտղատու ծառերի արժեքն է

Q_i –i-րդ տեսակի պտղատու ծառերի քանակն է

A_i – i-րդ տեսակի պտղատու ծառերի արտադրողականությունն է (կգ/ծառ)

T_i – i-րդ տեսակի ծառերի համար պտղատու դառնալու համար անհրաժեշտ տարիների քանակն է (տարիների քանակ)

V_{1kg} - 1 կգ արժեքն է i-րդ տեսակի համար

Բերքատվությունը հաշվարկվում է մարզպետարանների կողմից տրամադրված 2013թ. բերքատվության հիման վրա:

Միավորի արժեքը հաշվարկվում է www.armstat.am (Ազգային վիճակագրական ծառայության) ինտերնետային կայքից:

Բերքատու ծառերից կորստի հաշվարկի նմուշը ներկայացված է Աղյուսակ 4 -ում:

Աղյուսակ 4 Բերքատու ծառերից կորստի հաշվարկի նմուշ

Բերքատու ծառեր																
Խ/հ	Տեսակ	Օտարվող հողամասում տնկիներ /հաստ/	Ընդհանուր հողամասում տնկիներ /հաստ/	Միավորի արժեք /ՀՀ դրամ/	Օտարվող հողամասում ոչ հասուն բերքատու /հաստ/	Ընդհանուր հողամասում ոչ հասուն բերքատու /հաստ/	Բերքատվություն /կգ/	1 կգ արժեք /ՀՀ դրամ/	Ծառի միջին տարիքը	Օտարվող հողամասում հասուն բերքատու /հաստ/	Ընդհանուր հողամասում հասուն բերքատու /հաստ/	Բերքատվություն /կգ/	1 կգ ար-ժեք /ՀՀ դրամ/	Ծառի միջին տարիքը	Օտարվող մակերեսից արժեքը (ՀՀ դրամ)	Ընդհանուր մակերեսից արժեքը (ՀՀ դրամ)
1	Խնձոր			0				0			2	60	250	5	0	150,00 0
2	Բալ			0		11	30	200	3						0	198,00 0
3	Ընդամեն ը														0	348,00 0

A. ՓԱՅՏԱՆՅՈՒԹ ՏՎՈՂ ԾԱՌԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Փայտանյութ տվող ծառերի գնահատման ժամանակ օգտագործվում են հետևյալ տվյալները՝

1. Ծառատեսակ
2. Ծառի պարագիծը սմ-ով՝ չափված գետնից 1.3մ բարձրությամբ՝ կեղևի հետ միասին
3. Վերանշակման ենթակա բնի երկարությունը (բարձրությունը) մետրով

Փայտանյութ տվող ծառերի համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$O_{\Phi U} = O_{\Sigma U} \times O_{\Sigma \sigma} + O_{\Phi U} \times O_{\Phi \sigma} - O$$

Որտեղ՝

$O_{\Phi U}$ – ն՝ փայտանյութ տվող ծառերի շուկայական արժեքը,

$O_{\Sigma U}$ – ն՝ 1իս շինափայտի շուկայական արժեքը,

$O_{\Sigma \sigma}$ – ն՝ շինափայտի ծավալը,

$O_{\Phi U}$ – ն՝ 1 իս վառելափայտի շուկայական արժեքը,

$O_{\Phi \sigma}$ – ն՝ վառելափայտի ծավալը,

Ծ – ն՝ մինչև վաճառատեղ հասցնելը կատարված համախառն ծախսերը:

Թափոնները հատման մնացորդների և կեղևի ծավալի գումարն են և կազմում են ծառի բնի և կեղևի ընդհանուր ծավալի 10%-ը:

Փայտանյութ տվող ծառերի հաշվարկի նմուշը ներկայացված է Աղյուսակ 5 -ում:

Աղյուսակ 5 Փայտանյութ տվող ծառերի հաշվարկի նմուշ

Փայտանյութ տվող ծառերի հաշվարկ (C <41սմ և վերամշակման ենթակա բնի բարձր. <1.0մետրից և այն փայտանյութերը, որոնք պիտանի չեն որպես շինափայտ)														
Անվանում	Հատ		D-տրամագիծ մ-ով	D-տրամագիծ ս-ով	Մ-ծախիլը	Մեծիկի ծավալը	Մաղախի ծավալը	Գնահատման ենթակա ծավալը		Գումար (ՀՀ դրամ)	Համախառն ծախսեր (ՀՀ դրամ)		Ընդամենը (ՀՀ դրամ)	
	Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում						Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում		Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում	Ընդհանուր հողամասում	Ազդեցության ենթակա հողամասում
Ուռենի	4	4	0.54	10	2.29	0.23	0.34	9.61	9.61	22100	7691	7691	204779	204779

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԾԱՌԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դեկորատիվ ծառերի արժեքը հաշվարկվում է շուկայում վաճառահանված նմանատիպ ծառերի գների վերլուծության հիման վրա:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Տրանսպորտային ծախսերի հաշվարկը կատարվելու է շուկայի ուսումնասիրություններից ստացված արդյունքների հիման վրա:

Հատուկ սարքավորումների տեղափոխման համար կկատարվի տեղափոխման ծախսերի անհատական հաշվարկ:

1 ուղերթը (1.5-2 տոննա բեռի տեղափոխման կարողությամբ բեռնատար մեքենայով) նախատեսված է մինչև 50 քառ.մ մակերեսով տարածքում առկա տնտեսական և կենցաղային գույքերի տեղափոխման համար, որը ներառում է բանվորի աշխատավարձը:

ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ (ԱՌԱՆՅ ՇԵՆՔ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՇԱԿԱԲՈՒՑՍԵՐԻ ԵՎ ԾԱՌԵՐԻ) ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հողի վրա առկա բարելավումների (առանց շենք/շինությունների, մշակաբույսերի և ծառերի) հաշվարկը նույնպես իրականացվում է փոխարինման արժեքով: